

2-3(325-326)  
11.02.2013թ.  
Հրատարակվում է  
1999թ. սեպտեմբերից

Հանաչել գիտնականությունն և գիտարար, իմանալ զբանս հանձարով

# ԼՍԵԼ ՊԱՏԱՐԱՐԱՐ

Лусарар

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԹԵՐԹ

Lusarar

## ԼՍԵԼ ՊԱՏԱՐԱՐԱՐ ԿԵՆՂԱՆԻ ԶԱՅՆԸ

1988-ի փետրվարին որդեգրած վերամիավորման գաղափարն անկախության գաղափարով փոխարինելը աշխարհաքաղաքական նոր զարգացումների օրինակաբար արդյունքն էր: Այս առումով Արցախի բնակչության՝ անկախության համարաքվեին հետագայում կողմ քվեարկելը չի կարելի համարել նահանջ 88-ի գաղափարաբանությունից:

Շուրջ քսանհինգ տարի առաջ Լեռնային Ղարաբաղի մարզային խորհուրդը որոշում ընդունեց ինքնավար մարզը Ադրբեջանական ԽՍՀ կազմից հանելու և Հայկական ԽՍՀ կազմի մեջ մտցնելու մասին: Քաղաքական այս ակտն ուշագրավ էր ոչ այնքան խորհրդային ինտերնացիոնալիզմի կարծրատիպերը փշրելու տեսանկյունից: Ի վերջո, Արցախը Հայաստանին վերամիավորելու պահանջը ԽՍՀՄ կենտրոնական իշխանություններին ներկայացվել էր նաև տասնամյակներ առաջ: Բայց ինչպես գիտենք, վերամիավորման փորձի հեղինակները խտորեն պատժվել են. նրանք կամ բանտ են նետվել, կամ էլ արտաքսվել Ղարաբաղից: Միևսույն ժամանակահատվածում վերակառուցման քաղաքական ուղեգիծը կարծես թե հնարավորություն տվեց խորհրդային կայսրությունում բարձրաձայնել ազգային խնդիրների մասին, և Արցախն էլ օգտվեց պատեհ առիթից: Վերակառուցումը, ցավոք, ազգային խնդիրների լուծման հարթակ չդարձավ, այլ պարզապես բացահայտեց պատմության լուսանցք նետված ազգամիջյան հակասությունները...

Այդով հանդերձ, 88-ից հետո ի՞նչ էական տարր է գերակա մնացել համաժողովրդական ոգորումներում: Քառորդ դար առաջ Վերածննդի հրապարակում փոթորկված ժողովրդի անկասելի ուժը միասնությունն էր, որից անգամ



1988թ. փետրվարի 13. Ստեփանակերտ, առաջին հզոր հանրահավաքը  
Տպագրվում է առաջին անգամ

Կրենլը զգուշացավ: Միասնականությամբ տոգորված արցախահայությունը համայն հայության օժանդակությամբ դիմագրավեց տասնյակ անգամ լավ զինված հակառակորդին ու

հաղթեց իրեն պարտադրված պատերազմում: Եվ այսօր, նոր ազգանպաստ որդեգրումների պարագայում դարձյալ միասնությունն է մնում շարժիչ ուժը: Այսինքն՝ փոխվում են ժամանակ-

ները, փոխվում՝ ռազմավարությունները, սակայն միակամության պարտադիր ներկայությունն իբրև ամենակարևոր գործոն՝ մնում է անփոփոխ:

Քառորդ դար է անցել, կանցնի դար ու հազարամյակ, և դժվար է կանխատեսել, թե հետագա աշխարհաքաղաքական զարգացումներն ինչ լավ-վատ հեռանկարներ կբացեն մեր առաջ: Կկարողանա՞նք, արդյոք, պահպանել միասնականության գաղափարը. ահա գերխնդիրը, որից արտածվելու են մեր հետագա հաղթանակները:

Քսանհինգ տարի առաջ Վերածննդի հրապարակում ծառայած ժողովուրդը սիրով կիսում էր հացի վերջին պատառը, և ինչպես Հրանտ Մաթևոսյան է ճիշտ նկատել՝ «իրար վերքեր էինք լիզում»: Երկուսուկես տասնամյակ անց ազատության իդեալի ու ստրկության շղթաների միջև սահմանը դարձյալ մնում է հավանարտ կողմերի միջև առկա շփման գիծը: Սահմանի երկու կողմից իրար նայողը դարձյալ ոչ թե դարավոր հարևանի անխռով հայացքն է, այլ մահաբեր ինքնաձիգի սառը փողը: Եվ եթե միակամ չլինե՞նք նաև հետայսու, ապա երեկվա, ինչու չէ՞՝ նաև այսօրվա մասին ստիպված կլինենք խոսել կորստի շեշտարումներով:

Փայփայենք փետրվարի խորհուրդը գալիք սերունդների համար: Իսկ փետրվարի դասերը լավ յուրացնելու համար արժե՞ կրկին լսել Շարժման առաջամարտիկներին:

Ինչպե՞ս սկսվեց Արցախյան շարժումը... Հրեյանին ընդառաջ, «Լուսարարն» իր էջերը սիրով տրամադրել է Գոյապայքարի մի խումբ ակտիվիստների՝ լսելու պատմության կենդանի ձայնը:

«ԼՍԱՐԱՐ»

## ԲԱՎԱՐԱՐ ԱՇԽԱՏԱՆՔ Ե ԿԱՏԱՐՎԵԼ, ԲԱՅՑ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ ՇԱՏ ԱՎԵԼԻՆ ԵՆ

Հունվարի 25-ին տեղի ունեցավ Արցախի պետական համալսարանի խորհրդի նիստը, որին հրավիրված էին համալսարանի գիտական խորհրդի անդամները, պրոֆեսորադասախոսական կազմը և ուսանողությունը: Այն վարում էր ԱրՊՀ խորհրդի նախագահ, ԼՂՀ վարչապետ Արա Հարությունյանը:

Նիստում ի մի բերվեցին 2011-2012 ուսումնական տարու և 2012թ. ֆինանսական տարու և կատարված աշխատանքները, որ ներկայացրեց ԱրՊՀ ղեկավար **Ստեփան Դադայանը**: Քանի որ ԱրՊՀ զարգացման ծրագիրն ընդգրկում է 2009-2013 թվականները, ղեկավարն անդրադարձավ բուհի զարգացման ծրագրային դրույթների կատարմանը: Արցախի մայր բուհում 30 մասնագիտությունների գծով սովորում է 2398 ուսանող (բակալավորիատի ծրագրով), որից 1616-ը՝ առկա, իսկ 1322-ը՝ հեռակա ուսուցմամբ: Մագիստրոսական ծրագրով ուսանում է 527 հոգի, որից 428-ը՝ առկա, 99-ը՝ հեռակա բաժնիներում: Պետպատվերի համակարգում ընդգրկված է 203 մագիստրոսներ: Համալսարանում սովորում է 62 ասպիրանտ:

Բուհի զարգացման ծրագրի ընդունման ժամանակ ուսանողների թիվը հասնում էր 4610-ի: Նրանց քանակի նվազումը կապված է առաջին հերթին ազդարային ֆակուլտետի տարանջատման (դրա հիմքի վրա ստեղծվեց ՀՀ ազդարային համալսարանի Ստեփանակերտի մասնաճյուղը), ապա՝ 2011թ. առկա բաժնում ընդունելություն չկատարելու, ինչպես նաև համալսարանի առջև դրված առաջնահերթ՝ որակի խնդրի լուծման հետ, որով պայմանավորված՝ զգալի թվով ուսանողներ հեռացվել են բուհից:

Համալսարանում հիմնական հաստիքով աշխատում է 232 դասախոս, և 130-ը՝ ժամավճարային հիմունքներով:

Ուսումնական գործընթացը պատշաճ մակարդակով կազմակերպելու համար բուհն ունի բոլոր պայմանները. գործող 5 մասնաշենքերում առկա են անհրաժեշտ ստորաբաժանումներն ու կառույցները՝ մարզադահլիճներ, գրադարաններ՝ ընթերցասրահներով, մասնագիտական կաբինետներ, լաբորատորիաներ և այլն: Եթե 2008թ. համալսարանն ուներ 1 շարժական պրոյեկտոր, 256 կիլոբայթ հզորությամբ համացանց, կապա այսօր 16 մասնագիտական կաբինետներում տեղադրված են մշտական գործող պրոյեկտորներ, իսկ համակարգիչների թիվը հասնում է ավելի քան 200-ի: Համացանցի հզորությունը հասնում է 6000 մեգաբայթի, ինչը հնարավորություն է տալիս կազմակերպվող միջոցառումները ներկայացնել միջազգային հանրությանը: Այս ամենի նպատակը մեկն է՝ պատրաստել ու դաստիարակել ժամանակի պահանջներին համապատասխան գիտելիքներով և ունակություններով երիտասարդ, հայրենասեր մասնագետներ:

Անդրադառնալով ուսումնական գործընթացին՝ Ս. Դադայանը նշեց, որ այն իրականացվում է միջազգային չափորոշիչներին համապատասխան: Առկա բաժնի 1616 ուսանողներից հաշվետու տարում գերազանց առաջադիմություն է ցուցաբերել 89-ը, «լավ» և «գերազանց» գնահատականներով սովորում է

178-ը: Ռեկտորի կարծիքով՝ նման առաջադիմությունը վատ ցուցանիշ չէ: Հեռակա բաժնում, սակայն, ուսման որակը դեռևս մնում է ցածր: 1322 ուսանողից «գերազանց» գնահատականներով սովորողներն ընդամենը 19-ն են, իսկ «լավ» և «գերազանց»՝ 65: Երկու կիսամյակների արդյունքներով համալսարանից հեռացվել է 154 թերացող ուսանող, որից 37-ը՝ առկա, 117-ը՝ հեռակա բաժնիներից:

Մայր բուհի ղեկավարն անդրադարձավ հաստատության գլխավոր խնդրին՝ ուսման որակի բարձրացմանն ու այդ ուղղությամբ տարվող նպատակամետ աշխատանքներին. դասախոսական կազմի (մինչև 60 տարեկան) վերապատրաստում, ուսումնական կաբինետների, լաբորատորիաների և կենտրոնների ժամանակակից տեխնիկայով շարունակական հագեցում, տարբեր տեղերից դասախոսների հրավիրում՝ մոդուլային տարբերակով դասընթացներ վարելու համար: Լուրջ աշխատանք է տարվում ուսանողների գիտելիքների ստուգման ուղղությամբ: Համալսարանում սկսել է գործել գիտելիքների ստուգման կենտրոնը՝ 37 համակարգիչներով:

Համալսարանի ղեկավարությունը անելիքներ ունի ավարտական (նախկինում՝ պետական) քննությունների կազմակերպման և անցկացման գործում: Ավարտական քննությունը՝ որպես այդպիսին, ըստ Ս. Դադայանի, կորցրել է արդիականությունը: Լուրջ ուշադրություն է պահանջում մագիստրոսական թեզերի պաշտպանությունը: Ռեկտորի կարծիքով՝ այստեղ կարելի է կիրառել թեկնածուական թեզերի պաշտ-

պանության մեթոդը, այսինքն՝ գնահատական չտալ, այլ հանձնաժողովի անդամների քվեարկությամբ որոշել մագիստրոսի աստիճանի շնորհման հարցը:

Արցախի մայր բուհում զգալի աշխատանք է տարվել ուսանողների սոցիալական վիճակի բարելավման ուղղությամբ: Ավարտվել է ուսանողական հանրակացարանի 44 սենյակների վերանորոգումը, և ուսանողների համար ստեղծվել են կենցաղային բոլոր հարմարավետ պայմանները: Ներկայումս հանրակացարանում ապրում է 112 ուսանող:

Հաշվետու տարում չի դադարել պայքարն արատավոր, կոռուպցիոն երևույթների դեմ, դրանց տուրք տվողները հեռացվել են համալսարանից:

Ձեկուցողն անդրադարձավ պրոֆեսորադասախոսական կազմի սոցիալական վիճակին: 2012-ին դարձյալ որոշ չափով աճել են աշխատավարձերը՝ գիտության դոկտոր-պրոֆեսորի աշխատավարձը կազմում է 231,1 հազար, իսկ թեկնածու-դոցենտինը՝ 169,6 հազար դրամ: Գումարած՝ ժամավարձային տարբերակով ստացածը:

Նիստի մասնակիցները լսեցին ԱրՊՀ գլխավոր հաշվապահ Գոհար Սարգսյանի հաշվետուները 2012թ. ֆինանսական տարվա գործունեության և 2013թ. նախատեսվող եկամուտների ու ծախսերի նախահաշվի մասին: Ընթացիկ տարվա մարտի 1-ից 10 տոկոսի չափով աշխատավարձերի բարձրացում է նախատեսվում:

Նիստում ելույթով հանդես եկավ ԼՂՀ կրթության և գիտության նա-

խարար **Սլավա Ասրյանը**: Նա փաստեց, որ համալսարանի կողմից, իրոք, բավականին աշխատանքներ են տարվել ընդհանուր ուսումնականության, ուսումնագիտական գործունեության ապահովման ուղղությամբ: Նախարարը կանգ առավ, սակայն, այն խնդիրների վրա, որոնց լուծմանը պետք է ձեռնամուխ լինեն համատեղ ուժերով: Առաջին՝ իրականացվում են կրթական բարեփոխումներ, այդ թվում՝ բարձրագույն կրթության ոլորտում: Այս ուղղությամբ պետական և ոչ պետական բուհերը, Հայաստանի բուհական համակարգին համաբայլ, իրականացնում են միջոցառումներ Բոլոնյան հռչակագրի պահանջներին համապատասխան: Նախ և առաջ, ապահովվում է Առաջին հերթին օրենսդրական դաշտը: 2012թ. մի քանի նման որոշումներով նախարարության կողմից հաստատվել են կարգեր, որոնք կանոնակարգում են ուսումնական գործընթացները՝ ժամանակի պահանջներին համահունչ: Բարեփոխումների նպատակն, ընդհանրապես, կրթության որակի բարձրացումն է: Նախարարի գնահատմամբ՝ համալսարանն այս ուղղությամբ զգալի աշխատանքներ ունի կատարելու: Այդ մասին են խոսում հենց զեկուցման մեջ բերված փաստերը: Գերազանց սովորողների թիվը 5% է, լավ՝ 10%, այսինքն, կրթության որակը 15% է: Նախարարը դա բավականին ցածր համարեց: Ինչո՞ւ: Որովհետև համալսարանը մասնագետներ է պատրաստում, և երբ որակյալ մասնագետների խնդիր է դրվում, նշանակում է առայժմ ցուցանիշը դեռ ցածր է:

ԱՄՓՈՓՈՒՄ

ԲԱՎԱՐԱՐ ԱՇԽԱՏԱՆՔ Ե ԿԱՏԱՐԿԵԼ, ԲԱՅՑ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ ՇԱՏ ԱՎԵԼԻՆ ԵՆ

1 Նրա դիտարկմամբ՝ բարձրացումը լուրջ խնդիրների ու նախադրյալների հետ է կապված: Ուշադրություն պետք է դարձնել նախ և առաջ, դասախոսական կազմին: Վերլուծությունը ցույց է տալիս, որ համալսարանի 332 դասախոսներից 130-ը ժամավարձային աշխատողներ են, որը մեծ թիվ է: Ժամավարձավոր դասավանդողները հիմնական աշխատողներ չեն, և նրանց պատճառով լինում են նաև պարավունքներին չհամախառնվող դեպքեր, յուրաքանչյուր մասնագիտության գծով բուհը պետք է ունենա 3 կոչումով դասախոս: Հայրենի առնչվելով, որ համալսարանն ունի 30 մասնագիտություն, պարզ է թե՛ բուհը գիտական կոչումով նվազագույնը ինչքան դասախոս պետք է ունենա: Այստեղ համալսարանը մեծ խնդիրներ ունի կատարելու, ընդգծեց նախարարը:

Կրթության որակ ապահովելու համար պարզ է, որ պետք է ներդրել ժամանակակից ուսուցման մեթոդներ, և զոհաբերել ինչ-որ, որ համալսարանը վերջին տարիների ընթացքում 18 կաթինետ է կահավորել, որտեղ ուսուցման տեխնիկական միջոցների հազվագյուտությանը համակարգչային բազան կա, բայց երանգ դեռևս թիչ է, որովհետև մինչև յուրաքանչյուր դասախոս չունենա իր անհատական համակարգիչը՝ ուսուցանող բոլոր ծրագրերով, գործնական առաջադրանքներով և այլն, պահանջները դեռ լիարժեք կատարված համարել չի կարելի: Նախարարության կողմից այս ուղղությամբ աշխատանքներ են տարվում: 2012թ. արտասահմանյան մի շարք կազմակերպությունների հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել ուսանողների պատրաստման, ինչպես նաև նոր մասնագիտությունների ընդգրկման հարցում (2013թ. մասնագիտությունների ցանկում դա կա), ինչը հնարավորություն կտա ապահովել և մասնագիտական կազմը, և որակյալ կրթությունը: Անշուշտ, այստեղ նաև դասախոսական կազմի պահանջներն են առաջադրվելու ուսանողներին: Վերջիններս էլ պետք է պատրաստ լինեն ընկալելու այդ ամենը: Եվ քանի որ կրթական բարեփոխումները սկսվել են դպրոցից, այս խնդիրներն էլ պետք է լուծել աստիճանաբար՝ դպրոցից մինչև բուհ, որպեսզի փոխադարձ մեղադրանքներն այլևս չհնչեն:

Նախարարը լուրջ թերություններ արձանագրեց հեռակա ուսուցման գործընթացում: Վերջերս նախարարության կողմից կատարվել են ստուգումներ, և պարզվել է, որ միջին հաշվով 70% համախառնություն չի ապահովվում: Եվ կան ֆակուլտետներ, որոնցում 30-40% է: «Առանց այն էլ հեռակա սովորողները տարվա մեջ 1-1,5 ամիս են հաճախում, և երբ այդ էլ չեն անում, ստացվում է օրինավոր ձևով դիպլոմների կամառք»,- մասն կոչող գեներալ-մայոր Գևորգյանը: Այս ուղղությամբ համալսարանի ղեկավարությունը պետք է լուրջ միջոցներ ձեռնարկի: Հնարավոր է, որ պատճառով էլ ներգրավված է այնպիսի աշխատանքներում, երբ տվյալ հիմնարկի ղեկավարը թույլ չի տալիս դասի գնալ: Պետք է իմանալ,

սակայն, որ օրենքով այդ հարցը կանոնակարգված է: Գործատուն պարտավոր է հեռակա սովորողին տրամադրել ուսումնական արձակուրդ: Այս տեսակետից նաև մագիստրատուրայի հեռակա ուսուցման գործընթացում կան խնդիրներ: Հաճախելիության առումով այստեղ նույն պես կան թերություններ, դարձյալ նույն մակարդակն է: Բայց եթե հեռակա ինչ-որ տեղ էլ կարելի է արդարացնել, ապա մագիստրատուրայի պարագայում արևուրդ է. եթե մագիստրանտը գիտելիք չի ստանում, ինչպես՝ կարող է կրթական որակավորում ստանալ: Հարկ է ուժեղացնել վերահսկողությունը այս ոլորտների նկատմամբ, պահանջ դրեց նախարարը:

Հայաստանի կրթական համակարգի, ինչպես նաև միջազգային տարբեր կազմակերպությունների հետ համագործակցության առումով այս հարցը որոշակի բարձրության վրա է: Եվ այսօր ԱրՊՀ բազմաթիվ շրջանավարտներ ցանկություն են հայտնում սովորել Հայաստանի պետական բուհերում կամ մագիստրատուրայում, ինչպես նաև արտերկրի բուհերում:

Ի հարկե, կրթության որակի ապահովման հիմքում ընկած է նյութատեխնիկական ապահովվածությունը, որը նույնպես մեծ խնդիր է: Համալսարանի տարեկան ծախսերի վերլուծությունը ցույց է տալիս, որ բուհի զարգացման ուղղությամբ հատկացվող միջոցները չնչին են: Սա օբյեկտիվ պատճառ է, բայց դասախոսների բաշտակարճ պետք է գնալով աշխատանք, որպեսզի լիարժեք, նվիրված աշխատեն և մտածեն իրենց մտավոր կարողությունների զարգացման մասին:

Նախարարը առաջարկեց համալսարանում մեկ տարվա կատարված աշխատանքը համարել բավարար:

Ձեկուցման շուրջ ելույթներով հանդես եկան նաև համալսարանի դասախոսները:

Իրավունքի և փլիխոփայության ամբիոնի վարիչ **Շահեն Արհամյանի** կարծիքով՝ մեծ ուշադրություն պետք է դարձնել ուսանողների՝ որպես իր երկրի արժանավոր քաղաքացիների, դաստիարակչական աշխատանքին:

Կարգերի պատրաստման և տեղաբաշխման ռազմավարական ծրագրում մեծ տեղ պետք է ունենա Արցախի պետական համալսարանը: Այսինքն՝ պետպատվերով սովորողները զոհե կիսով չափ պետության կողմից ապահովվեն աշխատանքով:

Նա առաջարկեց վերանայել 65 տարեկանը լրանալուց հետո պաշտոնում թողնելու հարցի վերաբերյալ որոշումը. կրթական համակարգում պետք է լինեն բացառություններ:

Հայ բանասիրության և լրագրության ֆակուլտետի ղեկավար **Քոչին Սուսայեյանը**, անդրադառնալով համալսարանում կատարված աշխատանքներին, նշեց, որ դրանում իր մասն ունի հայ բանասիրության և լրագրության ամբիոնը: ԱրՊՀ զարգացման գործում կարևոր է արտաքին կապերի ամրապնդումը: Անցած տարեվերջին ռեկտոր Ս. Դադայանը և ղեկան Յ. Սուսայեյանը մասնակցել են Մոսկվայի ժողովուրդների բարեկամության համալսարանում կազմակերպված գիտաժողովին, որտեղ ստորագրվել են համագործակցության պայմանագրեր: Այց է եղել նաև Սարատովի Էբերհիշակու ամվան համալսարան, որի հետ նույնպես համագործակցության պայմանագիր է ստորագրվել: Այդ ընթացքում հանդիպում են ունեցել երկու համալսարանների բանասիրության ֆակուլտետների ղեկավարների հետ՝ պայմանավորվածություն ձեռք բերելու հետագա համագործակցության համար: Մա-

յիսյան եռատոնին նվիրված՝ համալսարանում կազմակերպվել են հանրապետական և միջբուհական գիտաժողովներ, որոնց մասնակցել են նաև գիտնականներ ՀՀ տարբեր բուհերից:

Գեղեցիկ ավանդույթ է ձևավորվել ֆակուլտետում: Շրջանավարտներն իրենց դիպլոմներն ստանում են առաջին դարաստանը՝ Ամարասի վանական համալիրում: Եվ վերջին ամենաուշագրավ նորությունը. օրերս ԱրՊՀ-ում հիմք է դրվելու անմախքային մի երևույթի. համալսարանում օրեր անց կգործի մասնագիտական խորհուրդը՝ նորագույն շրջանի հայ գրականություն մասնագիտությամբ: Եվ հայտնողներն ու ասպիրանտները կարող են իրենց թեկնածուական թեզը պաշտպանել այստեղ: Դա առաջինն է մեր համալսարանում: Ընդգրկված են գիտնականներ տեղի և ՀՀ համալսարաններից: Հայաստանից արդեն հայտեր կան: Ապրիլին կկայանա առաջին պաշտպանությունը: Եվ շնորհակալություն հայտնեց ԿԳ նախարարությանը՝ այդ և այլ հարցերում անմիջական աջակցության համար:

Իր ելույթում ուսխորհրդի նախագահ **Գոհար Ազրիյանն** ասաց, որ իր ուսումնառության տարիները հանրելել են ԱրՊՀ զարգացման հիմն տարիների հետ, և կարող է վկայել, որ տարեցտարի իր վրա՝ որպես ուսանողի, զգացել է կատարվող աշխատանքների բարերար ազդեցությունը: Ուսանողների գիտելիքների ստուգման, սոցիալական, հանրակացարանային պայմանների բարելավման հարցերը, անցկացված սոցիոլոգիական հարցումները վկայում են, որ ուսանողների առաջադիմությունը բարեփոխումների արդյունքում բարձրացել է: Բովանդակակից և նպատակային են դարձել ուսանողների շփումներն Արցախի և ՀՀ բուհերի երիտասարդական կազմակերպությունների հետ: Աշխուժացել է մշակութաժամանցային և մարզական կյանքը:

Ճարտարագիտական ֆակուլտետի ղեկավար **Գագիկ Բաղդուցը**, բավարար համարելով կատարածը, ուշադրություն հրավիրեց այն քայլերին, որոնք կնպաստեն համալսարանի առավել արդյունավետ գործունեությանը: Դրանով կապահովվի բուհի ղեկը հանրապետության տնտեսական զարգացման գործում: Վերջին երեք տարիներին հաջողվել է մասնագիտությունների ցանկն ապահովել երկրի համար կարևոր այնպիսի մասնագիտությունների գծով, ինչպիսիք են՝ էլեկտրաէներգետիկա, հեռահաղորդակցություն, կառավարման տեղեկատվական համակարգեր, օգտակար հանածոների հետախուզում և մշակում, հիդրավիկ կառույցների շինարարություն: Նախորդ տարվա հաշվետվության ժամանակ նույն այս թեմայի շուրջ խոսելիս նա մասնաճշեղ էր համապատասխան պատրաստվածություն ունեցող դիմորդների պակասը: Այս տարի հաջողվել է ապահովել քանակական և որակական առումով անմախքային ընդունելություն: Առաջին կուրսեցիների 70%-ը ձեռնարկում են մասնագիտությունը՝ համակարգչային անկողնակալ ստուգման պայմաններում: Բայց այստեղ կան նաև չիրացված հնարավորություններ: Խոսքն այն մասին է, որ համալսարանն ի վիճակի է մատուցել իր ծառայությունները ավագ դպրոցներում՝ պատրաստելու որակյալ դիմորդներ: Անհասկանալի պատճառով չլուծված է մնում համալսարանի տեխնիկական առարկաներից հեռակա դպրոցների կազմակերպման գաղափարը, որն իրեն բավականին արդարացրել է ՀՀ-ում: Զիջականացված է մնում նաև օդանավակայանի հիմքի վրա ավիամո-

ղելավորման և պատանի տեխնիկների պատրաստման խմբակների կազմակերպումը, որի ուղղությամբ անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքներն արվել են: Ֆինանսական լուրջ օգնության կարիք կա տաղանդավոր երիտասարդների պատրաստման ծրագրի մեխանիզմը կյանքի կոչելու, որը Դարաբաղում իրեն արդարացրել է 70-80-ական թվականներին: Ժամանակակից տեխնոլոգիաներին իրագրելվելը, առաջնակարգ արտադրություններում աշխատանքային փորձ ունեցող մասնագետների պակասը մասամբ համալրվում է ՀՀ-ից և Ռուսաստանից հրավիրված մասնագետներով: Սակայն այս գործընթացը չի կրում պլանավորված բնույթ: Ֆակուլտետի ղեկավարությանը հաջողվել է սերտ կապ հաստատել ՀՀ հայ-ռուսական (լավոնական) և պոլիտեխնիկ համալսարանների հետ, որոնց առաջնակարգ մասնագետներն օգնում են ինչպես դասախոսությունների կազմակերպման, այնպես էլ մասնագետների վերապատրաստման հարցերում: Այստեղ ավելի տեսանելի է երիտասարդ դասախոս մասնագետների ուսուցումը ՀՀ-ում և ՌԴ-ում: Նախորդ տարվա ղեկտեմբերից ֆակուլտետում աշխատում են չորս երիտասարդ դասախոսներ, որոնք գերազանցությամբ երևանում ավարտել են մագիստրատուրան հեռահաղորդակցություն և լեռնային գործ մասնագիտությունների գծով: Անցյալ տարի հաջողվել է համագործակցություն ստեղծել Կրթության աշակցման ամերիկյան հիմնադրամի հետ: Համաձայն ձեռք բերված պայմանավորվածության՝ ամերիկյան կողմն իր վրա է վերցնում ինչպես ֆակուլտետի տեխնիկական ապահովվածության, այնպես էլ արտերկրից հրավիրված մասնագետների վարձատրման և կառավարման տեղեկատվական համակարգեր մասնագիտության ուսանողների ուսման վճարի 40%-ը: Համալսարանի համակարգչային բազան (շուրջ 2000) կարող է հիմք հանդիսանալ էլեկտրոնային կառավարման համակարգի ստեղծման, ինչն էլ իր հերթին՝ որպես մոդել՝ համալսարանի համար:

Դեկտր մտահոգություն հայտնեց մի հարցի շուրջ. իրենց ջանքերը ուսանողների գործնական պատրաստմանը «Բեյզ Մեթլա», «Արցախեցիներ» ընկերություններում, տարբեր շինարարական հարթակներում անցկացնելու ուղղությամբ, դեռևս արդյունք չեն տալիս: Նա վարչապետի միջամտությունը հայցեց ինչպա ընկերությունների, ինչպես նաև «Դարաբաղ «Տեկելոն»-ի կողմից (որոնք համար համալսարանը մասնագետներ է պատրաստում) ընդլայնել ֆակուլտետի նյութատեխնիկական բազան:

Հունանիտար ֆակուլտետի ղեկավար **Արզիկ Մխիթարյանը** մտահոգություն հայտնեց տարրական մեթոդիկա և մանկավարժություն մասնագիտության ուսանողների՝ դպրոցում փորձուսուցման առնչությամբ: Փոխվել են դպրոցական ծրագրերը, դասագրքերը. իսկ համալսարանի մեթոդիկայի դասավանդումը մնացել է նախկինը՝ դասական: Փորձուսուցման գնացած ուսանողը հանդիպում է այս փաստին՝ ուսուցիչն ասում է մի բան, իսկ դասախոսը սովորեցրել է մեկ այլ բան: Անհրաժեշտություն կա մեթոդիկայի դասախոսներին գործուղել և վերապատրաստել այլ բուհերում, որովհետև նաև հանկուսություն է առաջացել դասավանդման և գնահատման միջև: Դասավանդումն արվում է նախկին՝ դասական մեթոդներով, իսկ գնահատումը, քննությունները ընդունվում են համակարգչով, ինչը որոշակի բարդություն է առաջացնում: Համալսարանի կոլեկտիվը

գտնվում է այս դժվարությունները հաղթահարելու ճանապարհին:

ԱրՊՀ խորհրդի անդամ, հանրապետության ժողովրդական դեբատան **Քաջիկ Դարությունյանը** կարծիք հայտնեց, որ մշակութային կյանքը համալսարանում շատ աշխույժ է՝ նկատի ունենալով ամեն տարի կազմակերպվող «Ուսանողական գարուն» փառատոնը, որտեղ ի հայտ են բերվում դերասանական ծիրքով օժտված ուսանողներ: Կազմակերպվում են ասումնաքի մրցույթներ, համերգներ, որոնք հետաքրքիր են դարձնում ուսանողական առօրյան: Ք. Դարությունյանի կարծիքով վերականգնել նախկին ավանդույթը՝ ստեղծել թատերական խմբակ:

Ֆիզմաթ ֆակուլտետի ղեկավար **Կարեն Արամյանը** գոհունակությամբ նշեց, որ վերջին տարիներին ֆակուլտետում պատրաստում են գիտության թեկնածուներ: Առաջարկեց համալսարանին կից ստեղծել ուսուցիչների վերապատրաստման ֆակուլտետ, որը կապահովի հետադարձ կապը դպրոցների հետ և լավ հիմք կհանդիսանա նորամուծությունների արմատավորման գործում, ինչը կնպաստի երկուստեք զարգացմանը:

Խորհրդի նիստում ելույթ ունեցավ ԼՂՀ վարչապետ Արա Հարությունյանը: Ըստ նրա՝ համալսարանում բավարար մակարդակի աշխատանք է կատարվել, բայց անելիքները շատ ավելին են: Նա ասաց, որ ներկայացված առաջարկություններին մասով անհրաժեշտ հետևություններ կան, և ինչ կախված է իշխանություններից, կընթացավորեն: Բայց թիչ են նաև ներքին խնդիրները, որոնք պետք է լուծել սեփական ուժերով, ինչի համար անհրաժեշտ է հաճախակի քննարկումներ կազմակերպել գիտխորհրդում: Նոր շատ ծրագրեր, փոփոխություններ մասով անհրաժեշտ հետևություններ կան, և ինչ կախված է իշխանություններից, կընթացավորեն: Բայց թիչ են նաև ներքին խնդիրները, որոնք պետք է լուծել սեփական ուժերով, ինչի համար անհրաժեշտ է հաճախակի քննարկումներ կազմակերպել գիտխորհրդում: Նոր շատ ծրագրեր, փոփոխություններ մասով անհրաժեշտ հետևություններ կան, և ինչ կախված է իշխանություններից, կընթացավորեն: Բայց թիչ են նաև ներքին խնդիրները, որոնք պետք է լուծել սեփական ուժերով, ինչի համար անհրաժեշտ է հաճախակի քննարկումներ կազմակերպել գիտխորհրդում: Նոր շատ ծրագրեր, փոփոխություններ մասով անհրաժեշտ հետևություններ կան, և ինչ կախված է իշխանություններից, կընթացավորեն: Բայց թիչ են նաև ներքին խնդիրները, որոնք պետք է լուծել սեփական ուժերով, ինչի համար անհրաժեշտ է հաճախակի քննարկումներ կազմակերպել գիտխորհրդում:

Նոր շատ ծրագրեր, փոփոխություններ մասով անհրաժեշտ հետևություններ կան, և ինչ կախված է իշխանություններից, կընթացավորեն: Բայց թիչ են նաև ներքին խնդիրները, որոնք պետք է լուծել սեփական ուժերով, ինչի համար անհրաժեշտ է հաճախակի քննարկումներ կազմակերպել գիտխորհրդում: Նոր շատ ծրագրեր, փոփոխություններ մասով անհրաժեշտ հետևություններ կան, և ինչ կախված է իշխանություններից, կընթացավորեն: Բայց թիչ են նաև ներքին խնդիրները, որոնք պետք է լուծել սեփական ուժերով, ինչի համար անհրաժեշտ է հաճախակի քննարկումներ կազմակերպել գիտխորհրդում:

Նոր շատ ծրագրեր, փոփոխություններ մասով անհրաժեշտ հետևություններ կան, և ինչ կախված է իշխանություններից, կընթացավորեն: Բայց թիչ են նաև ներքին խնդիրները, որոնք պետք է լուծել սեփական ուժերով, ինչի համար անհրաժեշտ է հաճախակի քննարկումներ կազմակերպել գիտխորհրդում:

Նոր շատ ծրագրեր, փոփոխություններ մասով անհրաժեշտ հետևություններ կան, և ինչ կախված է իշխանություններից, կընթացավորեն: Բայց թիչ են նաև ներքին խնդիրները, որոնք պետք է լուծել սեփական ուժերով, ինչի համար անհրաժեշտ է հաճախակի քննարկումներ կազմակերպել գիտխորհրդում:

Նոր շատ ծրագրեր, փոփոխություններ մասով անհրաժեշտ հետևություններ կան, և ինչ կախված է իշխանություններից, կընթացավորեն: Բայց թիչ են նաև ներքին խնդիրները, որոնք պետք է լուծել սեփական ուժերով, ինչի համար անհրաժեշտ է հաճախակի քննարկումներ կազմակերպել գիտխորհրդում:

ՈԱԶՄԱՆԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ «ԲԱՆԱԿ-ԴՊՐՈՑ» ԹԵՄԱՅՈՎ

ՍԱՆԱՍԱՐԻ ԶՈՐԱՄԱՍՈՒՄ

«Միայն գիտելիքներով ու խելքով կարող եք դիմացիների մեջ սերմանել գիտելիք ու խելք, ազնվությամբ՝ ազնվություն, հայրենասիրությամբ՝ հայրենասիրություն»

Սեյրան ՕՂԱՆՅԱՆ

Հունվարի 26-ին երևանի պետական համալսարանի դահլիճում տեղի ունեցավ գիտագործնական կոնֆերանս՝ «Բանակ-դպրոց կապը» թեմայով:

Հայկական բանակի ստեղծման 21-ամյակին նվիրված գիտաժողովը կայացավ ՀՀ պաշտպանության և կրթության և գիտության նախարարությունների համատեղ ջանքերով:

Միջոցառմանը Արցախից մասնակցեցին ԼՂՀ ԿԳ նախարար Սլավա Ասրյանը, ռազմաօդային ստորաբաժանի պետ Ստեփան Գրիգորյանը, ֆիզդաստիարակության և հասարակական կազմակերպությունների հետ կապերի բաժնի վարիչ Վալերի Գրիգորյանը, զինղեկներ:

Բացման խոսքով հանդես եկավ ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը:

Նրա ելույթի հիմնական գաղափարն այն էր, որ հայրենասիրությունը մարդու մեջ պետք է զարգացնել ծնված օրից՝ ընտանիքում, ապա՝ ուսումնական հաստատություններում ու բանակում: Նա հայրենասիրություն սերմանելու և կարգապահություն ամրապնդելու մասնավոր օրինակներ բերեց, որոնցում կարևորում է ընտանիքի դերը:

Նա վկայակոչեց հասարակ գյուղական ընտանիքների, ովքեր հայրենասիրությունը դարձրել են կենսաձև: Ո՞ր տղան բանակում կարգազանց զինվոր կդառնա, երբ տեսնում է, որ իրենց տանը հայ շախմատիստների հաջողության կամ ֆուտբոլի ազգային հավաքականի հաղթանակի առթիվ սեղան է զգվում, ընտանիքի հայրը լուրջ ու ազդու կենաց է ասում այն մարդկանց համար, ում իրենք անձամբ չեն ճանաչում, բայց իրենց ազգի անունը բարձր են պահել: Ու նաև ծանոթ է ընտանիքների, որոնք թեպետ Արցախյան պատերազմում զոհված հարազատ չունեն, բայց ցանկացած առիթով ընտանյոք հանդերձ ծաղիկներ են տանում Եռաբլուր, բոլոր միջոցառումների սկզբում հոտնկայա բաժակ են բարձրացնում հայրենիքի համար զոհված ազատամարտիկների հիշատակի համար:

Պաշտպանության նախարարը մեջբերեց Ջորջ Բայրոնի «Ով չի սիրում իր երկիրը, ոչինչ սիրելի չի կարող» և Քարեգին Նոթեի «Հայրենիքս՝ ես եմ, ընտանիքս, ազգս, մայրենիս և այն տարածքները, ուր կհասցնեն իմ զենքի փառքը» խոսքերը և կոչ արեց առաջնորդվել դրանցով:

Ելույթ ունեցան ՀՀ ԿԳ նախարար Արմեն Արտյուրյանը, ԼՂՀ ԿԳ նախարար Սլավա Ասրյանը և ուրիշներ:

Քննարկվեցին 2012թ. կատարված և 2013-ին նախատեսված աշխատանքները:

Բանակ-դպրոց-հասարակություն կապն ամրապնդելու նպատակով դպրոցները կցված են զորամասերին, իսկ ՀՀ-ում՝ նաև ոստիկանության և արտակարգ իրավիճակների բաժանումներին:

Խոսվեց դպրոցներում նյութատեխնիկական բազան հարստացնելու հարցի շուրջ, ուսումնական հրաձգությունը կատարելագործելու ժամանակակից մարտակարգի մասին, որի շնորհիվ աշակերտները կսովորեն դիպուկ կրակել: Ցավոք, ԼՂՀ դպրոցներում չկա այդ սարքը, որը ձեռք բերելու համար անհրաժեշտ են բավական միջոցներ: Հունանք, որ այս խնդիրը շուտով կլուծվի Պաշտպանության բանակի միջնորդությամբ:

Միջոցառման նպատակը ռազմաօդային ստորաբաժանի դրվածքի բարձրացումն էր դպրոցում, ընտանիքում, բանակում և հասարակության մեջ:

Գիտաժողովի վերջում կատարվեցին պարզապատկերներ: Ասկերանի շրջանի Սզնեք գյուղի միջնակարգ դպրոցի զինղեկ, ավագ լեյտենանտ Գարիկ Մարգարյանը ՀՀ ՊՆ կողմից արժանացավ «Ծովակալ Իսակով» մեդալի: Քաշաթղի շրջանի միջնակարգ դպրոցի զինղեկ, փոխգնդապետ Ռազմիկ Պողոսյանը և Շահունյանի շրջանի Նոր Մանաշիղի միջնակարգ դպրոցի զինղեկ, ավագ լեյտենանտ Արայիկ Ղազարյանը պարգևատրվեցին ՀՀ ՊՆ պատվոգրով՝ մատաղ սերնդի ռազմաօդային ստորաբաժանի դաստիարակության գործում ակտիվ մասնակցության համար: Մարտակերտի շրջանի Թալիշ գյուղի միջնակարգ դպրոցի զինղեկ, լեյտենանտ Ֆեդյա Ապրեսյանը ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից արժանացավ պատվոգրի՝ մատաղ սերնդի ռազմաօդային ստորաբաժանի դաստիարակության գործում ներդրած ավանդի համար: Ստեփանակերտի հ. 6 հիմնական դպրոցի զինղեկ, ավագ լեյտենանտ Արմեն Մարտիրոսյանը պարգևատրվեց ՀՀ ոստիկանության պատվոգրով: Մատաղ սերնդի ռազմաօդային ստորաբաժանի դաստիարակության գործում ակտիվ մասնակցության հետ սերտորեն գործակցելու համար Ստեփանակերտի հ. 2 դպրոցի տնօրեն Լաուրա Մարտիրոսյանը ՀՀ մշակույթի նախարարության կողմից արժանացել է պատվոգրի՝ փառքի սրահներ ձևավորելու, պետական խորհրդանիշները լավագույնս հանրահռչակելու համար:

Հաճելի է և ուրախվել, երբ դիմացիների մեջ մասնագիտական կարողություններն ու մարդկային արժանիքները համատեղված են լինում:

Ցանկանա՞ք, որ մեր հայրենի երկինքը լինի անխռով, իսկ ռազմաօդային ստորաբաժանի սրբազան գործի նվիրյալներին մաղթե՞ք քաջառողջություն, համառ ու անկորուստ կամք՝ մատաղ սերնդի ռազմաօդային ստորաբաժանի գործը պատվով կատարելու համար:

Ռազմաօդային ստորաբաժանի պատասխանատու գործին կարող է մասնակցել մեզանց յուրաքանչյուրը՝ հայրենասիրական դաստիարակություն տալով իր զավակին, աշակերտին, ուսանողին: Խոսքը ավարտեմ մեծ վիպասան Մուրազյանի տողերով. «Կա մի ուրիշ մարմին, որ ավելի ու ավելի պաշտելի է, քան մեր սեփականը: Այդ մարմինը հայրենիքն է»:

Նախարար ՍԻՄՈՆՅԱՆ

Հունվարի 28-ին Բերձորի արվեստի և սպորտի դպրոցի պարի խմբերը և «Բերձոր» ժողգործիքների համույթը համերգ տվեցին թիվ 1 բանակային կորպուսի՝ Սանասարում տեղակայված զորամասի զինվորների համար: Այս զորամասի վրա է դրված Քաշաթղի շրջանի դպրոցների շեֆությունը, և տարբեր համայնքների դպրոցականներ հաճախ են լինում զորամասում, ծանոթանում զինվորական առօրյա-

կիցներին, պարում: Մինչև երեկ զինվորական հրապարակում տեր էին ուրախ երաժշտությունը, պարը, մանուկների ուրախ քրքիջն ու ժպիտը, զինվորները՝ հպարտ կեցվածքով: Այստեղ էլ եղան երգող զինվորներ: Վարդան Բարսեղյանն արդեն 7 ամիս ծառայում է զորամասում, երևանից է: Երգում է իր հեղինակած «Սիրտը իմ» երգը՝ նվիրված սիրած աղջկան: Երգի հնչյունների տակ պարում են նաև երգչի զինակիցները: Ասում է, որ այսօր ստացել է սերժանտի կոչում, որի համար ուրախ է: Իսկ Հայոց բանակին մաղթում է մարտունակություն, հայոց երկրին՝ խաղաղություն: Քաշաթղի շրջանի զինվորական շեֆ Մարտիրոսյանը շրջանի ղեկավար Դ. Դավթյանը շրջանի ղեկավարության և բնակչության անունից հայ զինվորներին շնորհավորում է Բանակի օրվա առթիվ՝ նշելով, որ երկրապահ ջոկատների միավորումով ստեղծված մեր բանակն անցել է փառավոր ուղի, այսօր էլ շարունակում է իր առաքելությունը: Երջվարչակազմի ղեկավար Սուրեն Սախաթյանի կարգադրությամբ Քաշաթղի կայացման գործում ունեցած ներդրումների համար պատվոգրի են արժանանում իրենց մասնակցած զինվորականները, փոխգնդապետ Արթուր Մինասյանը, զրահատանկային գումարտակի հրամանատար, փոխգնդապետ Արթուր Մինասյանը, զրահատանկային գումարտակի հրամանատար, փոխգնդապետ Կոմիտաս Դավթյանը և ուսումնական կենտրոնի պետ, փոխգնդապետ Արթուր Ջուլիանյանը: Հրամանատարի տեղակալ, փոխգնդապետ Գոռ Մկրտչյանը շնորհակալություն է հայտնում շրջանի ղեկավարությանը, ուրախ տրամադրություն պարզաբանում:



յին, անցկացնում ՆԶՊ առարկայական ծրագրով նախատեսված ուսումնական վարժանքներ: Այդ օրն էլ առավոտյան Սարատակի դպրոցականները ներկա էին տոնական զորահանդեսին: Չորամասում ծառայող սպաների երեխաները՝ մոտ 60 աշակերտ, հաճախում են հարևան Հայկազյան համայնքի Հ. Սախաթյանի անվան միջնակարգ դպրոց: Նրանք և այստեղ բնակվող 11 ուսուցիչները երկու հերթով, զորամասի ավտոբուսներով են հասնում Հայկազյանի դպրոց և վերադառնում: Այստեղ ավելի շատ են զինվորները, ովքեր մի պահ կտրվել էին զինվորական առօրյայից և վայելեցին հայոց երգն ու պարը, իրենք էլ միացան փոքրիկներին, պարեցին, ուրախացան: Պարզ է, բոլորն էլ կարոտել են իրենց հարազատներին, բոլորն էլ փոքրիկ քույր ու եղբայր, զարմիկ ու զարմուհիներ ունեն և նրանց կարոտն այս պարող երեխաներից էին առնում: Իսկ փոքրիկները գիտեն իրենց անելիքը. եկել են տոնելու հայ զինվորի օրը, տոն, որն ամենակարևորն է մեր հայրենիքի համար: Եկել էին ուրախացնելու իրենց եղբայր-պահապաններին: Բանակն է այսօր մեր հոգի պատենշը, բանակն է ապահովում նույն մանուկների կապույտ երկինքը, խաղաղ օրը, անհոգ կյանքը: Եվ հայ զինվորին էր նվիրված յուրաքանչյուր երգ ու պար, ժպիտ ու բարի խոսք: Բացի զինվորներից, այստեղ էին զինվորականների երեխաները: Նրանք էլ էին միանում իրենց հասակա-

լարունակում է իր առաքելությունը: Երջվարչակազմի ղեկավար Սուրեն Սախաթյանի կարգադրությամբ Քաշաթղի կայացման գործում ունեցած ներդրումների համար պատվոգրի են արժանանում իրենց մասնակցած զինվորականները, փոխգնդապետ Արթուր Մինասյանը, զրահատանկային գումարտակի հրամանատար, փոխգնդապետ Կոմիտաս Դավթյանը և ուսումնական կենտրոնի պետ, փոխգնդապետ Արթուր Ջուլիանյանը: Հրամանատարի տեղակալ, փոխգնդապետ Գոռ Մկրտչյանը շնորհակալություն է հայտնում շրջանի ղեկավարությանը, ուրախ տրամադրություն պարզաբանում:

Օրը մոռանա՞ք: Երբ հրաժեշտ տվեցինք զինվորներին և պատրաստվում էինք վերադառնալ Բերձոր, համերգին ներկա զինվորները շարվել էին՝ արդեն զինվորական հրամաններ ստանալով: Նրանցից շատերը պետք է դիրքեր բարձրանան՝ շատերը օրվա տպավորությունները: Վերադառնում ենք հավատով, որ ունենք հզոր բանակ՝ մեր ժողովրդի, պետության կայացման ամենակարևոր ձեռքբերումը: Իսկ այս մի քանի ժամը մեր զինվորներին ավելի ոգևորեց, մանուկների ժպիտը, պարը, երգն ավելի պարտավորեցրին, որ նրանք լինեն զոհ, ուժեղ, արի: Իսկ մենք պետք է սիրենք ու պաշտենք հայ զինվորին, լինենք նրան նեցուկ նաև երգ ու պարով:

Ջոհրաբ ԸՈՒՔՈՅԱՆ

ԱՌՈՂՋ ՀՈԳԻՆ՝ ԱՌՈՂՋ ՄԱՐՄՆՈՒՄ

Արցախը պետք է ունենա առողջ հասարակություն, առանձնապես առողջ երեխաներ, քանզի նրանք հարազատ երկրամասի վարկա կառուցողները, հողը պաշտպանողները և նոր սերունդներ վերարտադրողներն են:

Մատաղ սերնդի առողջությունը տարեցտարի վատանում է, չնայած այն եղել է մնում է ազգային, համամարդկային արժեք:

Ըստ տվյալների, մարդը շատ սխալ է ապրում, հաճախ նա սխալ է մտածում, շնչում, սնվում, քնում և քայլում ու դեռ ուզում է առողջ լինել:

Առողջ ապրելակերպի հիմնախնդիրը դարձել է բնագիտական գիտությունների ուսումնասիրության օբյեկտ: Այժմ մեր դպրոցներում 8-11-րդ դասարանների սովորողներն ուսումնասիրում են «Առողջ ապրելակերպ» դասընթացը, որը նրանց տեսական և գործնական գիտելիքներ է տալիս՝ նորովի ուսումնասիրելու իրենց և ճիշտ ապրելու:

Սովորողների առողջական վիճակը վատանում է դասարանից դասարան: Առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալներով՝ բնակչության 10%-ի առողջությունը կախված է բժշկա-

կան գործունեությունից, 20%-ինը՝ էկոլոգիայից, 20%-ինը՝ գենետիկական նախադրամասերից: Ի՞նչ է դա նշանակում: Ասել է թե՛ մեծ է դպրոցի դերն առողջ ապրելակերպ ունենալու գործում: Մարդու կենսակերպը ներառում է 3 ոլորտ՝ կենսամակարդակ, կյանքի որակ և կենսաժամ:

Կենսամակարդակը սոցիալական կարգ է, որը ներկայացնում է մարդու պահանջները բավարարելու հարմարավետության աստիճանը:

Կյանքի որակը սոցիալ-հոգեբանական կարգ է, որը բնութագրում է մարդու կենսակերպի առօրյա առանձնահատկությունները: Այն մեծ դեր է խաղում առողջ մարդ ձևավորելու գործում: Առողջ ապրելակերպն ուղղակիորեն արտահայտում է կենսակերպի և առողջության անմիջական կապը:

Կենսաժամի հիմքում ընկած են կենսաբանական և հասարակական սկզբունքները:

- Կենսաբանականն են. 1. Կենսակերպն ունի տարիքային բնույթ: 2. Կենսակերպի ապահովման

համար անհրաժեշտ են համապատասխան էներգառեսուրսներ:

3. Կենսակերպը պետք է լինի անբարդ, դիմադրող, հիմնականում հիմնականական սկզբունքները հիմնավորվում են գեղագիտական, բարոյական, արժեքաբանական տեսանկյուններով:

Առողջ լինելու համար անհրաժեշտ է հրաժարվել վնասակար հակումներից (ծխախոտ, թմրամիջոց, ալկոհոլ), ունենալ օպտիմալ շարժողական ռեժիմ, կոփել մարմինը, հետևել անհատական հիգիենային, զերծ մնալ բացասական հույզերից:

Բնական է, որ արցախյան բնությունը գենետիկորեն տրամադրում է ունենալ առողջ սերունդ: Բայց արի ու տես՝ մեր երեխաները դարձել են հիվանդոտ, անուշադիր և ճիշտ չսնվող: Եվ անհապաղ պահանջ է դարձել առողջ ապրելակերպի կուլտուրա ձևավորելու հարցը, այն էլ՝ մանկավարժական միջոցներով: Ուղղակի այստեղ թեմաների վերլուծության ժամանակ անհրաժեշտ է տեղայնացնել նյութերը, մասնավոր, երբ խոսքը գնում է սեռական դաստիարակության մասին:

Առողջ ապրելակերպի կուլտուրայի ձևավորման նախապայմանները

ից է առողջության նկատմամբ արժեքային մոտեցման առկայությունը: Թվում է, բոլորն էլ առողջությունը համարում են մեծ արժեք:

Սակայն մարդկային համակեցության դարավոր փորձը երբեմն ապացուցում է ճիշտ հակառակը: Ֆրեյդի «ստեղծարար» և «ավերման» բնածին մոլուցքներն ավելի շատ ժխտվում են տեսական մակարդակում՝ գործնական կյանքում: Դեռահասները ծխում են վաղ տարիքից (ծածուկ կամ ընկերների շրջապատում, երբեմն էլ հենց փողոցներում), նման ձևով օգտագործում են ոգելից խմիչքներ, թմրամիջոցներ: Վերջինս նորամուծություն է Արցախի կյանքում: Իսկ մեծահասակներն այս ամենի հետ նաև չարախոսում են, անիծում, անընդհատ բողբոջում կյանքից, ուղղակիորեն չարություն անում և հիմք դնում իրենց իսկ, նաև իրենց երեխաների առողջության ոչնչացման:

Մյուս կողմից էլ՝ առողջ ապրելակերպի վրա ազդում են համակարգիչները, հեռուստատեսությամբ ցուցադրվող անհիմաստ, գրեթե անտեսական կամ քրեական կյանքի բոլոր կողմերն արծարծող արտասահմանյան սերիալները, ճչան, մոդայիկ,

թիպ հագուստը, տարբեր մակնիշի հեռախոսները և այլն...

Առանց առողջության հնարավոր չէ հասնել հաջողության: Անհրաժեշտ է որպես նշանաբան ընդունել Շոպենհաուերի ոսկի խոսքերը. «Առողջությունը ամեն ինչ է, բայց ամեն ինչ ոչինչ է, եթե չկա առողջություն»:

Առողջ ապրելակերպի կուլտուրան ձևավորվում է շատ դանդաղ, և միայն համապատասխան մանկավարժական տեխնոլոգիաների ու ընթացակարգերի կիրառումը կարող է հանրակրթական դպրոցը դարձնել առողջ ապրելակերպի և նրա փիլիսոփայության ձևավորման դարբնոց:

**Մարիտա ՇԱՆՆԱՋԱՐՅԱՆ**  
**Իվանյանի միջև. դպրոցի կենսաբանության ուսուցչուհի**

Հ.Գ. Ցավալի է, որ այսպիսի հրատապ թեմաներն աշակերտների մատուցվում են ֆիզկուլտուրայի դասաժամերի հաշվին: Այսպիսի մոտեցումն ուրիշ լուծում է պահանջում: Համաձայն չե՞ք:


ՄԵԹՈԴԱԿԱՆ

ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍ՝ ՆՈՐՈՎԻ ՄՈՏԵՑՄԱՍԲ


ՆՈՐԻ ՄՍԵՂՈՒՄ

Ուսումնադաստիարակական գործընթացի կարևորագույն խնդիրներից է երեխաների տրամաբանական մտածողության զարգացումը: Իսկ տրամաբանությունը մարզում է սովորողի միտքը, այլ կերպ՝ տրամաբանությունը մտքի մարզանք է: Ով սուր միտք ունի, նա նաև մարզված տրամաբանություն ունի: Այն սովորողներին օգնում է հաղթահարել զանազան արգելքներ: Լուծելով դրանք՝ կատակ հարցերն ու տարօրինակ խնդիրները, բառերով խաղերն ու լաբիրինթոսները, խաբուսիկ և հնարամտության խնդիրները, երեխան կարծես ընկնում է մաթեմատիկական խաղերի զարմանահարաշ աշխարհը, ձեռք բերում հնարամտություն, երևակայություն, դժվարին իրավիճակներում արագ կողմնորոշվելու ունակություն: Եվ զանազան արգելքներ հաղթահարելով՝ նրանք ասես մի չսպասված նոր «հայտնագործություն» են կատարում: Այս դեպքում գիտելիքների յուրացման հետ մեկտեղ ձևավորվում է ինքնուրույն գիտելիք ձեռք բերելու խնդիրը: Տրամաբանության դասին աշխատում են ակտիվացնել, խթանել սովորողների ինքնազարգացման ձգտումը և համապատասխան պայմաններ ստեղծել դրա համար: Կարևորում են նաև ուսուցչի անհատական-ստեղծագործական մոտեցումը, որն աշակերտի համար ստեղծում է նպատակահարմար պայմաններ հնարավորություն: Սա նպաստում է ուսուցիչ-աշակերտ, աշակերտ-աշակերտ փոխգործունեությանը, անձի լիարժեք զարգացմանը:


Ըստ Բենջամին Բլումի տարբերակային (համակարգի)՝ ուսուցման գործընթացին հատուկ է հիմնական աստիճան՝ գիտելիք, իմաստավորում, կիրառում, վերլուծություն, համադրում, կշռադատում կամ գնահատում: Ուսուցման ողջ համակարգը Բլումը համեմատում է սար մագլցելու հետ կամ աստիճանների, որոնցով բարձրանում է սովորողն ուսման ընթացքում:



Ուսման առաջին աստիճանը նա համարում է մտապահումը, որը նմանեցնում է գիտելիքների «սարի ստորոտին», իսկ գնահատումը, որոշումների կայացումը՝ «գագաթին» կամ այն վերջնական հարթակին, որին հասնում է սովորողն ուսման ընթացքում: Սակայն եթե գործնական ուսուցման նպատակները համադրենք Բլումի սանդղակի հետ, կտեսնենք, որ մի կարևոր, նոր ստեղծող աստիճան պակասում է: Ավելացնենք և մեկ աստիճան՝ նոր ստեղծումը: Եվ Բլումի սանդղակի լրամշակումը կունենա հետևյալ տեսքը, որն անվանում են ուսուցման նպատակների «Բուրգ»:



Նման մոտեցումն ուսուցման գործընթացը դարձնում է ավելի արդյունավետ, քանի որ այս դեպքում նորի ստեղծումն է դիտարկվում որպես ուսուցման առավել բարձր նպատակ և հակառակը: Համադրենք իրար հետ.



Այսպիսի երկրաչափական պատկերը բնորոշում է մանկավարժական ողջ գործընթացի համաչափությունը, անընդհատությունն ու շարունակականությունը, ինքնուրույնության ձևավորումը:

Կրթության գործընթացում կենտրոնական դեմքը երեխան է, սովորողը, հետևապես, ամեն ինչ պետք է կազմակերպվի այնպես, որպեսզի չչորանա նրա ոչ միայն մտավոր կարողությունները, այլև հետաքրքրությունների ոլորտը: Ըստ որում, ամեն ինչ պետք է արվի այնպես, որ շահադրդման (մոտիվացիայի) գործընթացն ապահովվի լիարժեք ձևով:

Գիտելիքն արժեքներ դարձնելու համար պետք է կարողանալ այն ճիշտ ձևով համադրել, վերլուծել և կիրառել: Ի վերջո, գիտելիքը միայն այն չէ, ինչ գրված է դասագրքում կամ ներկայացնում է ուսուցիչը: Սովորողների գլխում ծագած մտքերը նույնպես արժեքավոր են և գնահատվում են բոլոր կողմերից: Գիտելիքը ծնվում է, երբ նրանք նոր գաղափարները և հասկացությունները համադրելով իմացածի հետ՝ կառուցում են նորը:

Ներկայացնում են գործնական աշխատանքները՝ 3-րդ դասարանում տրամաբանության դասի պլանավորման մի տարբերակի ներառմամբ:

**Դասի թեման** - «Կատակ հարցեր», «Եղբք ուշադիր», «Ով կատասխանի առաջինը», «Հնարամտության խնդիրներ», «Խաբուսիկ խնդիրներ» թեմաների ամփոփում

**Հիմնավորում** - Թեմաներին համապատասխան պետական ծրագրերի և չափորոշիչի սահմաններում գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորում:

- Դասի նպատակները. - 1. կրթական 2. դաստիարակչական 3. գործնական 4. զարգացող

Տրամաբանական մտածողության զարգացում:

Մտքերի ազատ արտահայտում և գրառում («հավաքում»):

Խնդրահարույց իրավիճակների ստեղծում: Ինքնակրթության միջավայրի ստեղծում:

Գաղափարների խրախուսում: Սոցիալական հմտությունների ձևավորում և զարգացում:

Տեսական գործնական դարձնելու ունակության զարգացում:

Կատարել եզրահանգումներ, նպաստել մտածողության և հաղորդակցական հմտությունների զարգացմանը:

**Դասի կառավարումը** - «Գիտելիքների մոլորակ» կղզու ձևավորում, շարժական թվեր, գորգ, ջրով լի շիշ, գունավոր կավիճներ, սովորաբար, գունավոր ծաղկաթերթիկներ, լուցկու հատիկներ, փայտե ձող:

Դասարանում, պատին գրած ունենալ հետևյալ միտքը կամ մեծատիպ մտքեր:

**Օրինակ.** Չկա ավելի վտանգավոր բան, քան այն միտքը, թե այն միակն է:

Լավ մտախոհացումներ ունենալու լավագույն ձևը շատ մտախոհացումներ ունենալն է:

**Ինտեգրում** - Մտածատիկա Մայրենի Տեխնոլոգիա Ես և շրջակա աշխարհը Ֆիզիկոլոգիա

**Դասի ընթացքը** - խթանում. «Միտքը՝ միտք է ծնում»

Երեխաներ, ինչպես տեսնում եք, այսօր մեզ հետաքրքիր անակնկալներ են սպասվում: Մենք պետք է եթևկոսիկա կատարենք «Գիտելիքների մոլորակ» կղզում: Մինչ այդ դուք պետք է որոշեք մեր ինքնաթիռի օդաչուի տարիքը, որպեսզի թռիչքը կայանա: Իբրև «թեթև մուտք» սկսենք կատակային բնույթի զվարճալի հարցերից ու խնդիրներից: Չէ՞ որ մաթեմատիկական նույնպես սիրում է կատակել, զվարճանալ:

Այսպես՝ Դուք մի ինքնաթիռի օդաչու եք, որը թռչում է Բերձորից Լուս Անջելես՝ վայրէջք կատարելով գիտելիքների մոլորակում: Քանի՞ տարեկան է այդ ինքնաթիռի օդաչուն:

Կարծում են, կռահեցիք, այո, այո, ու՞ր տարեկան է:

Թռիչքը պատրաստ է, իսկ վայրէջքը՝ հուսադրող:

Ահա, խելքը բալիկներ, Հրաշք մի աշխարհ անտես, Միտքներդ արագ մարզեք՝ Թվերի աշխարհն անցեք: Դարձեք նրանց բարեկամ,

Տվեք սրամիտ պատասխան, Հաշվեք ծափ ու ծիծաղով, Խնդիր լուծեք դուք խաղով: Դե ինչ, եկեք շտապենք, Գիտելիքների մոլորակ մտնենք: Մոլորակի տերը (տրամաբանությունը) կանգնում է մուտքի մոտ և ասում.

- Ուշադրություն, ուշադրություն, կարծում եք այդքան հեշտ է գիտելիքների մոլորակ մտնելը: Նախ դուք պետք է գտնեք իմ առաջադրած հանելուկի պատասխանը, հետո նոր անցնեք մուտքից ներս:

**Հանելուկ** - Լույսից արագ է գնում, Հզոր է նա ամենքից, Մեր գլխում է նա ծնվում, Երբեք անգործ չի մնում:



**Աշակերտ** - Միտքը **Տրամաբանություն** - Ապրեք, դուք ճիշտ գուշակեցիք, կարող եք առաջ շարժվել:

Այս փուլի նպատակն է օգնել սովորողներին՝ մի բերել դասարանի վերաբերյալ իրենց նախնական գիտելիքները, շարժել նրանց հետաքրքրությունը և օգնել սովորել նորը:

Կիրառում են «Խնքավորում» մեթոդը. այն նպաստում է սովորողների ունեցած գիտելիքների և դրանց միջև գոյություն ունեցող կապերի ամրապնդմանը: Գրատախտակի կենտրոնում ամրացնում են թեմային առնչվող առանցքային նկար-բառը՝ գիտելիքների մոլորակ կամ կղզի: Մտազորի միջոցով գրում ենք այդ բառին առնչվող բառերն ու արտահայտությունները:

Գաղափարները գրելն ավարտելուց հետո գծիկներով միացնում ենք այն բառերը, որոնք իրար հետ առնչվում են: Աշխատանքը կատարվում է ինչպես փոքր խմբերով, այնպես էլ անհատական:

Մտազորի սովորողների միջև մտքերի փոխանակման ընթացքում գաղափարների ստեղծման ու հարստացման եղանակներից մեկն է: Ստեղծվում է անկաշկանդ մթնոլորտ, ինչը նպաստում է ստեղծագործական մտածողության զարգացմանը:



Մտքերը, գաղափարները գրատախտակին գրի առնելուց հետո անցնում ենք նոր նյութին, ապա քննարկում առաջադրված գաղափարները, անհրաժեշտության դեպքում լրացնում եղած անհամաձայնությունները, քննարկում, շտկում: Այս մեթոդի հիմնական նպատակն աշակերտների ուշադրությունը սկսելու է, սար բարձրանալ և նվաճեք բարձունքը:

**Ուսուցիչ** - Դուք խելացի, բանիմաց երեխաներ եք: Լավ եք տրամաբանում: Այ, եթե կարողանաք նաև ճիշտ կողմնորոշվել, ավելի արագ և ճիշտ կատարել աշխատանքը, կզուգեք կղզում շրջագայելու երթուղին: Իսկ դրան հասնելու համար դուք պետք է արգելքներ հաղթահարեք, սար բարձրանաք և նվաճեք բարձունքը:

**Իմաստի ընկալում** - Խաղ՝ «Բարձունքի նվաճումը», որն առավել հետաքրքրաշարժ և արդյունավետ կդարձնի ուսումնական գործընթացը, եթե գիտելիքների կրկնությունն իրականացվի այս խաղի տեսքով: Գրատախտակի մոտ են իրավորում շարքերի ներկայացուցիչներին, որոնք, ճիշտ պատասխանելով տրված հարցերին, բարձրանում են բուրգի աստիճաններով:

**1-ին արգելք** - «Կախարդական անտառ» **խնդիրներ.**

Երեխաներն ըստ ցանկության վերցնում են ծաղկաթերթիկները, գույներով առանձնացնում են և խմբեր կազմում:

**1-ին խումբ** - Խանութ բերեցին 5 տակառ կաթ և վաճառեցին 3 տակառի կաթը: Քանի՞

տակառ մնաց խանութում: **2-րդ խումբ** - Վանդակում կա 3 ճագար: Երեք քույրերից յուրաքանչյուրին տվեցին մեկական ճագար, սակայն վանդակում մեկ ճագար էլ մնաց: Ինչպե՞ս կարող էր դա պատահել:

**3-րդ խումբ** - Երկու հոգին արտը հնձեցին 6 ժամում: Քանի՞ ժամում այդ նույն արտը կհնձեն չորս հոգին:

Որ խումբը ճիշտ և արագ է լուծում խնդիրը, հաղթահարում է արգելքը և բարձրանում մյուս աստիճան:

**2-րդ արգելք** - «Հանելուկների գետ» **1-ին խումբ** - Երկու մարդ ցանկանում էին անցնել գետը, սակայն ավին մի նավակ կար, որով միայն մեկ մարդ կարող էր տեղափոխվել: Երկուսն էլ այդ նավակով անցան գետը:

Ինչպե՞ս բացատրել դա:

**2-րդ խումբ** - Երկու մարդ մեկ ժամ շարունակ հաշվում էին մայրով անցնող բոլոր անցորդներին: Նրանցից մեկը նայում էր պատուհանից, իսկ մյուսը մայրով գնում-գալիս էր: Նրանցից ո՞վ ավելի շատ մարդ կհաշվի:

**3-րդ խումբ** - Սազը երկու ոտքի վրա կանգնած՝ 2կգ է: Քանի՞ կիլոգրամ կլինի այդ սազը, եթե կանգնի մեկ ոտքի վրա: **3-րդ խումբ** - Թվանշանների ամրոց»

**1-ին խումբ** - Փորձեք արագ-արագ գումարել հետևյալ 4 թվերը՝ 1, 20, 300, 4000: Ի՞նչ ստացաք արդյունքում:

**2-րդ խումբ** - Որքանո՞վ է ամենամեծ միանիշ թիվը փոքր ամենափոքր երկնիշ թվից:

**3-րդ խումբ** - Գրատախտակին երկու շարքով փակցված են ութ թղթեր, որոնց վրա գրված են 1, 2, 3, 4, 5, 7, 8, 9 թվերը: Հեշտ է հաշվել, որ առաջին շարքի թվերի գումարը 19 է, իսկ երկրորդինը՝ 20: Յուրաքանչյուր շարքից մյուս շարք տեղափոխել մի թուղթ այնպես, որ նրանցում եղած թվերի գումարները հավասարվեն:

1 2 7 9

3 4 5 8

**4-5-6-րդ արգելք**՝ «Ոսկե բանալի»

- Բավականաչափ մեծ գորգի կենտրոնում դրված է ջրով լի բաց շիշ: Անհրաժեշտ է վերցնել շիշը՝ հեռացնելով այն գորգի վրայից: Մինչև գորգի վրայից հեռացնելը շիշն ոչնչով դիպչել չի կարելի: Ինչպե՞ս վարվել:

- Ինչպե՞ս կարելի է 2 սմ լայնությամբ և 20 սմ երկարությամբ սովորաբարի շերտը 1 մ բարձրությունից գցել հատակին, որ այն կանգնի եզրի վրա:

- Հայր ու որդի 2 ժամ թեմիս խաղացին: Քանի՞ ժամ խաղաց նրանցից յուրաքանչյուրը:

- Ուղղանկյունաձև սեղանի վրա լուցկու միայն մեկ հատիկով ինչպե՞ս ստանալ եռանկյուն՝ առանց այն կտրելու:

**Կշռադատում** - Գիտելիքների ստուգման համար կիրառվում է ծավալով և թեմայով բարդ դերային խաղ՝ «Մաթեմատիկական ֆուտբոլ»:

Դասարանը բաժանվում է 3 խմբի: Առաջինը «հարձակողների խումբն է», որը հարցեր է պատրաստում հակառակորդի համար: Երկրորդը «պաշտպանվողների խումբն է», որը պատասխանում է հարցերին: Երրորդը «փոխանցողների» խումբն է: Նրանք կարող են հարցը փոխանցել «դարպասապահներին», եթե իրենք չեն կարող դրան պատասխանել:

Յուրաքանչյուր սխալ պատասխան «գոլ» է համարվում:

**Խնդիրներ**

- Գերանը 12 մասի կտրելու համար քանի՞ տեղից պետք է սղոցել:

- Բժիշկը հիվանդին նշանակում է 3 սրկում՝ կես ժամ ընդմիջումներով: Որքա՞ն ժամանակ է պահանջվում՝ բոլոր սրկումները կատարելու համար:

- Սեղանին կար 10 խնձոր: Բացի 7-ից, բոլորը կերան: Քանի՞ խնձոր մնաց սեղանին:

- Երկու ձուն եփվում է 10 րոպեում: Քանի՞ րոպեում կեփվի չորս ձուն:

- Քանի՞ ամիս կա, որ ունի երեսուն օր:

**Նորի ստեղծում** - «Ջարմանահարաշ աշխարհ»

**Տնային հանձնարարություն** - Ճապոնական մի ռոբոտ ցանկացած ֆուտբոլային խաղից առաջ ճիշտ ասում է հաշիվը: Ո՞րն է այդ ռոբոտի գաղտնիքը:

**Գնահատում** - Միավորային և ուսուցանող:

**Սիրվարդ ԹԱՄԱԶՅԱՆ Քաշաթաղի շրջանի կրթության բաժնի փարրական աշխատանքների գծով տեսուչ**



# ԻՆՉՊԵՆ Է ՂԱ ԵՂԵԼ

## ՈՐՊԵՆ ԱՌԱՋԱԲԱՆ

Տարիներն ինչքան հեռացնում են մեզ 88-ի այն փորձրկածին օրերից, այնքան ավելի է իմաստավորվում Շարժման խորհուրդը: Ու եթե նայում ենք անցած 25 տարիների հախուռն իրադարձություններով առկայությունը գործը, ովքեր նախապատրաստել են Արցախյան շարժումը: Նրանցից մեկն էլ Սլավիկ Առուշանյանն է: Մարդ, որ իրոք կանգնած էր Գոյամարտի ակունքներում և իր ժողովրդի հետ միասին անցել է 90-ականների բոլոր փորձություններով: Շարժման 25-ամյակի կապակցությամբ նախապես հարձակվեցի վերստին հանդիպել ու գրուցել նրա հետ: Կարծում ենք, պատմական իրադարձությունների այս մասնավոր վերադարձումն օգտակար կարող է լինել նրանց համար, ովքեր շահագրգռված են Արցախյան շարժման դասերով: Եվ ոչ միայն:

Սլավիկ Առուշանյանին գիտեն 1981 թվականից, երբ երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի շրջանավարտ ուսանողների ռադիոկոմիտեում կան «Սովետական Ղարաբաղ» թերթում աշխատանք գտնելու հույս կորցրած (նյութերը շատ էին հավանում, բայց պատճառաբանում էին, թե թափուր տեղ չկա. տարիներ անց պիտի միայն հասկանայի, որ երևանյան շրջանավարտներիս, հատկապես հայեցի կրթություն ստացածներին, մարզկենտրոնում աշխատանքի ընդունելը զլխացավանք էին համարում)՝ աշխատանքի անցա նորաստեղծ Ասկերանի շրջանի «Կարմիր դրոշ» շրջանային թերթում: Մինչ այդ իմ հոգում ոչ այնքան հարթառու գրասենյակային աշխատանք էր կատարում Ստեփանակերտի հիմնարկներից մեկում: Ինձ համար հատկապես անտանելի էր լեզվական մթնոլորտը. մեծամասնությունը ռուսական կրթությամբ էր, և ինձ օտար միջավայրում էի գգում ու դրանից տառապում:

Ասկերանի շրջանային թերթում աշխատանքի անցնելու առանց չափազանցության նման էր ջրում խեղդվողի փրկվելուն: Այստեղ միանգամայն ուրիշ միջավայր էր: Խմբագրության աշխատողները համարձակ մտածողությամբ, հայրենասեր երիտասարդներ էին: Մի քանիսի անունները թվարկեն: Խմբագիրն արձակագիր Կոմիտաս Դանիելյանն էր, ում ներկայացնելու հարկ չկա: Միայն ասեն, որ իր օրինակով կոչ էր անում դառնալ բազմազանակա՝ դա համարելով ազգերի դեմ պայքարի ձևերից մեկը: Տարբեր պաշտոններով լրագրող էին աշխատում Արարատ Բարսեղյանը (հետագայում՝ Շուշիի շրջանային թերթի խմբագիր, ցավոք, այժմ մեզ հետ չէ), որը թեպետ մասնագիտությամբ ինժեներ (ավարտել էր երևանի պոլիտեխնիկ ինստիտուտը), հիանալի ակնարկներ էր գրում: Մեծ հայրենասեր Կառլեն Սողոմոնյանը՝ Ղշլաղ գյուղից, որը քիչ աշխատեց խմբագրությունում, քանզի հարազատ գյուղի հոգան էր ծանրացած նրա սրտին: Ցավ էր գգում հայրենի գյուղն օրեցօր փոքրանալու, երիտասարդների՝ գյուղը լքելու համար: Իր հողվածներում նա մշտապես արծարծում էր այս թեման, կոչ անում չլքել գյուղերը, շատ երեխաներ ունենալ: Ամեն անգամ մեծ ցավ էր ապրում, երբ

թերթում հերթական անգամ դուրս էր գալիս Կենտկոմի որոշումը բազմազանակ մայրերին խրախուսելու մասին, քանզի ցուցակում գերազանցապես աղբյուրներում հիմնված էին՝ հերոս-մայրեր, իսկ հազվադեպ հիմնված էր հայրերի մայր էր: Եվ մի օր Կառլենը որոշեց վերադառնալ գյուղ՝ գտնելով, որ ինքն այնտեղ ավելի կարևոր գործ կկատարի, իր օրինակով կնպաստի գյուղում երիտասարդների ամրանալուն: Եվ իսկապես, ստանձնելով հայրենի Ղշլաղ գյուղի ղեկավարման գործը՝ նա կարողացավ քաղաք տեղափոխված մի քանի ընտանիքներ վերադարձնել, ինքն էլ իր երեխաների թիվը մեծացրեց: Ցավոք, նա էլ այժմ դարձել է երջանակահիշատակ: Հետպատերազմյան ամենաթողության պայմաններում վառել էին նրա հրատարակած գրքի ողջ տպաքանակը, իսկ իրեն դաժան ծեծի ենթարկել: Սիրտը երկար չդիմացավ...

Որոշ ժամանակ անց խմբագրությունում աշխատանքի ընդունվեց Սլավիկ Միրզոյանը՝ ևս մի հայրենասեր, որը հետագայում դարձավ Շարժման ակտիվիստներից մեկն ու զոհվեց հայրենի Աղբուլաղ (այժմ՝ Սառնաղբյուր) գյուղի պաշտպանության ժամանակ: Խմբագրության փոքրաթիվ կոլեկտիվն Արցախյան պատերազմում մեկ ուրիշ զոհ էլ տվեց՝ Արարատ Պետրոսյան, որը թերթի տպարանում էր աշխատում (այն ժամանակ խմբագրությունն ու տպարանը մի կոլեկտիվ էին): Այս հոդվածը թող լուսն պակ լինի նրանց պայծառ հիշատակին: Իսկ տպարանի մեկ այլ աշխատող՝ Արթուր Հարությունյանը, հետագայում դարձավ մեր Պաշտպանության բանակի կարկառուն ղեկավարից մեկը: Ինչպես սիրով կոչում էին նրան՝ Կոմբաստ այժմ ղեկավարում է ԼՂՀ փրկարար ծառայությունը:

Շարունակեն թվարկել «Կարմիր դրոշ» թերթում այդ տարիներին աշխատած մի շարք լրագրողների անուններ, և թող ընթերցողը պատկերացում կազմի թերթի մակարդակի մասին: Ծովինար Գրիգորյան՝ այժմ հանրային ռադիոյի առաջատար խմբագիր, Ռոբերտ Եսայան՝ «Հայրենյաց պաշտպան» թերթի խմբագիր և անվանի բանաստեղծ, Նորել Գասպարյան՝ հայտնի հեռուստալրագրող և գրող, Արցախի հանրային հեռուստատեսության խորհրդի նախագահ, Կիմ Գաբրիելյան՝ գրող, լրագրող, Արցախի ժուռնալիստների միության նախագահ:

Շարժման սկզբում գրված համարձակ հոդվածները, որոնք չէին տպագրվում «խորհրդային Ղարաբաղ»-ում, անպայման տեղ էին գտնում Ասկերանի շրջանային թերթում: Հարկ են համարում այս առումով նշել Ասկերանի կուսընթացի առաջին քարտուղար Վաչագան Գրիգորյանի վատասկը, ով միշտ խրախուսում էր նման հոդվածները:

## ՈՐՊԵՆ ԱՐՑԱԽՅԱՆ ՀԱՐՑԱՆ ՄԻ ՍՐԿԱԿԱԿ

Այժմ՝ Սլավիկ Առուշանյանի մասին: Աշխատում էր կուսընթացում: Մյուս աշխատողներից շատ էր տարբերվում: Ս. Առուշանյանի մեջ այդ ոլորտի աշխատողների բնորոշ կարիերիստական, թող ինձ ներքե, ստորաբարչական նկրտումներ չէինք

նկատում: Համեստ, ամպագոռգոռ ելույթներ չունեցող հինգ զավակների հայր այդ անձնավորության մասին երբ սովորաբար նեղ մտերմիկ շրջանակներում քննարկում էինք կուսակցական աշխատողների վարքը, միայն



բարձր գնահատականներ էին ասվում: Իսկ նրա բազմաշնորհության մասին հրաշքներ էին պատմում: Եվ հիմա, տարիներ անց, ձեռք առնելով նրա կենսագրական տվյալները, հասկացա որտեղից էր գալիս այդ ամենը: Շարժման սկզբնական փուլում «Կարմիր դրոշ» թերթը դարձել էր յուրօրինակ շտաբ: Այստեղ էին գալիս Իգոր Մուրադյանը և ուրիշներ: Ոչ միայն որպես լրագրող, այլև շրջախորհրդի պատգամավոր՝ ականատես են եղել Շարժման հետ կապված շրջանային խորհրդի միստերի քննարկումներին, ավելին, որպես քարտուղար, արձանագրողն էի ելույթների, և ինչպես ասում են՝ իրադարձությունների անմիջական մասնակիցը: Ս. Առուշանյանն ինձ միշտ մեղադրում է, թե ինչու չեմ բացում արխիվները, հոգնեմ իմ ձեռքով գրած ելույթները կրկնաբարկում: Դա անում են ուրիշները՝ իրենց հարմարությունից ելնելով՝ հաճախ խեղաթյուրում փաստերը: Ես նրան միշտ խոստանում եմ դա անել՝ ինձ համար ավելի հարմար ժամանակների հետաձգելով:

Եվ այսպես, Սլավիկ Առուշանի Առուշանյան: Ծնվել է 1949թ. հունվարի 1-ին, Լեռնային Ղարաբաղի Ասկերանի շրջանի Դահրավ գյուղում՝ ուսուցիչների ընտանիքում: Նույն տարում ծնողների հետ տեղափոխվել է հարևան Պատարա գյուղը, որտեղ 1956թ. ընդունվել է 1966-ին ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը: 1966թ. սեպտեմբերից մինչև 1967թ. օգոստոս սովորել է երևանի թիվ 1 տեխնիկական ուսումնարանում՝ ստանալով 3-րդ կարգի էլեկտրաեռացողի որակավորում: Այնուհետև տեղափոխվել է Ստեփանակերտ, որտեղ զինկոմիսարիատի ուղեգրով ընդունվել է ավարտել է ԳՕՍԱԱՅ-ին կից ավտոդպրոցը: 1968-ին գորակոչվել է խորհրդային բանակ: 1970թ. մայիսին գորագրվելուց հետո նույն տարվա օգոստոսին աշխատանքի է անցել երևանի «Երազդի» տրեստում՝ որպես փականագործ, այնուհետև՝ որպես վարորդ: Աշխատանքային կոլեկտիվի երաշխավորությամբ 1972-ին ընդունվել է երևանի պետական համալսարանի նախապատրաստական բաժանմունքը և 1973թ. սեպտեմբերին ընդունվել պատմության ֆակուլտետի ցերեկային ուսուցման բաժինը: Ամիսաշտաբային կից ելնելով՝ ուսմանը զուգահեռ աշխատել է երևանի 26 կոմիսարների անվան շրջանի սանձաքման մաս-

նագիտացված ավտոտնտեսությունում՝ որպես տնտեսական մասի վարորդ: 1976թ. մի քանի համախոհների հետ (Համլետ Պետրոսյան, Ալեքսան Հակոբյան, Համբարձում Գալստյան, Խաչատուր Վարդանյան) նախաձեռնել են, և ֆակուլտետի արցախցի դեկան Ռ. Մովսիսյանի օգնությամբ կազմակերպել է ուսանողների առաջին այցելությունը Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտ և հիմք դրել երևանի ու Ղարաբաղի բուհական փոխադարձ շփումների: 1977թ. ամռանը ՌԴ Մագադան քաղաքում հաջողությամբ ղեկավարել է պատմության ֆակուլտետի «Անի» ուսանողական շինարարական ջոկատը:

1978թ. հունիսին ավարտել է երևանի պետական լսարանի պատմության ֆակուլտետը՝ ստանալով պատմաբանի, պատմության և հասարակագիտության ուսուցչի որակավորում: Նույն թվականի ամռանը, ավարտելով պատմության ֆակուլտետի ռազմագիտության ամբիոնի գորահավաքի դասընթացը, ընտանիքով տեղափոխվել է Լեռնային Ղարաբաղ և սեպտեմբերից աշխատանքի անցել կոմունիստական կուսակցության նորաստեղծ Ասկերանի շրջանի գաղափարախոսական բաժնում՝ որպես հրահանգիչ, իսկ 1986-ի հուլիսից դարձել է գաղափարախոսական բաժնի վարիչի տեղակալ՝ քաղլուսուսուցման կաբինետի վարիչ: Նպաստում ունենալով Ղարաբաղի փրկությունը՝ կուսընթացում աշխատանքի ողջ ընթացքում ուսումնասիրել է, թե շրջանում ովքեր կարող են օգտակար լինել այդ հայրենամարտի գործին: Օգտվելով գորբաչովյան վերակառուցման քաղաքականության ընդունած հնարավորությունից՝ 1987թ. մայիսից գոշուրությամբ ձեռնամուխ է եղել հայրենիքի փրկության շրջանային և համայնքային նախաձեռնող խմբերի ստեղծմանը, իսկ նույն թվականի աշնանից Իգոր Մուրադյանի ու Վազգեն Մամուկյանի հետ պլանավորել Ղարաբաղյան հարցը լուծելու առաջնահերթ խնդիրը՝ գաղափարախոսական աշխատանք, ստորագրահավաք, պատվիրակությունների նախապատրաստում և Մոսկվա ուղարկում, մյուս շրջանների ակտիվիստների հետ համագործակցում և այլն:

Հայրենիքի փրկությանը առաջին գործնական մասնակցությունը եղել է 1967թ. ապրիլի 24-ին, հավանաբար, Հ. Շիրազի կողմից Մոսկվայի հայկական գերեզմանատանը կազմակերպված հանրահավաքին և Թուրքիայի դեսպանատան առջև երթին մասնակցելը, որտեղ խոսվել է նաև Արարատի ու Ղարաբաղի փրկության մասին:

1988թ. հունվարի սկզբին, համագործակցելով ԼՂՀ մյուս շրջանների հետ, մասնակցել է Ղարաբաղից Մոսկվա մեկնած 2-րդ պատվիրակության աշխատանքին և մեր բարձրացրած հարցը քաղաքական տեսանկյունով ներկայացրել ԽՍՀՄ Կենտկոմի ազգային հարցերով ենթաբաժնի վարիչ Վ. Մխիթարյանի և ուրիշների հետ հանդիպման ժամանակ: Միջնորդել է Շարժման Ստեփանակերտի ակտիվիստների՝ Ի. Մուրադյանի հետ կապի ստեղծմանը:

Հունվարի վերջին Շարժումը մտավ փակուղի: ՀՀ-ից ստացված առաջարկություններն աննպաստահարմար համարելով՝ Գիշի գյուղում առաջ քաշեց Ղարաբաղյան հարցի լուծման նոր ուղղություն, որի

ինաստը հետևյալն էր. վերակառուցման քաղաքականությունը Ղարաբաղը սպիտակ եղեռնից փրկելու վերջին հնարավորությունն է, մեր հույսը դեկավարության վրա դնել չի կարելի, անհրաժեշտ է ոտքի կանգնեցնել ժողովրդին, ու դրա ամենակարճ ճանապարհը ԼՂԻԱ-ը ՀԽՍՀ-ին վերամիավորման մասին Հռչակագրի համաժողովրդական քննարկումն է: Մշակելով օրինակելի որոշման նախագիծ՝ 1988թ. փետրվարի 1-ին Նորագյուղում անցկացրեց շրջանի ղեկավարների գաղտնի ժողով, և հաստատելով շրջանում ժողովների անցկացման ժամանակացույցը, 1988-ի փետրվարի 4-ից ձեռնամուխ եղան քննարկմանը: Մյուս շրջաններում այս նախաձեռնության տարածման աջակցեցին փետրվարի 1-ին Արցախ այցելած և Ս. Առուշանյանի առաջարկությամբ Նորագյուղի գաղտնի ժողովին մասնակցած Իգոր Մուրադյանը և Վաչե Սարուխանյանը:

Հռչակագրի համաժողովրդական քննարկումը կարճ ժամանակում Շարժմանը այնպիսի թափ հաղորդեց, որ այլևս կանգնեցնել չկարողացան: Սկսվեց փետրվարյան զարթոնքը և գոտեմարտը թուրքերի հետ: Շարժումը փորձեցին կասեցնել, բայց փետրվարի 12-ին Ասկերանի և 13-ին՝ Ստեփանակերտի Ս. Առուշանյանի և նրա գաղափարակից ընկերների նախաձեռնած հանրահավաքների ու ակտիվիստների հետ աշխատանքի շնորհիվ հորջ ցնդեցին Արբեջանի և կենտրոնական իշխանությունների կողմից ձեռնարկվող միջոցները: Մասնակցել է Ստեփանակերտում հետագա երեք հանրահավաքների կազմակերպմանը և ապահովել հանրահավաքներին Ասկերանի շրջանի բնակչության ներկայացուցիչների մասնակցությունը ու նյութական ապահովումը վառելափայտով ու մթերքներով:

Համոզվելով, որ ՀՀ լրատվության միջոցները բոլորովին չեն արձագանքում Ղարաբաղյան իրադարձություններին, Կոմիտաս Դանիելյանի հետ նախաձեռնել է Սլավիկ Միրզոյանի գլխավորությամբ 12 հոգուց բաղկացած պատվիրակության ուղարկումը երևան, որը Միլվա Կապուտիկյանը որակեց պատմական:

Հ. Պողոսյանի և Վ. Գրիգորյանի հետ նախաձեռնել է 1988թ. փետրվարի 20-ի արտահերթ մատաշրջանի կազմակերպումը: Կազմակերպել է Ասկերանի շրջանի ակտիվիստների կողմից ԽՍՀՄ Կենտկոմի քաղաքային ՝ «Լեռնային Ղարաբաղում իրադարձությունների մասին» որոշման աննախադեպ հավանություն չտալու գործը և Աղբալից հարձակված ավելի քան 80 հազար ավազակային տարրերին Ասկերանի մուտքի մոտ հակահարված տալը ու նույն տեղում նախաձեռնել շրջանի առաջին 5 ջոկատների կազմակերպումը:

Ընտրվել է ԼՂ Ազգային խորհրդի, ՀՀ 1-ին գումարման Գերագույն խորհրդի և ԼՂՀ Ազգային ժողովի 2-րդ գումարման պատգամավոր:

Նախաձեռնել է ԼՂԻՄ-ից Ջորի Բալայանին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավոր ընտրելու գործը: Ակտիվորեն մասնակցել է շրջանի ինքնապաշտպանությանը, եղել է շրջանային շտաբի անդամ, հրամանատարի կադրային հարցերով տեղակալ: Գործնական մասնակցություն է ունեցել Ասկերանի ինքնապաշտպանական ջոկատների ստեղծմանը,

# ԻՆՉՊԵՆ Ե ԴԱ ԵՂԵԼ

նյութական ապահովմանն ու անձնակազմի հավաքագրմանը: Մասնակցել է մի շարք մարտական գործողությունների, հիմնականում՝ Ասկերանի և Սամուղայի ինքնապաշտպանությանը: ԼՂԴ-ում առաջինը, հանուն մեր պետականության կայունության, միավորել է Ասկերանի շրջանի կամավորականների «երկրապահ» և Արցախյան պատերազմի վետերանների միությունը: Մասնակցել է Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակմանը:

Պարգևատրվել է ԽՍՀՄ «Ձիճվորական երախտագիտություն» մեդալով, «Մայրական երախտագիտություն», «Հայրենյաց պաշտպան» գերատեսչական և «Մխիթար Գոշ» պետական մեդալներով:

Ս. Առուշանյանի անունից երաշխավորված ենք հայտարարել, որ ուժքեր անհամաձայնություն կհայտնեն ստորև տպագրվող փաստերի հավաստիության վերաբերյալ, պատրաստ ենք լսել հրապարակավ: Նպատակն է մեր ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի այս փուլի իրադարձությունները հնարավորինս ճշգրիտ ներկայացնել և երիտասարդ սերունդին Արցախյան վերագործի պատմության մասին առաջին աղբյուրից տեղեկատվություն տալ:

## ՆԱԽԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

*Ներկայացնում ենք Սլավիկ Առուշանյանի հուշերը մեր ժողովրդի համար բախտորոշ ժամանակաշրջանի իրադարձությունների մասին:*

- Անկասկած, 1988թ. փետրվարին ընդամենը ազատագրական շարժման գագաթնակետն էր: Իսկ քոչվոր թուրքերի դեմ հայ ժողովուրդը պայքար սկսել է 11-րդ դարից, երբ այդ ցեղերն սկսեցին մուսուլման գործել Հարավային Կովկաս: Այդ պայքարն Արցախ-Սյունիքում ուժեղացավ հատկապես 1720-ական թվականներին՝ Դավիթ Բեկի, Մխիթար Սպարապետի և Արցախի մելիքների գլխավորությամբ: Մեր պայքարը մեծ հաջողություններ է հաջողությամբ, որը տևել է մինչև տարածաշրջանում ռուսական կարգեր հաստատելը: 1923-ին, երբ Ղարաբաղը բռնակցվեց Ադրբեյջանին, պայքարի թափը ժամանակավորապես կտրվեց: Կեղծ ինտերնացիոնալիզմի արտաքուստ խաղաղ թվացող այդ տարիները թերևս ամենավտանգավորն էին Ղարաբաղի համար, քանի որ «ժողովուրդների բարեկամության» շղարշի տակ տեղի էր ունենում անհնելիականներ կամ թաքսիդներ անվան տակ քողարկված թուրքերի ժողովրդագրական անճշտությունները: Բայց անգամ այդ պայմաններում մեր մի խումբ հայրենասեր մտավորականների շնորհիվ պայքարի ոգին արթուն մնաց: Ներքին այդ ընդվզումի փուլերից մեկը 1960-ական թվականներն էին, որն արտահայտվեց «13-ի նամակով»: Բայց մեր պայքարի վերջին՝ 88-ի փուլը պետք է առանձնացնենք մյուսներից: Շատերը ներկայացնում են, որ դա 13-ի նամակի շարունակությունն էր, այսինքն՝ մեր մտավորականության պայքարի արդյունքը: Ենչու է, առանձին գործեր, արվեստագետներ, մտավորականներ երկշտ արտահայտվում էին, բայց դա ընդհանրական չէր: Ես կարող եմ բերել Լ. Հուրունցի վերջին խոսքերը, երբ նա հիվանդանոցում պառկած էր և լրիվ հուսալքված՝ վիրավորական

խոսքեր էր ասում մեր մտավորականության հասցեին՝ նրանց համարելով «խժուճ բերանուն և ռյակը վզին» (Լ. Հուրունց, «Մեմուրյան մեջ», «Տի Սոգրաֆիկա» ՄՊԸ, Երևան, 2004, էջ 95), ասել է թե՛ սանձած մարդիկ, որ ամբողջությամբ ենթարկվում էին Կևորկովին, մարզկոմի հայտնի պլենումին (1975թ.) ժամանակ նույնիսկ օվազիաներ են հնչեցրել: Եվ ահա այդ օվազիաներ կազմակերպողների մի մասը 88-ի Շարժման սկզբին փորձեց զնալ Շարժման դեմ: Բայց Շարժումը կազմակերպվեց գիտականորեն, կարողացանք հենվել ոչ միայն մտավորականության, այլև բուն ժողովրդի վրա: Եվ ահա 88-ին ուղի հանեցինք ողջ արցախահայությանը, ու հենց համաժողովրդական պայքարը մեզ բերեց հաղթանակի:

Շարժման նախադրյալները շատ են: Նշեն դրանցից մի բանհար:

«13-ի նամակից» հետո նպատակավոր պայմաններ էին ստեղծվել Ղարաբաղի և Հայաստանի մերձեցման համար: Այդ տարիներին մեծ թվով դարաբաղի ուսանողներ ազատ գնում էին Երևան՝ սովորելու: Շփվելով մեր ազգային մշակույթի հետ՝ նրանք արդեն նոր մարդիկ էին՝ նոր գաղափարներով: Նաև Հայաստանից մշակութային խմբերի այցելությունները Ղարաբաղ, հանդիպումները հասարակության հետ մեծ նշանակություն են ունեցել՝ նորից բորբոքելու հայրենասիրական, ազգային-ազատագրական պայքարի կրակը:

Ես հիշում եմ, թե երկար պայքարից հետո Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի մեր կուրսն ինչպես կարողացանք բերել Ղարաբաղ: Դա բուհական շփումների մեջ առաջինն էր (1976թ.): Կարելի է ասել՝ հանդիպումն անցկացրին ծածուկ: Առաջին հարկի մի լսարանում եկան երկու հոգի, մեկը ԽՍՀՄ պատմության մասնագետ՝ տարեց մի անձնավորություն, մյուսը՝ ռեկտոր Ս. Խալատրյանը: Գրեթե խուսանավելով, ոչինչ չասելով նրանք անցկացրին այդ հանդիպումը: Ուսանողներիս գիրք նվիրեցին՝ Կևորկովի 1975թ. գեկուցումը: Մինչև հիմա այդ գիրքը պահում եմ, ընդամենը մակագրված է՝ «Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի ուսանողների կողմից՝ Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի ուսանողներին», ու ոչ մի ստորագրություն:

Ուսանողները Ստեփանակերտում, հայերեն ցուցանակներ տեսնելով, զարմանում էին. շատերը պատկերացում չուներին Ղարաբաղի մասին: Բարեբախտաբար, երբ էլինք ԵՊՀ-ի ավտոբուսով, այցելեցինք, Շուշի, Ամարաս, Գանձասար: Տպավորությունը շքեցուցիչ էր: Կարծում եմ, այդ այցելությունն էլ մեծ դերակատարություն ունեցավ, որ իմ համակուրսեցիները Համբարձում Գալստյանը և Ալեքսան Հակոբյանն ընտրվեցին Երևանի «Ղարաբաղ» կոմիտեի անդամ և կարևոր դերակատարություն ունեցան մեր ազգային-ազատագրական պայքարում:

Ցավովի է, որ մինչև այսօր ոչ մեկը Շարժման համակարգված պատմությունը չի ներկայացրել, ոչ մեկը չի կարողանում բացատրել, թե ինչու հենց փետրվարին է վերցնում իր վրա: Սկզբնական շրջանում նրանց խնդիրն էր ստեղծել նախաձեռնող խմբեր: Իզոլ Մուրադյանի թիմի անդամներից Միքայել Դանիելյանը, որին

Շարժման նախադրյալների մեջ, իհարկե, պետք է անպայման նշել Ադրբեյջանի իշխանությունների վարած հակահայկական քաղաքականությունը, որի հետևանքով ամբողջովին հայաթափվեց Նախիջևանը, սպիտակ եղեռնի էր ենթարկվում Արցախը: Վիճակագրական տվյալները վկայում են, որ խորհրդային տարիներին Ղարաբաղի հայ բնակչությունը չի աճել, փոխարենը արդբեյջանցիների թիվն էր ավելանում: Հ. Ալիևը հետագայում Միլի մեջլիսում ելույթ ունենալով՝ հպարտությամբ նշել է, որ իր իշխանության տարիներին Ղարաբաղում արդբեյջանցիների քանակն աճել է 10 տոկոսով:

Մյուս նախադրյալը խորհրդային պետության լճացումն էր. կայսրությունը փաստորեն հայտնվել էր քաղաքական ճգնաժամի մեջ, որից դուրս գալ կենտրոնական իշխանություններն այդպես էլ չէին չեղան: Իմ կարծիքով, այս համապատկերին կարևոր նշանակություն ունեցան նաև Գոյանի և Իվանովի կողմից կատարված աղմուկահարույց բացահայտումները Միջին Ասիայում, որի շահավիղները հասնում էին մինչև Կրեմլ: Միխայիլ Գորբաչովի հռչակած Կերակառուցման կուրսն արդարության հույսեր էր արթնացրել մեր մեջ: Շարժման նախադրյալներն, իհարկե, չեն սահմանափակվում սրանցով, բազմաթիվ են և հատուկ ուսումնասիրության կարիք ունեն: Հուսով եմ, որ հետագայում ավելի ծավալուն և խորը կներկայացնեն մեր ազգային-ազատագրական պայքարի նախադրյալներն ու պատմությունը:

## ԱՏՈՐԱԳՐԱՅԻՆ 88-Ի ՀՐԱՊԱՐԱՆՍԻՆ ԸՆԴՈՒՄԻՍՏՍԻՍՏՍԻՍ

Ընդհանրապես, առաջին մարդիկ, որ տեսել եմ Շարժման գործերով զբաղվելիս, 1986-ին Ջորի Բալայանը և պատմաբան Սուրեն Այվազյանն էին: Բայց այդ աշխատանքը ոչ ճիշտ կազմակերպելու պատճառով շուրջ թափվեց: 1986թ. հավաքած ստորագրությունները մասնակցների հետ ուղարկել էին Մոսկվա: Մայիսին թե հուլիսին Ադրբեյջանի Կենտկոմից ԼՂԴՄ շրջկոմների քարտուղարներին նամակ էին գրել՝ պարզելու, թե ովքեր են ստորագրողները: Մեզանում գտնվեցին մարդիկ, որ պատասխանեցին՝ իբր անհուն նամակներ են: Եվ դրանով ավարտվեց այդ փուլը, այդպես անպտուղ: Շարժման ակտիվիստներից կան, որ խոստովանում են, որ առաջին ստորագրահավաքին լուրջ չեն մոտեցել: Մենք դասեր քաղեցինք մխարդի ստորագրահավաքի սխալներից: Նախ՝ համոզում էինք, որ եթե միանում է մեր նախաձեռնությանը, ապա պետք է մինչև վերջ տեր կանգնի իր ստորագրած նամակի պահանջին: Ստորագրությունները հավաքում էինք երկու օրինակով, նշվում էր ստորագրողի անունը, ազգանունը, հայրանունը, անձնագրի համարը և հասցեն:

Դրանից հետո Իզոլ Մուրադյանը՝ Շարժումը նախաձեռնողներից մեկը, Շարժումը ուղի կանգնեցնելու համար ամեն մի շրջանում նոր խումբ է ստեղծում՝ հիմնականում Ղարաբաղցիներից: Ամեն մեկը որոշակի պարտավորություններ է վերցնում իր վրա: Սկզբնական շրջանում նրանց խնդիրն էր ստեղծել նախաձեռնող խմբեր: Իզոլ Մուրադյանի թիմի անդամներից Միքայել Դանիելյանը, որին դեռ մանկությունից էի ծանոթ, ինձ

խնդրում է, որ Ասկերանում ստեղծենք այդպիսի մի խումբ: Մյուս շրջանների մասին չեմ կարող ասել, պատմեմ, թե կրնկրետ մեր՝ Ասկերանի շրջանում ինչպես է դա արվել:

Այսպես, 1987թ. հունիսից հետո սկսվում է նախաձեռնող խմբերի ստեղծումը: Առաջինը «Կարմիր դրոշ» թերթի մասնակցների բաժնի վարիչ Սլավիկ Միրզոյանին դիմեցի նախաձեռնող խմբի մեջ մտնելու համար: Հաջորդը խմբագիր Կոմիտաս Դանիելյանն ընդգրկվեց, նրանից հետո՝ գլխավոր ճարտարապետ Ալբերտ Ավանեսյանը: Աշխատանքները ընդգրկեցին նաև կապի շրջանային հանգույցի պետ Սարառ Հակոբջանյանին, Չամադյու հիվանդանոցի գլխավոր բժիշկ Գեորգի Մնացականյանին և Շոշի գյուղատնտեսի նախագահ Սյունա Հայրիյանին: 1988-ի փետրվարի 1-ից ներգրավեցին նաև կրթության շրջանային բաժնի վարիչ Ալյոշա Գաբրիելյանին: Խումբը հետագայում էլ ընդլայնվեց: Կային մարդիկ, որ թեպետ նախաձեռնող խմբի մեջ չկային, բայց ես նպատակահարմար էի գտնում առանձին հարցերում նրանց հետ խորհրդակցելու և ներգրավելու, ամեն մեկին իրենց բնակավայրում խնդրեցի ստեղծել նախաձեռնող խմբեր, որպեսզի նախապատրաստենք հետագա անելիքները: Եվ արդեն 1987թ. սեպտեմբերին գրեթե բոլոր խոշոր գյուղերում, ինչպես նաև փոքր գյուղերի բացարձակ մեծամասնությունում ստեղծվել էին նախաձեռնող խմբերը: Հանդիպեցի Իզոլ Մուրադյանին, պարզեցինք ստորագրություններ հավաքելու ձևաթղթերը, որպեսզի ստորագրողի անձնագրի համարն ու հասցեն անպայման հստակ նշված լինեն: Եվ որոշեցինք ստորագրություն հավաքել ոչ թե պատահական մարդկանցից, այլ նրանցից, ովքեր համոզված էին այս գործի անհրաժեշտության մեջ: Ասեմ, որ իմ ամբողջ այդ գործունեության ընթացքում ընդամենը երկու հոգու դեպքում էի սխալվել՝ դիմել էինք, բայց հրաժարվել էին ստորագրել: Մեկն ասաց, թե իր համար մեկ է՝ որ հանրապետության կազմում է ապրում, մյուսը թե՛ 1967 թվականին տեսել է գայլի աչքերը: ՊԱԿ-ն իրեն զգվեցրել է, չի կարող:

Այսպես, 1987թ. սեպտեմբերից ձեռնամուխ եղանք ստորագրահավաքին: Սկզբնական շրջանում ստորագրողների անձնագրի համարները չէինք նշում, բայց 1987թ. նոյեմբերի 6-ին մի հանձնախումբ կազմեցին՝ 6 հոգուց բաղկացած. Ս. Միրզոյան, Վ. Հայրիյան, Ռ. Արսյան, Թ. Ենկյան, Ես և Վլադիմիր Պետրոսյանը: Վերջինս ավտոբուսով էր եկել, Իզոլ Մուրադյանի տանը հանդիպմանը չէր մասնակցել, բայց Ջարեհ Մելիք-Շահնազարյանի տանը հանդիպմանը ներկա էր ու իր երեք եղբայրների հետ միասին ակտիվ էր թե՛ Շարժման, թե՛ ինքնապաշտպանության գործում: Ստորագրությունները հավաքելիս քանակի հետևից չէինք ընկնում: Հիմնականում ուշադրություն էինք դարձնում որակին, այնպիսի մարդկանց էինք համոզում ստորագրել, որոնք ներկայացնում էին որևէ կազմակերպություն, Հայրենական պատերազմի ճանաչված վետերանների, տարբեր մասնագիտությունների առաջատար մասնագետների, մի խոսքով, այնպիսի մարդկանց, ովքեր հեղինակություն էին վայելում շրջանում և կարող էին իրենց հետևից տանել շատերին:

Հետագայում Իզոլ Մուրադյանը և Վազգեն Մանուկյանը եկան Ղարա-

բաղ: Խանաբաղ գյուղում հավաքվեցինք Սլավա Սարգսյանեցի տանը, պլանավորեցինք անելիքները: Որոշեցինք Մոսկվա պատվիրակություններ ուղարկելու ժամկետները: Առաջին պատվիրակությունը՝ նոյեմբերի վերջին, երկրորդը՝ դեկտեմբերի վերջին, երրորդը՝ փետրվարին, բայց կրնկրետ օր չէինք նշել: Դրանից բացի, պայմանավորվել էինք, որ նրանք Շարժմանը գաղափարապես նպաստող ինֆորմացիոն նյութեր ուղարկեն մեզ՝ այստեղ տարածելու: Այդ նյութերի մի մասն իմ անձնական արխիվում պահպանվել է: Խնդրել էի Սլավիկ Միրզոյանին, որ յուրաքանչյուրից մի օրինակ պահի, բայց նա արխիվը տարել էր իրենց գյուղ՝ Աղբուլաղ, և երբ ազերիներն ավերեցին գյուղը, արխիվն էլ կորավ: Ինձ մոտ եղածն էլ ուրիշ պայմաններում փչացավ: Թաքցրել էի հողի տակ, խոնավությունից խամրել է, բայց վերագրեցրեք որոշ չափով ընթեռնելի են մնացել:

Իհարկե, ամեն ինչ խիստ գաղտնի էր արվում: Աշխատում էինք չփումներն իրար հետ քչացնել, որ չկասկածեն: Բայց ՊԱԿ-ը հոտն արդեն առել էր: Մեր տուն անձամբ ՊԱԿ-ի ներկայացուցիչ էր եկել և փնտրում էր Սուրեն Այվազյանի նամակները (սկզբնական շրջանում նրա նամակներն էինք տարածում): Հետագայում ՊԱԿ-ի այդ աշխատողն ամբողջ թե ինչից, թողեց հեռացավ Ղարաբաղից, որովհետև հասկացավ, որ դժվար է լինելու իր նմանների համար այստեղ մնալը: Բարեբախտաբար, ինձ ժամանակին զգուշացրել էին, և ես կարողացա նամակների հավաքածուն տանից հանել:

## ՍՈՒՍՏՐԱՆ ԴԱՍԿԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՅՑԸ ՄՈՍԿՎԱ

Եվ ահա ստորագրահավաքից հետո նոյեմբերի վերջին առաջին պատվիրակությունը մեկնեց Մոսկվա (դա Շարժման 2-րդ փուլը կարելի է համարել): Առաջին պատվիրակության մեջ բոլոր շրջաններից էլ ներկայացուցիչներ կային, նրանք տանում էին հավաքած ստորագրությունները: Կազմակերպիչը Իզոլ Մուրադյանն էր: Երբ այսպիսի արտահայտություն ենք լսում՝ առաջինը մեզնից սկսվեց, այնքան էլ ճիշտ է: Այդ հարցերը համակարգում էր Իզոլ Մուրադյանը: Մեր՝ Ասկերանի շրջանից երկու հոգի պիտի գնային, բայց մեկը հրաժարվեց: Ես, իհարկե, դրա համար չղայնացա, չնեղացա: Հետո այդ անձնավորությունը մեծ դեր է խաղացել, կարևոր ժամանակաշրջանում նա մեծ ծառայություն է մատուցել մեր ժողովրդին՝ նպաստելով Շարժմանը: Նա մեր կողմից շատ հարգված (ցավոք, այսօր չկա) Ջանիլ Մարտիրոսյանն էր: Հետագայում նա իր մի հոգվածում նշել է, թե ինչ պատճառով չի գնացել: Մյուսը Ռաֆիկ Արսյանն էր՝ Ասկերանի հացի գործարանի բանվոր:

Առաջին պատվիրակությանը Կենտրոնի ընդունարանից այն կողմ չթողեցին: Ընդունարանի պետը թույլ չտվեց որևէ մի պաշտոնյայի հետ պատվիրակությունը հանդիպի: Ինքն անձամբ ընդունեց պատվիրակությանը և վերցրեց փաստաթղթերը՝ ասելով, որ կուսումնասիրեն ու ընթացք կտան:

Դրանից հետո Ադրբեյջանի Կենտրոնից ստիպեցին հաշվեհարդար տեսնել ստորագրողների հետ և բանագնացներին ազատել աշխատանքից:

ՃԱՐԺՈՒՄ - 25

ԻՆՉՊԵՆ Ե ԴԱ ԵՂԵԼ

Դեկտեմբերի 17-ին շրջանի ստորագրողներին հրավիրում են կուսակցության շրջկոմ և բացատրություն պահանջում: Աղբյուրների Կենտրոնում ու մարզկոմն այդ էին պարտադրում, քանի որ այդ ձևով Աղբյուրների հաջողվել էր ի չիք դարձնել նախորդ ստորագրահավաքը: Այս անգամ, սակայն, դա նրանց չհաջողվեց:

Միջանկյալ

Կուսը շրջկոմի առաջին քարտուղար Վ. Գրիգորյանը, չի կարելի ասել, թե խրախուսում էր մեզ, բայց համակրում էր, ինքն էլ շատ հայրենասեր մարդ էր: Մենք երբեմն միասին շախմատ էինք խաղում, և կիսվում էր ինձ հետ, թե ինչպես են աղբյուրներից ամեն կերպ ձգտում Դարաբաղը աղբյուրներից անջատել: Օրինակ՝ մի քանի հարցերում նա հակադրվեց Աղբյուրների իշխանություններին: Կոնկրետ Փարամաքի և Լեանոյե տեղամասերում ուզում էին աղբյուրներից համայնքներ ստեղծել, գյուղի կարգավիճակ տալ: Փարամաքիում կարողացավ թույլ չտալ. բնակավայր ստեղծելն իրը խանգարում է այնտեղ գործող անասնապահական համալիրին, բայց Լեանոյեում կարողացավ ընդամենը աղբյուրներից առաջարկած Մեշալի անվանումը փոխել Լեանոյե: Բայց նրան դա չէր ավելի շատ զայրացրել, այլ այն (որն ինձ համար էլ դարձավ կենսաց-մահու խնդիր), որ 700-տեղանոց ուսումնարան էին ուզում բացել Ասկերանում, որի կեսն աղբյուրներից էին, որի կեսն աղբյուրներից էին: Դա նշանակում էր, որ Ասկերանում, որտեղ հատուկ են աղբյուրների կար, արդեն պետք է զանգվածայնորեն բնակվեին: Պատկերացնում էր ինչ կլինեին: Այդքան դասախոսներ, ուսանողներ, նրանց համար բնակարաններ ու հանրակացարան: Իսկ Ասկերանը ռազմավարական նշանակություն ունեցող բնակավայր էր մարզի համար, կարելի էր ասել, նրա դարպասը: Ուստի մենք ավելի ակտիվացրինք մեր պայքարը, արդեն կենսաց-մահու պայքար էր դա:

Այդ, կուսակցական ղեկավարներն անմիջապես չէին կարող կողմնորոշվել: Այն ժամանակ շատ դժվար էր, և թիչ ղեկավարներ կային մեզ համակրող: Շատերն անգամ զգուշանում էին ինձ բարեկեցի, որ հանկարծ կասկածի տակ չառնվեին: Ժամանակներն էին այդպիսին, չէիր կարող ստիպել, որ մարդ իր կյանքը կամ պաշտոնը վտանգի տակ զննի: Իհարկե, ամեն մեկն ինքն էր որոշում ինչպես վերաբերվել հարցին: Բայց դա մեր ժողովրդի համար ճակատագրական պահ էր: Եվ յուրաքանչյուր ոք պարտավոր էր ներդրում ունենալ մեր ազգային նպատակների իրականացման գործում:

Կային նաև կուսը շրջկոմի հրահանգիչ Սեյրան Գալստյանի մասն մարդիկ, որոնք պահանջում էին իրենց էլ հանձնարարություններ տան, և քանի որ Սեյրանը սովորապես խնդրեցի զբաղվել երիտասարդներին ներգրավելու հարցով, իսկ տեխնիկումի ուսումնական մասի վարիչ և փոխտնօրեն Գեորգի Զաքարյանի, կուսակցական կազմակերպության քարտուղար Եղուար Բարսեղյանի ու մի քանի դասախոսների հետ անձամբ շփումներ ունեին:

Շրջկոմում բացատրության ժամանակ երեք հոգի վախեցել ու հրաժարվել էին իրենց ստորագրություններից, իսկ մյուսները հաստատական

էին իրենց որոշման մեջ: Զարց դրվեց հատկապես ավելի բարձր պաշտոն զբաղեցնող մարդկանց, ովքեր ստորագրել էին, ազատել աշխատանքից և բացատրություն վերցնել, թե ինչի համար են ստորագրել: Ցուցակ էին ուղարկել, որի մեջ նաև իմ անունը կար: Մի օր առաջ Վ. Գրիգորյանն ինձ հրավիրում է իր մոտ և ասում, որ վաղը կանչելու է ինձ վրա խոսի, թող չնեղանամ: Կևորկովն է ստիպում:

Քանի որ դեկտեմբերի 15-ից ես գտնվում էի արձակուրդում, շրջկոմի քարտուղարն իրավունք չունեի աշխատանքից ազատել: Նա Կևորկովին պատասխանել էր, որ ինձ կազատի արձակուրդից վերադառնալուց հետո: Համենայն դեպս, դեկտեմբերի 17-ին կանչում է ինձ, «հանդիմանում», թե ինչու են ստորագրել, չէ որ կուսակցական աշխատող եմ: Ես ասացի՝ որտեղ մեր ժողովուրդը, այնտեղ էլ՝ ես: Նա պահանջում է բացատրություն գրել: Հետո ինձ տեղեկացնում է, որ արձակուրդից հետո ինձ ուղարկելու է աշխատելու նորաստեղծ սթափոթյան ընկերությունում՝ որպես նախագահ:

Բացատրություն գրեցի այս բովանդակությամբ. Աղբյուրների իշխանությունները պլանավորված Դարաբաղը բնակեցնում են աղբյուրներից, մեր մշակութային ժառանգությունը յուրացնում են, խեղաթյուրում, մեր պատմական հուշարձանները ներկայացնում են որպես աղվանական, նրանց պատմաբաններն ամբողջությամբ խեղաթյուրում են մեր պատմությունը: Հաշվի առնելով այս ամենը, ստորագրել եմ նամակի տակ և գտնում եմ, որ մեր պահանջը վերակառուցման քաղաքականությանը չի հակասում: Ընդհակառակը՝ այն բխում է մեր սոցիալ-տնտեսական կյանքի զարգացումն արագացնելու անհրաժեշտությունից: Տեքստը մինչև հիմա պահպանվում է:

ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏՎՈՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՅՅԸ ՄՈՍԿՎԱ, ԱՏՈՐՎՈՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՄԵՐԻԿԱՆԻԿԱՆ ՉՈՐՈՒԿԵՑ. ՆՈՐ ՈՂԵՄՈՒԹՅՈՒՆ

Բանագնացների երկրորդ խումբը Մոսկվա պետք է մեկվոր դեկտեմբերի վերջին, սակայն, քանի որ առջևում տոներ էին, Իգոր Մուրադյանն առաջարկեց գնալ հունվարի 5-ին: Երևանում հավաքվեցինք Ջարեհ Մելիք-Շահնազարյանի տանը: Քննարկեցինք՝ Մոսկվայում ինչպես պետք է ներկայացնենք մեր հարցը: Քննարկմանը մասնակցում էին Մերո համագործակցության, Բագրատ Ուլուբաբյանը, Սիլվա Կապուտիկյանը, Ջորի Բալայանը և ուրիշներ: Ջ. Բալայանն ասաց՝ նպատակահարմար է, որ դենք վերամիավորման հարցը: Երբ ասացին, որ ավելի նպատակահարմար է միացումը, ես առաջարկեցի հարցը լուծել վերջնական ճանապարհով, սկզբից դենք Աղբյուրներից անջատվելու հարցը, հետո՝ միացման: Մեծամասնությունը գտավ, որ ճիշտը միացման հարցն է՝ պատճառաբանելով, որ ավելի պետք է դենք, որ նվազագույնին հասնենք: Ես իմ տեսակետը չպնդեցի, համաձայնվեցի նրանց հետ:

Երբ խՍՀՄ Կենտկոմի ազգային փոքրամասնությունների գծով սեկտորի վարիչ Վ. Միխայլովի հետ հանդիպումը վերջինիս հիվանդության պատճառով հետաձգվեց, մեր նշա-

նավոր հայրենակիցների հետ հանդիպումներից բացի, ենթադրելով, որ մեզ հետևելու են, պատվիրակության անդամներին առաջարկեցի այցելել ռուս ժողովրդի համար կարևոր նշանակություն ունեցող մշակութային վայրեր՝ Բորոդինոյի ճակատամարտի համայնապատկերը, Տրետյակովյան պատկերասրահ, Օրուժեյնի պալատ, Բանակի և Հայրենական պատերազմի թանգարան, Լենինի թանգարան:

Միջանկյալ

Լենինի թանգարանում փորձեցի ճշտել մի փաստ. Սուրեն Այվազյանն իր նամակներից մեկում գրել էր, որ Լենինն իր ձեռքով քարտեզի վրա Հայաստանի սահմանը նշել էր Արաքսի և Քուրի միացման հատվածը: Իսկապես, այդպես էլ կար. գրված էր «Армения», և «Я» տառն էլ գտնվում էր Եվրասիայի վրա: Տղամերից մեկին կանչեցի, նրան էլ ցույց տվեցի: Մենք երբեմն անհիմն ենք Լենինին մեղադրում, բայց նա սկզբնական շրջանում Անդրկովկասում հենց հայերի վրա հենվեց Ստեփան Շահումյանի միջոցով, որին ֆինանսավորում էր և ապահովում զենք ու զինամթերքով: Սակայն մեր քաղաքական կուսակցությունները չմիավորվեցին Շահումյանի շուրջը (Անդրանիկը ճիշտ կողմնորոշվեց) և բաժանվեցին երեք մասի: Լենինը նույնիսկ ռուսական բանակի հայազգի զեներալ Բագրատունում էր ուղարկել 1000 զինվորով, որպեսզի Շահումյանին օգնի՝ ռազմական գործը ղեկավարելու: Անգամ դրանից հետո մեր քաղաքական ուժերը չմիավորվեցին Շահումյանի շուրջը: Տեսնելով, որ հայերը չեն միավորվում, ընդհակառակը, մի մասն էլ Շահումյանի դեմ է (մեծահարուստները վախենալով, որ կարող է գրկվեն իրենց նախնիներից, գործում էին Շահումյանի դեմ, Շահումյանն էլ, լի՛նելով շատ կիրք մարդ, հայերի նկատմամբ բռնությունների չգնաց, թեկուզ 10 հազար վարձու զինվոր ունեի), Լենինը հետագայում փոխեց իր դիրքորոշումը և սկսեց հենվել աղբյուրներից: Մի օրում մուսավաթականները վերածվեցին «կոմունիստների»՝ քաղաքական նպատակահարմարությունից ելնելով: Կեղծորեն կոմունիստ «օծվելով»՝ Դարաբաղի և Նախիջևանի հարցը «լուծեցին»: Չանգեզուրն էլ հաստատ նույն բախտին կարծանանար, եթե չլինեիր Նժդեհը...

Մեր Շարժման սկզբին Ղափանում և, առհասարակ, Հայաստանում ահազին աղբյուրներից էին բնակվում, կուսը շրջկոմի քարտուղարներ էլ արդեն կային: Ամբողջ սահմանը պլանավորված բնակեցվում էր թուրքերով, որի նպատակը շատ պարզ էր:

Վ. Միխայլովի մոտ ընդունելության գնացիք հինգ հոգով, որովհետև ավելի մեծ կազմով թույլ չտվեցին: Խմբի մեջ էին Իգոր Մուրադյանը, մոսկվաբնակ զեներալ, մեր համերկրացի Ռաֆայել Հարությունյանը, խՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավոր, Մուս գյուղից մեխանիկատոր Վազգեն Բալայանը, Արթուր Սկրտչյանը և ես: Կենտկոմում սկզբում ուզում էին Աղբյուրներից ներկայացուցչի էլ մասնակից դարձնել, բայց մենք պնդեցինք, որ լինի միայն Հայաստանի կուրատորը: Միխայլովի հետ հանդիպումը տևեց 2 ժամ 20 րոպե:

Քաղաքական տեսանկյունից Արցախյան հարցը ներկայացնում էի ես,

պատմական տեսանկյունից՝ Ա. Սկրտչյանը, տնտեսական՝ Ի. Մուրադյանը, ռազմական՝ Ռ. Հարությունյանը, Վ. Բալայանը ներկայացնում էր ժողովրդական դիվանագիտությունը: Իմ խոսքում ես ասացի, որ 1923թ. Կոլբյուրոյի որոշմամբ Լեռնային Դարաբաղը անհիմն միացվել է Աղբյուրներից, մինչդեռ այդպիսի պետություն մասկինում չի եղել, որ Աղբյուրները ստեղծվել է թուրքական 30 հազարանոց բանակի կողմից: Խնդրում ենք ուղղել պատմական սխալը՝ ԼԴԻՄ-ը վերամիավորել Հայկական ԽՍՀ-ին, իսկ եթե դա հնարավոր չէ, մենք համաձայն ենք խՍՀՄ սլավոնական ցանկացած հանրապետության հետ միացմանը: Եթե դա էլ հնարավոր չէ, ասպ պատրաստ ենք ցանկացած հանրապետության հետ միավորվել՝ բացի Աղբյուրներից: Նշեցի, որ ավելի նպատակահարմար ենք գտնում ԼԴԻՄ-ը ենթարկել կենտրոնական իշխանություններին, խոսեցի Աղբյուրների մշակութային ու կարգային խտրականությունների, մայրենի լեզվով հեռուստատեսություն չունենալու, դեմոգրաֆիական վիճակը Նախիջևանի մասն միտումնավոր՝ հօգուտ թուրքերի փոխելու մասին: Ասացի՝ թող չզարմանան, որ թուրք են ասում, որովհետև նրանց գիտնական Ջիա Բունիաթովն անձամբ իմ ներկայությանը հայտարարել է. «Մենք թուրք ժողովուրդ ենք»: Խոսեցի նաև այն մասին, որ Աղբյուրներում 1923թ. քրիստոնյաներն ավելի շատ էին, քան բոլոր մահմեդականները միասին վերցրած: Եվ քանի որ կենտրոնական իշխանությունները հաշվի չեն առնում դիվանագիտական օրենքը, որ քանակական փոփոխությունները վերջիվերջո հանգեցնում են որակական փոփոխությունների, համատարած խրախուսում են բազմազանությունը: Մինչդեռ այն պետք է խրախուսել՝ որտեղ դրա կարիքը կա:

Միխայլովը մեզ լսելուց հետո ասաց, որ մեր հարցը Կենտկոմի ուշադրության կենտրոնում է, և որ դա ոչ հակախորհրդային է, ոչ էլ՝ նացիոնալիստական: Հանդիպումից դուրս գալուց հետո պատվիրակության անդամներն սկսեցին մեզ հարցափորձ անել: Հավաքվեցինք հյուրանոցում, որտեղ ներկա էին նաև հայ ակադեմիկոսներ, Սիլվա Կապուտիկյանը, Ջորի Բալայանը և ուրիշներ: Ես պատմեցի, թե ինչ ենք խոսել Միխայլովի հետ: Իմ ամեն մի նախադասությունից հետո Ջ. Բալայանը «բռավ» էր բացակայում: Վերադառնալուց հետո Իգոր Մուրադյանն ընդհանրացնելով պատվիրակության այցի արդյունքները, բաց նամակ գրեց «Խորհրդային Դարաբաղ» թերթին, բայց այն չտպագրվեց: Ստիպված նամակը բազմաթիվ ու տարածեցինք ամբողջ մարզում: Հիմնական բովանդակությունն այն էր, որ մեր հարցը խՍՀՄ Կենտկոմում ուսումնասիրվում է, որ դա նացիոնալիստական չէ, և ոչ ոք իրավունք չունի բռնություն գործարկել հարցը բարձրացնողների նկատմամբ: Դա մեր պատվիրակության ամենամեծ նվաճումն էր: Վերադառնալուց հետո ինձ չազատեցին աշխատանքից, թողեցին նույն պաշտոնում: Դրանում մեծ դեր խաղաց նաև ՊԼԿ-ի ղեկավար Սեպուրի վերադարձումը, որը Վ. Գրիգորյանին հարցափորձ անելով իմ մասին ու նրանից իմանալով, որ վատ աշխատող չեմ, և որ Վ. Գրիգորյանը Կևորկովի հանձնարարությունն է կատարում, խորհուրդ տվեց չկատարել

Կևորկովի կարգադրությունը, քանի որ իմ արարմունքը հակախորհրդային և նացիոնալիստական չէ և բխում է կուսակցության, վերակառուցման պահանջներից:

Ինձ և պատվիրակության մյուս անդամներին աշխատանքից չազատելու հանգամանքը մեծ նշանակություն ունեցավ: Մարդիկ տեսան, որ քաղաքականության վարիչը, կուսակցական պատասխանատու աշխատող Մոսկվա գնաց-եկավ, և նրան աշխատանքից չհեռացրին: Այդ հանգամանքը մեծ խթան էր մեր Շարժմանը:

ՀԱՅՈՐԴ ՔԱՅԼԸ ՂԵՎԱԿԱՐՆԵՐԻՆ ՀԱՍՏՈՒՆԵԼ ԵՐ

Այսպես գործընթացն սկսեց մեծ թափ ստանալ: Հունվարի 20-ի մոտերքը Ի. Մուրադյանը ինձ հրավիրում է Երևան: Կարծում էի, թե մի լավ լուր ունի, որը չի ուզում հեռախոսով հայտնել: Բայց պարզվում է, որ մեր տարած ստորագրությունները չեն համոզում խՍՀՄ Կենտկոմին մեր հարցը լուծելու: Եվ Ի. Մուրադյանն առաջարկեց ստորագրություններ հավաքել միայն սովետական, կուսակցական, տնտեսական ղեկավարներից, որպեսզի հաջորդ պատվիրակությունն իր հետ Մոսկվա տանի: Ես նրան ասացի, որ մեր՝ Ասկերանի շրջանում դա հնարավոր է կազմակերպել, քանի որ ակտիվ արդեն ուսքի է կանգնել, իսկ մյուս շրջաններում կասկածում են: Ասում է՝ համենայնդեպս, այսօրվա խնդիրը դա է:

Վերադառնում եմ Ասկերան, տղաներին բացատրում հաջորդ քայլը: Յուրաքանչյուր շրջան ուներ իր նախաձեռնող խումբը (այն համակարգում էր Ի. Մուրադյանը, իսկ Դարաբաղում ընդհանուր ղեկավար չկար), որի ղեկավարների հետ ժամանակ առ ժամանակ հանդիպում էինք: Քանի որ Ի. Մուրադյանը հնարավորություն չունեի բոլորի հետ հանդիպելու, ղեկավարները սով մտնել էր լինում, ցուցումներ էր ստանում և տարածում: Կոնկրետ այդ պահին ես եմ եղել նրա մոտ, և իմ միջոցով է ցուցում տվել, որը ես հաղորդել եմ տղաներին: Ուրեմն, հաջորդ քայլը ղեկավարներին համոզելն էր: Մեր շրջանից Շոշի կոլտնտեսության նախագահ Վ. Երամիչյանն ասաց, որ ինքն ինձ կարող է օգնել՝ Մարտունում այդ հարցը կարգավորելու: Որոշեցինք գործընթացը սկսել շրջանի խոշոր գյուղերից մեկում: Հանդիպեցինք Մարտունու նախաձեռնող խմբի անդամներ Վուրյախաչատրյանի և Գրիգոր Ուլուբաբյանի հետ: Նրանք տեսյակ պահեցինք Ի. Մուրադյանի առաջարկությամբ և մեր այցելության նպատակի մասին: Բայց երբ խոշոր տնտեսություններից մեկի ղեկավարին համոզելու մեր փորձն անհաջողության մատնվեց, որը պատճառաբանել էր, թե ինքը չի կարող դա անել՝ մինչև Բորիս Սարկիսովիչի հետ չպայմանավորվի, խնդրեցի, որ Կևորկովին ու ընդհանրապես ոչ մեկին այդ մասին չասի, պարզ դարձավ, որ փաստորեն Շարժումն առաջ տանելու Ի. Մուրադյանի նշած ճանապարհը մտնում է փակուղի:

Գիշի գյուղից Շարժման ակտիվիստ Յուրի Գրիգորյանը, որն ինձ հետ պատվիրակության կազմում Մոսկվա էր մեկնել, ասաց, որ ինքն իմ մասին պատմել է համազրուցակներին և նրանց մեջ մեծ հետաքրքրություն առաջացրել, ու նրանք ցանկանում են ինձ հետ հանդիպել: Մոտ 20

# ԻՆՉՊԵՆ Ե ԴԱ ԵՂԵԼ

հոգի հավաքվում են կոլվարչության գրասենյակի մի կաթինետում: Նրանց բացատրում են Շարժման ընթացքը, նպատակները, ձեռքբերումները և վերջում եզրափակում, թե կոնկրետ ինչ է կատարվում այդ պահին, որ անհրաժեշտ է ուղի կանգնեցնել ժողովրդին, որ դեկավարության վրա հույս դնել չի կարելի, որ սա վերջին հնարավորությունն է Դարաբաղը սպիտակ եղեռնից փրկելու համար, որ եթե մենք վերակառուցման ընձեռած այս հնարավորությունը չօգտագործենք, կունենանք Նախիջևանի ճակատագիրը: Ուստի անհրաժեշտ է ԼՂ-ն Հայաստանին վերամիավորելու մասին Հռչակագիրը համաժողովրդական քննարկման դնել ու համապատասխան որոշում կայացնել: Նրանք հավանություն տվեցին: Այդ հանդիպումն ինձ ոգևորեց: Հետո ես վերադարձա Ասկերան:

### ՆՈՐԱԳՅՈՒՂԻ ՊԵՐՏՆԻ ԺՈՂՈՎ ԴՆՔՔ ԳՆԱՄԱՐՈՒՄԻ ԿԱՆՈՒՄ

Հավաքեցի Ասկերանի նախաձեռնող խմբին, պատմեցի ստեղծված վիճակի մասին, ներկայացրի իմ կողմից մշակված օրինակելի որոշման նախագիծը, որը հավանության արժանացավ: Կազմեցինք ժողովների անցկացման ժամանակացույց, որը հիմնականում համապատասխանեցրինք փետրվարին ԼՂԻՄ բոլոր, ինչպես նաև մեր շրջանում անցկացվող տնտեսությունների ղեկավարների հաշվետու-ընտրական ժողովների ժամանակացույցի հետ, կատարեցինք նախաձեռնող խմբի անդամներից ամրացումներ: Հռչակագրի

խանայնը: Կոլվարչության նախագահ Ա. Գալստյանը հետագայում իր գրքում գրել է, որ ժողովը կազմակերպել էր Ի. Մուրադյանը, իսկ վերջինս էլ «Հայոց աշխարհ» թերթում թե՛ Ասկերանի շրջվարչակազմը: Մինչդեռ կազմակերպել էր Ասկերանի նախաձեռնող խումբը: Իսկ վարչակազմից միայն ես և կուսընթացի հրահանգիչ Գագիկ Ասրյանն էինք մասնակցում ժողովին:

Նորագյուղում որոշման նախագծի և ժողովների անցկացման ժամանակացույցի մասին առարկություններ չեղան: Պայմանավորվեցինք, որ հաշվետու ժողովի սկզբից կամ վերջում առանձին ժողով գումարեն, ընդունեն որոշում երկու օրինակից, արձանագրություն կազմեն, կնիքեն և ուղարկեն շրջանային թերթի խմբագրություն կամ բերեն ինձ տան: Մեր նախաձեռնությունը Մարտունում և Հարդուբուն տարածելու համար հանձն առավ Ի. Մուրադյանը, իսկ Մարտակերտում և Ստեփանակերտում՝ Վ. Սարուխանյանը:

Շրջանում քննարկումները սկսեցինք փետրվարի 4-ից: Արդյունքները շտաբում չէին: Համոզվելով, որ ոչ մեկը չի հետապնդվում, մարդիկ ավելի համարձակ դարձան, տեսան, որ բոլորը նույն կարծիքին են, ժողովների արդյունքները քննարկում էին նաև դախիճից դուրս. որտեղ մի քանի մարդ էր հավաքվում, այլ թեմայից համարյա չէին խոսում: Փորձով հանդուբուն էին, որ Շարժման մասին ցանկացած լուր անենաշատը երեք օրվա ընթացքում հասնում է նույնիսկ ամենահեռավոր բնակավայրերը: Այն կոլեկտիվները, որոնց ուշադրությունից դուրս էինք թողել, իրենք էին պատվի-

քաղուստան և մի շարք այլ պատասխանատու աշխատողների հետ գրուցում են, համոզում, որ ակտիվ ժամանակ հարկավոր է հակահարված տալ Բաքվի էմիսարներին: Եթե մենք նախօրոք չիմանայինք նրանց գալու մասին, չէինք կարող առաջն առնել: Այդ ինֆորմացիան մեզ հաղորդել էր Վաչագան Գրիգորյանը: Ասկերանի կուսընթացի առաջին քարտուղարը, առհասարակ, մեզ շատ է օգնել տեղեկություններ իմանալու հարցում: Այդ և հաջորդ օրվա հանրահավաքների կազմակերպման համար ինֆորմացիան էլ Գրիգորյանից էինք ստացել: Ստեփանակերտում ակտիվը հակահարված տվեց էմիսարներին, որոնք եկել էին համոզելու, իբր դա մի խումբ ծայրահեղականների գործ է: Վ.Գրիգորյանից տեղեկացված լինելով ակտիվների անցկացման նրանց ժամանակացույցի մասին, որ հաջորդը պիտի Ասկերանում լինի, ժամը 9-ին շտապեցի Ասկերան՝ նախապատրաստելու հանրահավաքը և ներսում հակահարված տալու գործը: Այստեղ էլ բարձրացվեց առաջին ցուցապատումը: Ասեն, որ գաղափարն ինձ չէր: Նախաձեռնող խմբից Ռաֆիկ Ասրյանը եկավ, թե՛ տղաներն ուզում են ցուցապատում բարձրացնել, կարելի՞ է: Ասացի՝ ոչ թե կարելի է, այլ անհրաժեշտ է: Եվ դա առաջին լուրուզն էր մեր հանրահավաքների, որը գրված էր ռուսերեն և ուներ հետևյալ բովանդակությունը (այն ձևավորել էր Շարժման ակտիվիստ, հետագայում մեր պատերազմում իրեն քաջաբար դրսևորած Կարմեն Ավետիսյանը)՝ «Կեցեց Լեռնային Դարաբաղի վերամիավորումը Հայկական ԽՍՀ-ին»:

Նիստն իմ հանձնարարությունը ամբողջովին ձայնագրել էին Գագիկ Ասրյանը և Ալավիկ Միրզայանը: Ելույթներ ունեցան Արմեն Ավանեսյանը, Ջամիլ Մարտիրոսյանը, Կոմիտաս Դանիելյանը, Յուրի Իսրայելյանը: Իսկ դրսում հանրահավաք էր... Ասեն, որ նույն օրը հանրահավաքներ կազմակերպվեցին նաև մյուս շրջաններում, որտեղ դարձյալ էմիսարները լավ հակահարված ստացան:

Շրջաններում նույնպես Ադր. ԿԿ ներկայացուցիչների պլանները ձախողվելուց հետո նրանք որոշում են հաջորդ օրը շրջանների միջոցով իրենց ուզած որոշումն ընդունել: Քամի որ Վ. Գրիգորյանը մարզային բյուրոյի անդամ էր, այդ մասին նախօրոք իմանալով, ինձ հայտնեց, որ փետրվարի 13-ին շրջանների բյուրոների համատեղ նիստ է գումարվելու: Ասաց, որ Կոմիտաս Դանիելյանը (ով նույնպես բյուրոյի անդամ էր) չմասնակցի, որովհետև Կոնոպլավը դեռ ուշքի չէր եկել Ասկերանում նրա ունեցած ելույթից: Մենք հաճախակի էինք Վ. Գրիգորյանի հետ գաղտնի հանդիպում, և նա մեզ արժեքավոր տեղեկություններ էր հաղորդում: Եթե նրա տված ինֆորմացիաները չլինեին, մենք չէինք կարող իմանալ, թե որ պահի ինչ է անհրաժեշտ անել: Այսպես, եթե փետրվարի 12-ի մասին նախօրոք չիմանայինք և հանրահավաքի դուրս չգայինք, ելույթներ չնախապատրաստեինք, հանկարծակի կգայինք և չէինք կարող տեղում որոշումներ ընդունել: Կանգնալ նախագիծ էինք մշակել: Երբ էմիսարները խռոված թողեցին ժողովը, մենք շարունակեցինք այն և համապատասխան որոշում կայացրինք:

### ՄԱՍԻՆ ԳՈՐ ԳՆԱՄԱՐՈՒՄԻ

Փետրվարի 13-ի բյուրոյի մասին մենք իմացել էինք դեռևս 12-ի երեկոյան ժամը 9-ի կողմերը: Եկա «Կարմիր դրոշ»-ի խմբագրություն՝ նախաձեռնող խմբի անդամ Կոմիտաս Դանիելյանի մոտ: Հուսահատված էի՝ համատեղ բյուրոների վրա ճնշում գործադրելը գրեթե անհնար էր: Այդ պահին եկան Ստեփանակերտի ավտոտրանսպորտային ձեռնարկության արհևյուրի նախագահ Վլադիմիր Մելքունյանը և էլի մեկ ուրիշը՝ կին ակտիվիստ, որի անունը, ցավոք, չեմ հիշում: Նրանք բերել էին Հռչակագրի ընդունման մասին իրենց կոլեկտիվի ժողովի արձանագրությունը: Ժողովների անցկացման համար Ստեփանակերտում կոլեկտիվների մի մասը մեզ էր խնդրում օգնել իրենց. տրամադրում էինք Հռչակագրի որոշման օրինակելի նախագիծը, և Ի. Մուրադյանի՝ Դարաբաղի նկատմամբ Ադրբեջանի խտրական քաղաքականության վերաբերմանը: Ստեփանակերտի կազմակերպությունն այնքան էլ հզոր չէր, և արձանագրությունների մի մասը մեզ մոտ էր բերվում: Հետագայում դրանց մի մասը մենք վերադարձրինք Ստեփանակերտի նախաձեռնող խմբի ղեկավար Արկադի Կարապետյանին, բայց փաստը մնում է փաստ, որ Ստեփանակերտից ժողովների արձանագրությունների մի մասն Ասկերան էր բերվում: Ծանոթանալով բերված փաստաթղթերին՝ հանդուբուն, որ դեռ ամեն ինչ չէ կորած: Որոշեցինք նույն օրը՝ փետրվարի 13-ին, նույն ժամին՝ 11.00-ին հանրահավաք անցկացնել, քանզի միայն հզոր հանրահավաքը կարող էր կասեցնել նրանց բյուրոների համատեղ նիստը: Եվ առաջինը հենց Վ. Մելքունյանին են հանձնարարում, որ անհրաժեշտ է փետրվարի 13-ին ժամը 11-ին կոլեկտիվով հավաքվել հրապարակում, մյուսներին էլ իմաց կանենք: Եվ խնդրեցի, որ նա էլ հաղորդի Ստեփանակերտի էլեկտրատեխնիկական գործարանից էլեկտրիկ-ակտիվիստ, մեզ հետ Մոսկվա մեկնած Քրիստափոր խաչատրյանին: Դրանից հետո մի քանի ուրիշ կոլեկտիվների էլ ինքս են հայտնում, որ վաղն անպայման հավաքվեն հրապարակում: Երեկոյան գնում են Արկադի Կարապետյանին և մեր շրջանի կոմերիտիության քարտուղար Կարեն Արզումանյանին, որ գան Ասկերան: Հաջորդ օրն առավոտյան նրանք գալիս են: Խմբագրության շենքի մոտ հանդիպում ենք: Հայտնում են, որ այդ օրն անպայման պետք է հանրահավաք անցկացնել: Ա. Կարապետյանը սկզբում ընդդիմանում է՝ թե պետք չէ, իսկ ես ասում եմ, որ եթե այսօր ժամը 11-ին հանրահավաք չանենք, այլևս ուշ կլինի, մեր ամբողջ արածը ջուրը կթափվի: Նրան համոզում են Ստեփանակերտի աշխատավորական կոլեկտիվներին դուրս բերել հանրահավաքի: Իսկ Կարեն Արզումանյանին խնդրում են Բարաթայից բերել այնտեղ թաքցրած լուրուզները: Այդպես էլ անում են: Առաջինը սովորաբար լինում է ինստիտուտի ուսանողներն են տեղեկացվում, որոնք էլ դարձան այդ օրը հրապարակ առաջինը մուտք գործած ցուցարարները: Դրանից հետո եկան ձեռնարկությունների կոլեկտիվները: Շուրջ 7 հազար մարդ է հավաքվում հրապարակում: Մինչև մենք սպասում էինք, որ ցուցապատումները Բարաթայից բերվեն, և տեղեկություններ ստանանք բյուրոների հա-

մատեղ նիստը սկսվելու մասին, Գրիգորի Աճառյանը բարձրանում է ամբիոն, հետո՝ ևս մի քանի հոգի, այնուհետև՝ Ա. Կարապետյանը և ես: 7 հոգի ելույթ ենք ունենում: Բյուրոն դեռ չէր սկսվել: Երևում էր, թե ինչպես են մարզկոմի աշխատողները պատուհաններից նայում ցուցարարներին: Ամբողջ խորհրդային Դարաբաղի պատմության մեջ առաջին անգամ էր այդքան մարդ հավաքվել հրապարակում, որոնք պահանջում էին մեր հարցն արդար լուծել: Մանրամասն չեմ ասում ելույթների բովանդակությունը: Այդ հանրահավաքը վերջնականապես տապալեց Շարժումը դատապարտող նրանց որոշումը, որը նրանք նախօրոք էին պատրաստել: Անգամ հաջորդ օրվա «խորհրդային Դարաբաղ» թերթում առաջնորդող էր պատրաստվել Շարժումը դատապարտող բովանդակությամբ: Հավանաբար, որոշումից հետո պիտի սկսվեր կադրային տեռորը: Չեմ կարող ասել, թե ով էր առաջնորդողի հեղինակը, բայց Ստեփանակերտի ակտիվիստների պահանջով և ժողովրդի հզոր թափից այն հանվեց թերթից:

Երեկոյան կենտրոնական հեռուստատեսությամբ հաղորդեցին, թե ընդամենը 500 մարդ է հավաքվել Ստեփանակերտի հրապարակում, և Շարժումը դատապարտեցին: Իմ խնդրանքով «Կարմիր դրոշ» թերթի ֆոտոլրագրող Վլադիմիր Պետրոսյանն իր կինոխցիկով և լուսանկարչական ապարատով նկարել էր հանրահավաքը, որից պարզ երևում էր, որ հեռուստատեսությամբ սխալ տեղեկատվություն էր տրվել. հրապարակում հավաքված էր 7000 մարդ: Նույն օրը Շարժման նախաձեռնող խմբի անդամներ Ա. Միրզայանը և Ա. Հակոբջանյանը Նախիջևան գործուղում ձևակերպելով՝ իրենց հետ տարան փետրվարի 12-ի նիստի ձայնագրությունը և 13-ի հանրահավաքի լուսանկարները, որից, ի հեճուկս կեղծարարների, պարզ երևում էր, որ հանրահավաքի մասնակիցների թիվը:

Դրանից հետո Շարժման թափն այնքան հզորացավ, որ առաջն առնել հնարավոր չէր: Այնուհետև սկսվեցին հանրահավաքները: Հաջորդը փետրվարի 15-ին էր: Իսկ Մոսկվա մեկնած 3-րդ՝ մտավորականության պատվիրակության վերադարձից հետո Շարժման կենտրոնը տեղափոխվեց Ստեփանակերտ:

Կարելի է ասել, որ փետրվարի 12-13-ը Շարժումն ընդհատակից դուրս եկավ: Համաժողովրդական պոռթման ժայթքումն իր բարձրակետին հասավ փետրվարի 14-15-ը:

Վ. Գրիգորյանը ինձ խնդրում է, որ հերթապահությունս փոխեն և կուսընթացի մասին այդ օրը ես հերթապահեմ, կարևոր գործ կա: Երեկոյան նա և Հենրիխ Պողոսյանը գալիս են շրջան: Ինձ ներս են հրավիրում: Թող անհամեստություն չլինի, բայց ես բառացիորեն կրկնում եմ Հ. Պողոսյանի խոսքերը, որը նախկինում մի քիչ այլ կերպ էի ներկայացրել: Չեռքով ինձ բարեկեցից հետո նա ասաց. «Ալավիկ, այստեղ են ասել՝ անունդ ոսկե տառերով է գրվելու հայ ժողովրդի պատմության մեջ»:

Պատուհանից նայելով, որ իրենց հետևող չկա, Վ. Գրիգորյանն ինձ հրավիրեց նստելու և հարցրեց՝ ինչ է նախատեսվում հետո:

Նրանք հիացած էին հանրահավաքի կազմակերպվածությամբ: Հ. Պողոսյանը գտավ, որ անհրաժեշտ է



Հանդիպում 25 տարի անց. Նորագյուղի գաղտնի ժողովի մի խումբ մասնակիցներ: Ներքևից (ձախից աջ)՝ Ալավիկ Առուստյան, Հակոբ Պետրոսյան, Ալյոշա Գաբրիելյան (վերևից)՝ Ալբերտ Ավանեսյան, Կամո Նարինյան, Գագիկ Ասրյան:

տեքստը և Ադրբեջանի խտրական քաղաքականության մասին Ի. Մուրադյանի վերլուծականը ունեինք, պակասը լրացրինք «Կարմիր դրոշ» թերթի խմբագրությունում բազմացնելով:

Որոշեցինք առաջին հավաքը կազմակերպել Նորագյուղում: Այդ օրը պատահաբար ինձ մոտ էին եկել Իգոր Մուրադյանը և Վաչե Սարուխանյանը: Հարվիրեցի մասնակցել Նորագյուղի ժողովին: Ի. Մուրադյանը տատանվում էր՝ մասնակցել, թե՛ ոչ: Վ. Սարուխանյանը համոզում էր նրան՝ ասելով, որ դա լավ հնարավորություն է մարդկանց հետ հանդիպման: Փետրվարի 1-ին միասին մեկնեցինք Նորագյուղ: Քննարկումն անցկացրինք կոլվարչության կուսակազմակերպության քարտուղար Հակոբ Պետրոսյանի կաթինետում: Վերջինս ակտիվորեն մասնակցեց այդ ժողովի անցկացմանը: Ժողովում ելույթ ունեցան նաև Ի. Մուրադյանը և Վ. Սարու-

րակներ ընտրում և ուղարկում, որ օգնենք, իրենց մոտ էլ ժողով անցկացնենք: Այսպես, կարճ ժամանակում սկսվեց համընդհանուր գաղթը:

### ԱՊՐԵՋԱՆԸ ԽՈՒՆԱՊԻ ՄԵՃ

Ադրբեջանի Կենտկոմը որոշեց Շարժումը խեղդել իր բնում: Փետրվարի 12-ին Ադրկենտկոմի ներկայացուցիչները գալիս են Դարաբաղ, որպեսզի կուսակցական ակտիվի նիստեր գումարեն՝ կուսակցական կազմակերպության միջոցով կասեցնելու Շարժումը: Փետրվարի 12-ի առավոտյան ինքս անձամբ եկել եմ Ստեփանակերտ, մի շարք մարդկանց բացատրել, որ փաստորեն այդ ակտիվում վճռվում է Դարաբաղի բախտը: Ակտիվի մասնակիցներին ներկաբացակա անող Մելս Թևոսյանի, Արմեն Հովհաննիսյանի, Ռադիկ Աթայանի, Վասիլի Ավետիսյանի, Ռուդիկ Աղաբեկյանի, Վրույր Խաչատրյանի,



# ԻՆՉՊԵՆ Է ՂԱ ԵՂԵԼ

անել հաջորդ քայլը, որպեսզի Ադրբեյջանը ուշքի չգա: Նրանք տեղեկացրին, որ մերոնք զանգել են և առաջարկել գումարել արտահերթ նստաշրջան, սկզբում՝ շրջանային, այնուհետև՝ մարզային խորհուրդների: Եվ խնդրեցին ինձ օգնել, որ մյուս շրջանների Շարժման ակտիվիստները նույնպես մասնակցեն այդ կարևոր գործին: Ես սասցի, որ Շարժման բոլոր ակտիվիստների ցանկությունն էլ հենց այդ է, որ օրինավոր ճանապարհով լուծվի մեր հարցը: Համենայն դեպս, խոստացա մի քանի հոգու զանգել և տվեցի մյուս շրջանների կազմակերպիչների անունները, որ այդ հարցով նրանց անմիջապես դիմեն տեղական իշխանությունները (քննարկումների մասին առանձին անդրադարձել եմ Վ. Գրիգորյանի մասին իմ հոդվածում):

### ԱՍԿԵՐԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՐՏԱԴԵՐՔ ԵՒ ՍՆԱԿԱՆ ԱՄՈՒՇԱՆՅԱՆ

Նախքան շրջխորհրդի նիստին անդրադառնալը նշեմ, որ փետրվարի 12-13-ի դեպքերից հետո տեսնելով, որ Հայաստանը չի արձագանքում արցախցիների բարձրացած պահանջին, Ասկերանի նախաձեռնող խումբը նամակ է պատրաստում և 12 հոգուց բաղկացած պատվիրակության հետ ուղարկում Հայաստանի կառավարություն: Փետրվարի 19-ին Երևանի Ազատության հրապարակում տեղի է ունենում հանրահավաք, որ-

նախատեսվել նիստերի անցկացումը: Գուցե շրջան կա, որը չի՞ անցկացրել: Ես չեմ կարող դա վկայել: Կոմիտաս Դանիելյանի հետ միասին պայմանավորվել ենք, որ նիստի նախագահը լինելու է իշխանության, իսկ քարտուղարը՝ Շարժման ներկայացուցիչ: Շարժման ներկայացուցիչ մենք նկատի ենք ունեցել Ձեզ (Ս. Խաչատրյանին՝ տողերիս հեղինակին - խմբ.): Մեր առաջարկությամբ են Ձեզ նիստի քարտուղար են ընտրել (այն տարիներին ես եղել եմ Ասկերանի շրջանային խորհրդի պատգամավոր և «Կարմիր դրոշ» թերթի խմբագրի տեղակալը - հեղ.): Դա, բարեբախտաբար, շատ հաջող է ստացվել: Ձեր գրած արձանագրությունն այսօր էլ պահպանվում է, այն հոյակապ մյուս է մեր Շարժման պատմության համար: Ես կառաջարկեի այդ մյուսերը հրապարակել, որպեսզի մեր ժողովուրդը տեսնի, որ նստաշրջանը ոչ թե մի խումբ մարդկանց գործ է, այլ համաժողովրդական պահանջի արդյունք: Ժողովուրդն է պահանջել նստաշրջան անցկացնել, և պատգամավորներն էլ, լինելով ժողովրդի ներկայացուցիչները, ժամանակին կատարել են իրենց պարտքը և կայացրել կարևոր որոշում:

### Միջանկյալ

*Ս. Առուշանյանի վերին սավածին ի վկայություն՝ ուզում ենք մեջբերել Ասկերանի շրջխորհրդի գործկոմի բաժնի վարիչ Սլավա Բարսեղյանի բացման խոսքը, որով ազդարարվել է*



Ասկերան, փետրվարի 15. տրիբունայում են (աջից ձախ)՝ Հակոբ Պետրոսյան, Լեյբա Սայա, Գեորգի Մնացականյան, Սլավիկ Առուշանյան, Վաչագան Գրիգորյան, Իվան Աբայան, (կնոջ անունը, ցավոք, չգիտեմք):

տեղ ելույթ են ունենում նաև Արցախի պատվիրակները:

Եվ այսպես, կուսընկերոսի առաջին քարտուղար Վ. Գրիգորյանը շրջխորհրդի գործկոմի նախագահ Վիլեն Քոչարյանին հանձնարարում է Շարժման նախաձեռնող խմբի հետ համագործակցելով, գումարել շրջխորհրդի արտահերթ նստաշրջան: Վերջինս էլ իր հերթին հանձնարարում է տեղակալ Սլավա Բարսեղյանին, որն ինձ հետ պայմանավորվում է պատգամավորներից դիմումներ հավաքելու մասին: Դրանց մի մասը հավաքում է Շարժման նախաձեռնող խումբը, մի մասն էլ՝ իրենք. համատեղ ուժերով հավաքվում է 29 դիմում: Շրջխորհրդի նիստում հարցը քննարկվում է և որոշվում շրջխորհրդի արտահերթ նստաշրջան անցկացնել փետրվարի 20-ի առավոտյան: Տարբեր շրջաններում տարբեր օրերի է

հիշարժան նիստի սկիզբը: Միևնույն ժամանակ նպատակահարմար ենք գտնում նաև տպագրել հատվածներ շրջխորհրդի պատգամավոր Մարատ Հակոբջանյանի ելույթից:

**Սլավա ԲԱՐՍԵՂՅԱՆ.** Ընկեր դեպուտատներ: Հարգելի ընկերներ: Ինչպես գիտեք, վերջին ժամանակներս մեր և մարզի մյուս շրջաններում լայն թափ է ստացել Լեռնային Ղարաբաղը Հայկական ԽՍՀ-ին վերամիավորելու ուղղությամբ սկսված ժողովրդական շարժումը: Աշխատանքային կոլեկտիվներում ու հայազգի բնակչության շրջանում, ըստ աշխատանքի ու բնակության վայրի, ամենուրեք հրավիրվել են բազմամարդ միտինգներ, ժողովներ ու հավաքներ, քննարկվել Լեռնային Ղարաբաղը Հայկական ԽՍՀ-ին վերամիավորելու հարցը, ընդունվել համապատասխան

որոշումներ, ուղարկվել կուսակցության Կենտրոնական կոմիտե, որոնցում խնդրվում է ըստ ամենայնի արագացնել ազգային քաղաքականության լեռնային սկզբունքներին համապատասխան բարձրացված հարցերի լուծումը:

Իրենց իսկ կողմից ընդունված որոշումների, նամակների, դիմումների ու հեռագրերի ընթացքավորմանը բնակչության անտեղյակությունը և հարցի լուծման ձգձգումը հասցրել է լարվածության ուժեղացման, որն իր հերթին հանգեցրել է Շարժման շրջանակների ընդլայնմանն ու նորանոր ուժերի ներգրավմանը: Ժողովրդական այդ Շարժումն իր մեջ է ներառել նաև շրջանի բոլոր աստիճանի տեղական խորհուրդներին ու նրանց դեպուտատներին:

Շրջանային սովետի մի խումբ դեպուտատներ (թվով՝ 29 հոգի) և մի քանի գյուղական սովետների գործկոմեր նամակով դիմել են շրջանային գործկոմին և խնդրել «Ադրբեյջանական ՍՄՀ ժողովրդական դեպուտատների շրջանային խորհրդի մասին» Ադր. ՍՄՀ օրենքի 31-րդ և 35-րդ հոդվածներին համապատասխան հրավիրել շրջանային խորհրդի արտահերթ նստաշրջան, նրանում քննարկել մեր երկրամասը Հայկական ՍՄՀ-ին վերամիավորելու մասին հարցը և ընդունել համապատասխան որոշում: Այս առումով ներկա նստաշրջանը տարբերվում է մինչև հիմա եղած նստաշրջաններից, քանի որ նախ այն արտահերթ է և երկրորդ՝ քննարկում է Արցախ-Ղարաբաղի զարգացման պատմության ամբողջ ընթացքով պայմանավորված այնպիսի հարց, որի նմանը չի ունեցել նախորդ ոչ մի նստաշրջան:

Ընկեր դեպուտատներ: Այժմ ձեր քննարկմանն է ներկայացվում ինչպես մեր շրջանի, այնպես էլ ամբողջությամբ վերցված մեր հայրենի երկրամասի սոցիալ-տնտեսական զարգացումն արագացնելու, ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական սկզբունքով զարգացման և ազգային ավանդույթներին հավատարիմ մնալու գործում ճակատագրական կարևորություն ունեցող

բնակչության հոգուն միշտ էլ անմար են եղել Մայր Հայաստանին վերամիանալու արդար ցանկությունն ու հույսը, բայց միայն հիմա է հնարավոր դարձել ուղղելու պատմական, ճակատագրական այդ կուպիտ սխալը: Ափսոսալ կարելի է, որ ոմանք չեն հավատում կամ չեն ուզում հավատալ մեր ժամանակների հիրավի հեղափոխական ոգուն և ոչ միայն իրենք են շարունակում գործել լճացման տարիների դատապարտելի ոճով, այլև ուրիշներին են ուզում մոլորեցնել: Ինչ լավ է, սակայն, որ այդպիսիներից իսկույն երես են դարձնում մասսաները: Վկան մեր մարզում տիրող այսօրվա իրավիճակն է: Եվ պետք է ասել, որ մեր ժողովրդի պայքարը ոչ միայն Ղարաբաղը Հայաստանին վերադարձնելու համար է, այլև հանուն վերակառուցման, ճշմարտության, արդարության, դեմոկրատիայի ու հրապարակայնության հաղթանակի: Մենք հավատում ենք այդ հաղթանակին: Միայն զարմանալ կարելի է այն վայրեկավարների բռնած դիրքից, որոնք տարիներ ի վեր իբր խոսել են ժողովրդի շահերից, բայց այսօր մեկուսացվել են նրանից: Կարիք կա՞ ապացուցել, որ ով ժողովրդի հետ չէ, նա ոչնչի հասնել չի կարող՝ ինչքան էլ ապարդյուն ճիգեր գործադրի: Ժողովրդին հնարավոր չէ այլևս խաբել: Մեզ պետք չեն կեղծ մվիրատվություններ: Ղարաբաղում սով չէ, եթե կա՞ միայն հոգևոր սով է: Մենք ուրիշի ունեցվածքին չենք աչք գցել, մենք մեր հողերն ենք ուզում վերամիավորել, ուզում ենք ապրել մեր ժողովրդի հետ և միշտ մնալ լավ, բարի հարևաններ ադրբեյջանական ժողովրդի հետ: Ցավոք, որոշ մարդիկ ցանկանում են ծուռ հայելու մեջ ներկայացնել մեր պահանջը: Այդպիսի մարդիկ կան նաև մեր շարքերում, որոնք փորձում են անվստահության սերմեր ցանել երկու հարևան ժողովուրդների միջև: Պատմությունը չգիտի մի օրինակ, երբ հայ ժողովուրդը երբևէ ձեռք բարձրացրած լինի հարևան որևէ ժողովրդի, խաղաղ բնակչության վրա: Մեր ժողովուրդը դրան ընդունակ չէ: Նման հերյուրանքներ կարող են տարածել միայն նրանք, ովքեր դեմ են ժողովուրդների

իրավունքները: Արտահերթ նստաշրջանը ընդունում է հետևյալ որոշումը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
Ժողովրդական դեպուտատների 20-րդ գումարման Ասկերանի շրջանային սովետի 5-րդ արտահերթ նստաշրջանի

20 փետրվարի, 1988թ.  
Լեռնային Ղարաբաղը Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության հետ վերամիավորելու մասին

Լեռնային Ղարաբաղը Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության հետ վերամիավորելու հարցով շրջանի աշխատանքային կոլեկտիվների և հայկական հասարակայնության համար ու թախանձագին պահանջներից ելնելով, «Ադրբեյջանական ՍՄՀ ժողովրդական դեպուտատների շրջանային սովետի մասին» Ադրբեյջանական ՍՄՀ օրենքի 31-րդ և 35-րդ հոդվածներին համապատասխան հրավիրված ժողովրդական դեպուտատների 20-րդ գումարման Ասկերանի շրջանային սովետի 5-րդ արտահերթ նստաշրջանը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ՝

1. Միաձայն հավանություն տալ Լեռնային Ղարաբաղը Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության հետ վերամիավորելու մասին աշխատավորական կոլեկտիվների և հասարակայնության առաջարկությանը, խնդրել ժողովրդական դեպուտատների Լեռնային Ղարաբաղի մարզային սովետի գործկոմին տվյալ հարցը ներկայացնել ժողովրդական դեպուտատների մարզային սովետի նստաշրջանի քննարկմանը և ղեկավարվելով ՍՄՀ Սահմանադրության 78-րդ կետի պահանջների պահանջով, հարց հարուցել Ադրբեյջանական ու Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության Գերագույն սովետների նախագահությունների առջև և խնդրել նրանց համաձայնությունը Լեռնային Ղարաբաղը Հայկական ՍՄՀ-ի հետ վերամիավորելու հարցում:

2. Հանձնարարել ժողովրդական դեպուտատների Ասկերանի շրջանային սովետի գործկոմին՝ խնդրել ՍՄՀ Գերագույն սովետի նախագահությանը նախագահական Սովետական Սոցիալիստական Հանրապետության հետ վերամիավորելու հարցի ուսումնասիրումը և ազգային քաղաքականության լեռնային սկզբունքների համաձայն նրա լուծումը:

Ժողովրդական դեպուտատների Ասկերանի շրջսովետի գործկոմի առաջին տեղակալ՝ Վ. ԼԱԶԱՐՅԱՆ  
Ժողովրդական դեպուտատների Ասկերանի շրջսովետի գործկոմի քարտուղար՝ Ա. ԱՍՐՅԱՆ

Շարունակելի

**Գրի առավ  
ՍՎԵՏԼԱՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆԸ  
Լուսանկարները՝  
Վալերի ՊԵՏՐՈՍՅԱՆԻ**



Ասկերան, փետրվարի 15

հետևյալ հարցը՝ «Լեռնային Ղարաբաղը Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետությանը վերամիավորելու մասին»:

**Մարատ ՀԱԿՈԲՅԱՆՅԱՆ.** Շուրջ 70 տարի Լեռնային Ղարաբաղի


բարեկամությանը: Այդպիսի մտածողներն են հենց էքստրեմիստներ, նացիոնալիստներ, ժողովրդի թշնամիներ, այլ ոչ թե նրանք, ովքեր ցանկանում են ուղղել պատմական սխալը, պաշտպանել իրենց ոտնահարված

ՕՐԱՑՈՒՅՑ

# ՇՆՈՐՀԱՎՈՐ ԾՆՈՒՆՐԻ, ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԲԱՆԱՍԵՐԸ

Նա մեծ էր հողով, արյունով, արմատներ նա ուներ հողում,  
Իր երգերը գեղջուկ նախրցու քրտինքով էր նա ողողում,  
Հանճարեղ երգերում նրա իր երկրի բորբ արևն էր շողում,  
Նա մեծ էր հողով, արյունով, արմատներ նա ուներ հողում:

Ե. ՉԱՐԵՆՑ



Ընթերցում ես թումանյան ու ընկ-  
նում մի աշխարհ, ուր չկա ոչինչ շինծու,  
ուր կան միայն ճշմարտության դրյակ-  
ներ, ցաված սրտի հառաչանքով կախ-  
ված լուսե վարագույրներ, ժողովրդա-  
կան տարերքով ու սովորույթներով մի  
հայկական գերդաստան՝ մեջը անհոգ  
մանկան զվարթ երգ ու խաղ, աշխարհի  
չափ «լեն» սեղան և այդ սեղանին սր-  
տով վառած «հայոց վշտի» անմար  
կանթեր:

Նա աշխարհ եկավ այն ժամանակ,  
երբ անհրաժեշտ էր, երբ դարերի միտ-  
քը խտացված էր արճի պես ու պետք  
է պայթել: Եվ պայթեց... շուրջը տարածելով իմաստության ու հանճարի  
աստվածավառ ցահեր...

Եթե հայ միտքը ծաղկանոց էր, մի կախարդական բուրաստան, ապա  
Թումանյանը եղավ ամենաինքնատիպ ծաղիկը բոլոր այդ մտքերի մեջ:

Այսօր էլ անգերազանց է Թումանյանը, այսօր էլ նա շարունակում է մնալ  
մեր գրականության առաջին էջը պատկառ լուսապայծառ դեմքը, մեր «ազ-  
գային հպարտությունը», մեր բազմադարյան մտքի անմար փարոսը:

Թումանյանն իսկական քաղաքացու պես ապրեց, կրեց իր ժամանակի  
արհավիրքները, զգաց ու հայրենասեր մտավորականի պես սգաց հայոց  
վիշտը, պայքարի դրոշմ պարզած՝ նա դարձավ ժամանակի հուսավառ  
մտքի «խաչակիր ասպետը»: Եվ միայն Թումանյանի պես մտավորականն ու  
մեծ մարդը կարող էր ասել. «Ամենքի հետ ապրում եմ, ամենքի չափ տառա-  
պում»:

Թումանյանը եղավ յուր ժամանակի առանցքը: Պատերազմի ժամանակ  
էլ նա «մերթ ռազմաճակատ էր վազում, մերթ՝ գերիների մոտ»:

«Եվ առօրյա Գովհաննեսը իր կյանքով, ոճով ու ձևով, իր խոսքով ու  
առակով պիտի ապրի Կովկասի հայի հիշողության մեջ և պիտի անցնի  
առասպելական մարդկանց շարքը» (Ավ. Իսահակյան, 1923թ., Վենետիկ):

Մեծ մարդասերը չէր կարողանում ըմբռնել, հասկանալ պատերազմը  
հրահրողների հոգեբանությունը, մղկտում էր գրողի սիրտը, երբ տեսնում էր  
անթիվ-անհամար զոհերին: Բայց և հասկանում էր, որ՝ «մարդկեր գազան  
մարդը դեռ երկար էսպես կը մնա...»: Եվ հեռատես իմաստունը թռիչք կա-  
տարեց դեպի ապագա: Տեսավ, որ հայի հոգին սևացնող այդ պղտոր արյու-  
նը երբեք չի մաքրվի: Արցախյան պայքարը հաստատեց այդ կանխատեսու-  
մը, բայց այսօր էլ կարող ենք կրկնել. «...մարդկեր գազան մարդը դեռ  
երկար կը մնա»:

Երբ մեր սրբազան լեռը՝ Արարատը, օտարության մեջ անվերջ ճչում է,  
երբ մեր ավերակ քաղաքներն այրի կանանց պես հավիտյան սգում են, երբ  
մեր երկիրը ճգնվում է վայրի գազանի թաթի տակ, Թումանյանը հավատում  
է, որ «էսպես չի մնա»:

Թումանյանին ժողովուրդն է աշխարհի բերել, նա այդ ժողովրդի ծոցի  
ջերմությունից է ծլարծակել և դարձել նրա հավատարիմ զավակը, նա սի-  
րում էր իր ժողովրդին և իր ստեղծագործություններում վեր հանում մարդ-  
կանց վիշտն ու հույզերը: Թումանյանն ապրեց այնպես, որ ըմբռնեց աշ-  
խարհը, կյանքի անարդարությունները և ասաց. «Էսօր էլ քե՛ք է անում Քաջ  
Նազարը և ծիծաղում է աշխարհի վրա»:

Ինչ ժամրով էլ ստեղծագործել է Թումանյանը, այն հասցրել է կատարե-  
լության, ինչ սիրել էր՝ սիրվեց, ինչ տվել էր՝ ընդունվեց: Փետրվարի 7-ին  
լրացավ նրա 144 ամյակը...

Թումանյանի պես մարդիկ հազվադեպ են ծնվում: Աստված ամեն ինչ  
կատարյալ է ստեղծել, բայց երկմտում ես. արդյո՞ք մեզ մարդիկ իրավունք  
ունեն մեռնելու: Թումանյանը մեծ բանաստեղծ էր, ամենամեծը, Ամենայն  
Հայոց բանաստեղծը... Բայց նա ասել է. «Առաքինի մարդուց ավելի վսեմ  
բանաստեղծություն չկա»: Անշուշտ, նա եղավ այդ մարդը:

**Հովիկ ԲԱՆԱՅԱՆ**  
**ԱրՊՀ պատմության և**  
**քաղաքագիտության ֆակուլտետ**

# ՆԱ ԱՊՐԵՑ ԿԱՐՃԱՏԵՎ, ՍԱԿԱՅՆ ՓԱՅԼՈՒՆ ՈՒ ԿՐՔՈՏ ՄԻ ԿՅԱՆՔ

Սիրում եմ, նշանակում է՝ ես շնչում եմ,  
Շնչում եմ, նշանակում է՝ ես ապրում եմ...

Վլադիմիր Վիսոցկի

Հունվարի 25-ին Ասկերանի Է. Բարսեղյանի անվան  
միջնակարգ դպրոցի 11-րդ դասարանում կազմակերպ-  
վեց դաս-միջոցառում՝ նվիրված Վլադիմիր Վիսոցկու  
ծննդյան 75-ամյակին: Ներկա էին դպրոցի տնօրենու-  
թյունը, ուսուցիչներ:

Բացման խոսքով հանդես եկավ ավագ դպրոցի ռու-  
սաց լեզվի ուսուցչուհի Լիանա Կարապետյանը.

- Խորհրդային տարիներին մեր սերունդը բախտ չի  
ունեցել դպրոցում ուսումնասիրելու Վլադիմիր Վիսոց-  
կու կյանքն ու գործունեությունը: Սակայն ես իմ ավագ  
եղբորից հաճախ լսում էի նրա երգերը, և իմ մեջ ակա-  
մայից հետաքրքրություն ու սեր էր առաջանում երգչի  
հանդեպ: Որոշ ժամանակ հետո հասկացա, որ նա նաև  
գերազանց դերասան է, ու լիովին սիրեցի նրա արվես-  
տը: Այսօրվա սերունդը բացառիկ երջանիկ է, որ կարող  
է ճանաչել հայտնի մարդուն, ծանոթանալ նրա գործու-  
նեությանը:



ներն էին անմա-  
ցորդ այրումն ու  
ստեղծագործական  
կիրքը, ուժն ու հա-  
մարձակությունը,  
բացարձակ անկեղ-  
ծությունն ու անմի-  
ջականությունը: Նա  
գիտեր, որ իր խոսքը  
զուր չի անցնի, և խո-  
սում էր ոչ միայն իր  
անուկից ու ոչ այն-  
քան իր համար: Ըն-  
բոստ, շիտակ, անձ-  
նագոհ ու մարտնչող  
բանաստեղծը քչե-  
րից մեկն էր, որ հա-  
մարձակ խոսում էր  
այնպիսի բաներից, իր  
ստեղծագոր-  
ծությամբ ընդվզում  
մեր կյանքն ու առօրյան  
աղճատող, հոգիներ  
պղտորող այնպիսի  
երևույթների դեմ, որի  
հա-



Այսօր բանաստեղծը, երգիչն ու դերասանը կդառ-  
նար 75 տարեկան: Նա ոչ այնքան մշակութային, որքան՝  
սոցիալ-տնտեսական և բարոյահոգեբանական խոշոր  
երևույթ էր: Նրա խոսքում ծայր թևածուր էր ամբողջ երկ-  
րում՝ որպես բողոքի գեղարվեստական արտահայտու-  
թյուն: Վիսոցկու երգերում կերտված կերպարներից յու-  
րաբանջյուրը նրա կյանքի սեփական առասպելն է հյու-  
սում: Նրա կյանքը, որ կենդանության օրոք արդեն  
առասպել էր դարձել՝ այժմ համակ առասպել է ու կա:

Աշակերտները ներկայացրին բանաստեղծի և հայտ-  
նի երգչի կյանքն ու գործունեությունը:

Վլադիմիր Վիսոցկին ծնվել է 1938թ. հունվարի 25-  
ին, Մոսկվայում: Բացառիկ երաժշտական լսողություն  
ունենալով՝ ստացել է երաժշտական կրթություն և սովոր-  
ել դաշնամուր նվագել: Առաջին բանաստեղծությունը  
գրել է 8-րդ դասարանում, ու դրան հաջորդել են բազում  
ստեղծագործություններ, որոնք նվաճել են միլիոնավոր  
մարդկանց սրտերը: Նրա ստեղծագործությունները լս-  
վում էին ամբողջ երկրում, համարյա ամեն հարկի տակ՝  
օրեցօր ավելի մեծ հետաքրքրություն առաջացնելով  
դեպի այդ զարմանալի անձը: Ամենատարբեր մասնա-  
գիտության և զբաղմունքի, ամենատարբեր տարիքի  
մարդիկ առաջին իսկ հնչյուններից ճանաչում են նրա  
անսովոր, հավատ ու վստահություն ներշնչող հզոր ձայ-  
նը, որը մերթ խաղաղ է ու մեղմիկ, մերթ պոռթկում ու  
ահեղ, մերթ անհոգ ու թեթև... Նա երգում է պատերազմի  
և սիրո մասին, հումորով շաղախված կենցաղային հա-  
վաստի պատմություններ հորինում, փիլիսոփայական  
խորը մտորումներ հանձնում թղթին, և ամենուր առկա է  
պրեզիայի շունչը, բանաստեղծական թարմ, յուրովի  
մտածողությունը: Նրա անհատականությամբ զարմա-  
նում և հիանում էին, նրա ողջ ստեղծագործական տա-  
ղանդի և ապրած կյանքի առջև ակնածալից գլուխ էին  
խոնարհում շատ ու շատ մարդիկ: Գրեթե բոլոր մուսա-  
ների հովանու տակ ծնված բազմաշնորհ այս մարդու  
ստեղծագործությունների ամենաբնորոշ հատկանիշ-

մար ոչ մեկի գլուխը չէին  
շոյում: Սակայն Վիսոցկին  
այլ կերպ չէր է կարող,  
որովհետև էությանը,  
խառնվածքով, հոգեկան  
կերտվածքով մարտիկ էր՝  
ճշմարտության ու արդա-  
րության երդվյալ զինվոր:

Միջոցառման մասնա-  
կիցները լսեցին նաև Վի-  
սոցկու երգերը, և դասա-  
սենյակում թևածեց նրա  
հուժկու և խանձված ձայնը,  
որին ձայնակցում էին դա-  
սարանի տղաները: Դաս-  
միջոցառումն ավարտվեց  
հեղինակի վերջին բանաս-  
տեղծությամբ, որը ներկա-  
յացրեց ուսուցչուհի Լիանա  
Կարապետյանը:

Անշուշտ, տպավորիչ միջոցառում էր կազմակերպ-  
վել: Գնահատելին այն է, որ աշակերտները գիտակցե-  
ցին օրվա խորհուրդը: Այսօր նրանց համար բացա-  
հայտվեց մի նոր աշխարհ, մի մեծություն, նրանք ճանա-  
չեցին բացառիկ տաղանավոր մի մարդու, և համոզ-  
ված ենք, որ սիրեցին նրա արվեստը:

Մեծ է ռուսաց լեզվի ուսուցչուհի Լիանա Կարապետ-  
յանի նվիրված աշխատանքը, նրա մասնագիտական  
վարպետությունը: Առհավատյան կայացած դաս-միջո-  
ցառումն էր:

**Կարինե ԲԱՆԾԻՅԱՆ**

## Վ. Վիսոցկու վերջին բանաստեղծությունը

\*\*\*

Այլոց լույս տալով՝ այրվում եմ, այրվում,  
Իսկ ուտիճները նեղլիկ ճեղքերում  
Իրար են խառնվել՝ մի՛ լուսավորեք,  
Մեզ հաճելի է սողալ խավարում:

Այլոց լույս տալով՝ այրվում եմ, այրվում,  
Իսկ մի ծեր չղջիկ օճորքին զարկվում  
Ու փնթփնթում է,՝ էհ, մեզ ի՞նչ օգուտ...  
Լուռ կկախվեի ես այս խավարում:

Այլոց լույս տալով՝ այրվում եմ, այրվում...  
- Այրվո՞ւմ ես,- ասաց ծղրիղը մթնում,-  
Իմացիր՝ որքան իրաշալի է -  
Կայրվես՝ մոխիրդ կմնա հողում:

Ողջակիզվելով՝ լուսավորում եմ...  
Ո՞ւր եք,՝ աչքերիս հետ զգվող աչքեր,  
Որոնց համար ես ամմարելի եմ...  
Այլոց լույս տալով՝ ինքս ինձ այրում եմ:

**Թարգմ.՝ Վ. Գասպարյանի**

ՃՆՈՐԿԱՎՈՐԱՆԵ

ԽՈՍԷ Ի ԽՈՐՈՑ ԱՐՏԻ



Հաճելի է, երբ կոլեկտիվում քո մասին դրական արձագանքներ են խոսում: Իսկ հորեյսանի առիթով հրապարակային հնչեցրած բարեմաղթանքները սրտաբուխ հարգանքի ու սիրո արտահայտություն են, որից կարող ես միայն շոյվել: Դա վաստակի իրական գնահատումն է նրանց կողմից, ում հետ շփվել ես երկար տարիներ, կիսել բոլոր դժվարությունները, ծովվել նրանց հոգսերին ու խնդրություններին: Միով բանի՜ դարձել ես քեզ շրջապատող աշխարհի մի էական մասնիկը:

Այս ամբողջի խտացումը կա Արցախի պետական լրատվական կենտրոնի կենսաբանության ամբիոնի շնորհավորանքի խոսքում առ իրենց գործընկերուհին՝ Ասնելուհա Գրիգորյանը, ով արդեն երկու տասնամյակից ավելի է, ինչ դասախոսուհի է Արցախի մայր բուհում: Բավականին հարուստ է Ա. Գրիգորյանի կենսագրությունը՝ հագեցած ուշագրավ տվյալներով: Ավարտելով ԽՍՀՄ-ի Երևանի պետական համալսարանի կենսաբանության ֆակուլտետը, որն ավարտելուց հետո 1976-ին աշխատանքի է ընդունվել Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի կենսաբանության և քիմիայի բաժնում՝ որպես լաբորանտ՝ միաժամանակ կատարելով դասախոսական աշխատանք: Այնուհետև ստիպված է եղել տարբեր ժամանակներում աշխատել Մարտակերտում (պատանի բնասերների կայանի տնօրեն, շրջ-

կենտրոնի թիվ 1 դպրոցի ուսուցչուհի) և Հադրութում՝ դարձյալ կրթական բնագավառում: Այդ տեղափոխությունները պայմանավորված էին անուսուցիչների գործերի մարմինների սպա, Արցախում ճանաչված դեմոկրատիկ գործի փոփոխման Ստեփանյանի ծառայության բնույթով: Իսկ երբ անուսուցիչը կրկին տեղափոխվեց Ստեփանակերտ (դա 1991 թվականին էր), Ասնելուհա Գրիգորյանն աշխատանքի անցավ ԱրՊՀ կենսաբանության ամբիոնում, որտեղ էլ առայսօր աշխատում է:

Գիտամանկավարժական գործունեության ընթացքում, 2006թ. նա պաշտպանել է ատենախոսություն և ստացել կենսաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Հետևանք է 16 գիտական հոդվածների ու մեկ ուսումնասիրողական ձեռնարկի: ԱրՊՀ 30 և 40-ամյակների կապակցությամբ արժանացել է համալսարանի հուշանշանների, իսկ 2005-2006 ուսումնական տարվա ընթացքում աշխատանքային պարտականությունները բարեխղճորեն կատարելու համար պարգևատրվել է բուհի պատվոգրով:

Բայց ամենամեծ պարգևը Աստծո կողմից շնորհված, նրա չորս զավակներն են, սիրասուն թոռները, որոնք ամբողջացնում են 60-ամյակն արդեն բոլորած հայուհու կյանքի իմաստը: Իր բոլոր պարտականությունների մեջ՝ լինի աշխատանքում թե տանը, Ա. Գրիգորյանը շարունակում է մնալ անխոնջ մվիրյալ ու ինքն իր համրեպ մշտապես պահանջելու:

Անշուշտ, առիթը պատեհ է՝ միանալու Ասնելուհա Գրիգորյանի կոլեկտիվի շնորհավորանքին ու մաղթելու առողջություն և հաջողություններ հետագա բոլոր նախաձեռնություններում: Եվ նրան անձնապես ճանաչելու պատիվն ունենալով՝ դա անում ենք ամենայն սիրով:

«Լուսարարի» խմբագրակազմ

ԱՆՄԱՑՈՐԴ ՍԻՐՈՎ



Երջանիկ է այն մարդը, ով հետադարձ հարձակումներով անցած տարիներին գործունեություն է ցուցաբերում: Այսպես, Ստեփանակերտի հ. 5 հիմնական դպրոցի փոխտնօրեն Ռեմա Ներսիսյանը:

Սերունդների գոհ ու երջանիկ դեմքեր, ովքեր երախտապարտ են ստացած հոգու ջերմության ու անմնացորդ սիրո համար:

Նման մարդկանց շարքում իր արժանի տեղն ունի Ստեփանակերտի հ. 5 հիմնական դպրոցի փոխտնօրեն Ռեմա Ներսիսյանը:

Ծնվել է 1963թ. հունվարի 26-ին, Ստեփանակերտ քաղաքում, ծառայողի ընտանիքում: Միջնակարգ կրթությունը ստացել է Ստեփանակերտի հ. 1 միջնակարգ դպրոցում՝ 1970-1980թթ.: Բարձրագույն կրթությունը ստացել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի հայոց լեզու և գրականություն ֆակուլտետում: Աշխատանքային կենսագրությունը սկսել է 1980թ., Ստեփանակերտի Դարմետաքսկոմբինատին կից հ. 3 մտեր-մանկապարտեզում՝ աշխատելով որպես դաստիարակչուհի: 1989թ. տեղափոխվում է հ. 5 միջնակարգ դպրոց՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի: 1996-2009թթ. զբաղեցրել է դաստիարակչական աշխատանքների գծով փոխտնօրենի պաշտոնը: 2009-ին նշանակվել է ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ:

Գործի հմտություն, կազմակերպչական տաղանդ, մվիրուն սիրած գործին, մվիրվածություն, սեր ու հարգանք դեպի իր սաները, կարգապահություն, հոգատար վերաբերմունք կոլեկտիվի անդամների հանդեպ, կիրթ, գուսպ վարք ու գործունեություն: Ահա այն ոչ լրիվ որակներն են, որ պետք է վերագրել նրան: Դպրոցն ու դպրոցավարությունը նրա կենսակերպն է: Յուրաքանչյուր գործի իրականացման ու արդյունավետության համար կարևորագույն է համարում անմնացորդ սիրով մվիրվածությունը, անդադար աշխատանքը: «Մանկավարժը պետք է աշխատի եռանդով՝ լինի խստապահանջ ինքն իր նկատմամբ, հավատարիմ՝ իր մասնագիտությանը»,- ասում է մատաղ հոգիների անխոնջ մշակ Ռ. Ներսիսյանը:

Սերունդների գոհ ու երջանիկ դեմքեր, ովքեր երախտապարտ են ստացած հոգու ջերմության ու անմնացորդ սիրո համար:

Նման մարդկանց շարքում իր արժանի տեղն ունի Ստեփանակերտի հ. 5 հիմնական դպրոցի փոխտնօրեն Ռեմա Ներսիսյանը:

Ռեմա՛ն ջերմություն ու խինդ, քնքշանք ու զգվանք կա նրա վերաբերմունքում: Նման վերաբերմունքով նա ուսման հիմնաքարն է դնում ու տարեցտարի ամուր, շատ ամուր կռում ու կոփում երեխայի կամքը, թափանցում նրա ներաշխարհը, իր համար տեղ անում ու քայլում, քայլում...

Այսպես նա կարողանում է թափանցել աշակերտի հոգին ու գտնել բանալին՝ հոգին տանող բանալին, որը բոլորին էլ, որ հաջողվում է: Նրա՛ մարդկանց հետ աշխատելու ձևերն ու հմտությունները, գեղեցիկ ու տեղին խոսքը, մարդկային հմայքը նպաստում են դպրոցում մանկավարժական ու աշակերտական կոլեկտիվների համերաշխ ու փոխըմբռնումով գործունեությանը:

Իր աշխատասիրության, ընկերասիրության և անաչառության, մարդկային անբասիր ու շռայլ խառնվածքի համար վայելում է աշակերտների, գործընկերների ու ծնողների սերն ու հարգանքը: «Նա երբեք ծայրը չի բարձրացնում: Գիտի խելամտորեն հարթել այն կոնֆլիկտները, որ անխուսափելիորեն ծագում են դպրոցական առօրյայում»,- արտահայտվում են նրա գործընկերները:

Սիրելի՛ մայրենի մվիրյալ, լավի ու բարու սերմնացան, թող կյանքիդ ճանապարհը երկար ծովի, ու արևոտ օրերը շատ լինեն:

Թող առողջությունն ու հաջողությունները թագավորեն քեզ՝ մարդկային վեհ արժանիքներով համեմված քո հոգու ջերմությունը սաներիդ անապառ բաշխելու, շռայլելու համար:

Քեզ սեր ու հարգանք և զարման վարդերի անանց թարմություն...

Շնորհավոր 50-ամյա հորեյսանդ, սիրելի գործընկեր:

Լավագույն մաղթանքներով՝ Ստեփ. հ. 5 հիմն. դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

ՀԱՅԵՐԵՆԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Վերջերս Կրասնոդարում էի: Գիտեի, որ տեղի հայկական համայնքն ակտիվ գործունեություն է ծավալում:

Հետաքրքրվեցի, աղջիկս՝ բանասիրական գիտությունների թեկնածու Երազիկ Հարությունյանը, որ ակտիվ մասնակցություն ունի համայնքում ծավալվող բոլոր գործերին, բավարարեց իմ հետաքրքրասիրությունը: Ես գիտեի, որ քաղաքում հայկական եկեղեցուն կից գործում է «Խաչքար» հայկական դպրոցը, որտեղ դասավանդում ու ղեկավարում է աղջիկս: Դպրոցում աշխատում են երեք ուսուցչուհիներ՝ Երազիկը, Արշալույսը, Մելսիդան: Սա մի յուրահատուկ դպրոց է, որը բոլորովին նման է մեր համարակրթական դպրոցներին: Այստեղ հաճախում են տարբեր տարիքի ու մասնագիտության ռուսախոս հայեր, որոնք ջանում են վերականգնել իրենց ինչ-ինչ պատճառներով կորցրած մայրենին: Նրանք ներկայումս են խմբերով: Դպրոցում կան մի քանի խմբեր: Փոքրերի խումբն են հաճախում 4-5-րդ դասարանների ռուսախոս աշակերտներ, որոնց մեսրոպյան տառերն ուսուցանում է Արշալույս Եգանյանը:

Միջին տարիքի խմբերի հետ աշխատում է Մելսիդան: Իսկ 2-3 խմբի, որոնք կազմված են ուսանողներից, տարբեր բնագավառներում աշխատողներից, պարապում է Երազիկ Հարությունյանը: Աղջկաս պատմածն ինձ այնպես գայթակղեց, որ ցանկություն հայտնեցի լինել այդ դպրոցում և

տեսնել, թե ինչպես են ընթանում աշխատանքները:

Ու ես դպրոցում էի: Դաս էր Արշալույս Եգանյանի խմբում: Ներկայացա ուսուցչուհուն որպես վաստակաշատ մանկավարժ և խնդրեցի ներկա լինել նրա դասապրոցեսին: Նա սիրով ընդունեց ինձ, և ես տեսա այն երեխաներին, որոնք ապրում էին ռուսական միջավայրում, սովորելով ռուսական դպրոցում, մոռացել էին իրենց մայրենին և ծնողների ու իրենց ցանկությամբ կամենում էին հայաճալ:

Գրատախտակին փակցված էին սովորած տառերը: Երեխաներն արդեն բավականին տառեր էին սովորել ու նրանցով խոսում էին: Ուսուցչուհին մեծ խանդավառությամբ խոսեցնում էր նրանց, խրախուսում երկու լեզվով՝ ապրես, մալարեց:

Ինչքա՛ն դժվար աշխատանք է կատարում ուսուցչուհին՝ ռուսախոս այդ հայ երեխաներին խոսեցնելու համար:

Ահա «ս» տառը, որի մոտ սար է նկարած: Երեխան ասում է. «Սա սար է», ուսուցչուհին ավելացնում է. «Իսկ այդ սարը մեր Արարատն է»: Եվ փոքրիկ հայուհին կրկնում է. «Սա մեր Արարատ սարն է» ու ժպտում, որ ստացվեց:

Բանավոր խոսք է կազմակերպում Արշալույսը: Երեխաներն իրար հարցնում են. «Դու ո՞վ ես»: Պատասխանը լինում է. «Ես հայ եմ»: Ես ինձ այնքա՛ն լավ էի զգում, որ ավստոացի, երբ դասի ավարտը եկավ:

Ավագ խմբում հայոց պատ-

մությունից բաց դաս էր: Լսարանը լեփ-լեցուն էր: Մասնակցում էին երեք ավագ խմբերի բոլոր սովորողները: Ուսուցչուհին՝ Երազիկը, համձնարարել է օգնել է, որ մի քանի սովորողներ զեկուցեն հայ ժողովրդի պատմության մասին՝ նրա ծագումից մինչև մեր օրերը: Առաջադրանքը կատարված էր: Լսարանում կախված էին Հայաստանի հին ու նոր քարտեզները: Ձեկուցողներն իրար շարունակելով՝ մանրամասն պատմում էին հայ ժողովրդի անցած ուղու մասին: Չնայած այդ ամենը ասում էին ռուսերեն, բայց լսարանը շնչում էր հայերեն: Իսկ երբ Բորյան խոսեց եղեռնի մասին, բոլորը ոտքի կանգնեցին, ու նրանց աչքերում արհավիրքի ցավն էր՝ արցունքը:

Մարինի բաժինը լավ էր: Նա խոսեց այսօրվա Հայաստանի ծաղկման ու բարգավաճման մասին, այն մասին, որ վերջապես աշխարհն իմացավ, որ հայը եղել է, կա ու կլինի իր բոլոր բարձր ու վսեմ արժանիքներով:

Եկեղեցու մոտ կառուցվում է նոր դպրոցական շենք, որտեղ ուսուցումը տարվելու է երկու լեզվով՝ ռուսերեն և հայերեն:

Լավ է, որ հայկական համայնքի հովանավորներն ամեն ինչ անում են, որ համայնքը լիաթոք շնչի:

Իմ տեսածն այնքան շատ էր և ուրախալի, որ չէի կարող մատուցել չիսնձնել թղթին:

Էմմա ԲԱԼԱՅԱՆ  
Գ. Աշան

ԻՐ ԳՈՐԾԻ ՆՎԻՐՅԱԼԸ



Ս եր զ ե յ Գասպարյանի՛ն՝ որպես եռանդուն և պահանջկոտ տնօրենի, Ասկերանի շրջանում և համարապետությունում շատերն են ճանաչում: Ծանաչում են որպես լավ մասնագետի և իր հատուկ կենսակերպն ունեցող տնօրենի:

Սերգեյ Գասպարյանը ծնվել է 1963թ. հունվարի 2-ին, Ստեփանակերտ քաղաքում: Ավարտելով հ. 1 միջնակարգ դպրոցը՝ ընդունվել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի «Ընդհանուր տեխնիկական առարկաներ» բաժինը: 1986թ. ավարտել է և Շչանակվել Ասկերանի շրջանի Սարուշենի միջնակարգ դպրոցում՝ որպես ուսուցիչ: Նույն տարում էլ ամուսնացել է, և նորաստեղծ ընտանիքը տեղափոխվել է գյուղ:

Ամբողջովին մվիրվելով մանկավարժի դժվարին, վեհ ու պատասխանատու գործին՝

նա աշխատել է սկզբում որպես ուսուցիչ, ապա՝ ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով փոխտնօրեն: 1989թ. աշխատում է որպես տնօրեն: Պատասխանատու, ընդամառող՝ իր խորհուրդներով ու դիտողություններով նա միշտ օգնում է սկսնակ ուսուցիչներին՝ դառնալով նրանց աջակիցը, լավագույն բարեկամն ու օգնականը:

Ս. Գասպարյանը մասնակցել է Արցախյան ազատամարտին և պարգևատրվել «Արիության մեդալով», բազմիցս արժանացել է Ասկերանի շրջվարչակազմի և կրթության բաժնի գովասանագրերին: 2012թ. պարգևատրվել է Վարչապետի մեդալով:


Այս տարի լրացել է հարգարժան տնօրենի 50-ամյակը: Դպրոցի ուսուցչական կոլեկտիվը ջերմորեն շնորհավորում է նրան հորեյսանի առթիվ՝ մաղթելով առողջություն, հաջողություններ անձնական կյանքում և աշխատանքում, ուժ և կորով՝ շարունակելու մանկավարժի՝ իր դժվարին ու շնորհակալ աշխատանքը:

Թող թոռներով ու ծոռներով շրջապատված, հանգիստ մթնոլորտում անցնեն օրերը, ուրախություն, խինդ ու ժպիտ պարուրի դեմքը, միշտ այդպես լինես, ամրակուռ ու առողջ ոգով: Ծնունդդ շնորհավոր, տնօրեն:

Մարուշենի միջնակարգ դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

ԽՈՍՔ ԿԻՋԱՏԱԿԻ

ԱՌԵՎԱՆԳՎԱԾ ԼՈՒՅԱԸ... ԶՎԵՐԱԴԱՐԶՎԵՑ



Առաջին հանդիպումից խիստ ու քաջախոս մարդու տպավորություն թողնող խաբուսիկ հայացքը ոմանց կարող էր երկմտելու առիթ տալ և դժվարությամբ ընթերցելի դարձնել բնավորությունը:

Սակայն փորձերի հաղորդակցվել ու ցանկացած թեմայով անկաշկանդ գրույցի բռնվել, երկար ժամանակ չէր պահանջվի համոզմունքը հստակեցնելու, նրան մտերմանալու համար: Զետո հաճելի գրուցակից լինելու հանգամանքն ամենատարբեր առիթներով քեզ հնարավորություն կընձեռեր մոտիկից ճանաչել նրան ու նորոգել կարծիքը: Զափազանց զգայուն, ուշադիր վերաբերմունքից քեզնից անկախ կզգաստանայիր ու կողքիդ հոգատար, շիտակ բարեկամիդ տաք շունչը կզգայիր: Կհամոզվեիր, որ էությանը շեշտված մտավորական է, ավանդապահ արցախցի, խորհող ու անհանգիստ, արդարամիտ ու անաչառ, միշտ լավատես ու համբերատար, բանաստեղծի խոսքերով՝ «հողոտ, հողածին»...

Երբեմն տարիների հեռվից փորձում են հայացք ձգել ու ժողովել դպրոցական այն անմոռաց օրերի պատահիկները, որոնք սիրելի իմ ուսուցիչների ամվան հետ են կապված ու արթուն են պահում հիշողություններս: Ու նրանց շարքում իրենց վաստակով ու հեղինակությամբ ոչ քչերն են առանձնանում: Մարդիկ, ովքեր անմնացորդ նվիրվել են մանկավարժի պատվաբեր, դժվարին գործին, ու տառապանքից օր օրի նրանց մազերին իջնող ճերմակն ավելի է խտացել: Երիտասարդ, ավունով լի տարի-

ներն աննկատ սահել, հուշ են դարձել՝ որպես մասունք հավերժվելով դպրոցի տարեգրության մեջ, աշակերտների հիշողություններում: Ու աչքերի լույսն անգամ չեն խնայել լիառատ բաշխելու, մեր ճամփան լուսավորելու: Վառվել են, այրվել մոմի պես, սակայն չեն սպառվել ու շարունակ ջերմացրել են մեր հոգիները:

Այդ եզակի մարդկանց թվին է պատկանում Ասկերանի շրջանի Այգեստանի (Բալուջա) միջնակարգ դպրոցի նախկին տնօրեն, ԼՂՀ վաստակավոր մանկավարժ Արկադի Գրիգորյանը: Ավա՛ղ, վերջերս հանկարծախա մահը ծննդյան 80-ամյակի շեմին բախեց նրա դուռը... Այս խոսքերը գուցե պիտի գրվեին հոբելյանի առիթով, մանավանդ, երբ նա մարդկային ոչ ժլատ արժանիքների տեր էր և հասարակության շրջանում օգտվում էր հեղինակությունից, և... մահախոսականի փոխարեն որոշեցի իբրև հիշատակի խոսք՝ ընթերցողներին պատմել սիրելի ուսուցչի մասին...

Դպրոցում աշխարհագրություն և աստղագիտություն էր դասավանդում: Այն ուսուցիչներից էր, որն անհատական վերաբերմունք և հետաքրքրություն էր դրսևորում աշակերտների նկատմամբ, ուսուցանելուց բացի փորձում էր ուսումնասիրել երեխայի հոգեկան աշխարհը և մոտիկից ճանաչել իր սաներին, մերձեցման ուղիներ փնտրել ու բարոյապես աջակցել նրանց:

Տարիքային առումով լինելով երիտասարդ, էներգիայով լեցուն և կազմակերպչական մեծ ընդունակությունների տեր, նա հաճախ էր շփվում բարձր դասարանցիների հետ, անհրաժեշտության դեպքում խորհուրդներ տալիս, օգնության ձեռք մեկնում, քաջալերում ուշադրության արժանի նրանց ձեռնարկումները: Իսկ երբ Ա. Գրիգորյանը մեր դասարանի դասուղեկ դարձավ, մեր մտերմությունն ավելի խորացավ: Ու ազատ ժամերին նա մեր հոգուերի, մեր ցավերի և ուրախությունների հետ էր: Ավագ ընկերոջ, հարազատի պես հետաքրքրվում էր մեր ճակատագրով, ու նրա սրտացավ վերաբերմունքը, ոգևորող, հորորորող խոսքն անգամ մեզ ուժ ու կորով էին

հաղորդում, օգնում ճիշտ կողմնորոշվելու կյանքում:

Արցախում անուն հանած լավագույն մասնագետներից էր, բացառիկ կարողություններով ու նախասիրություններով օժտված անձնավորություն, բարձր կուլտուրայով ու հմայքով: Իսկ նրա նկատմամբ սովորողներիս հարգանքն ավելի էր թանկանում, որովհետև կինը՝ Անյա Դանիելյանը ևս դասավանդում էր մեզ ու դպրոցում մաթեմատիկա առարկայի արտակարգ մասնագետ էր, անչափ զուսպ ու խստապահանջ ուսուցչուհի: Ի տարբերություն Ա. Գրիգորյանի՝ աշակերտներս մի տեսակ նրանից քաշվում ու ամաչում էինք:

Մի օր հանրահաշվի նրա դասին համարձակվեցի Ավետիք Իսահակյանի պոեմների ժողովածուն պայուսակից հանել ու ընթերցել: Նա նկատեց ու սաստող հայացքով հասկացրեց սթափվել: Շատ չանցած, ես աչք գողացա և գիրքը նորից հանեցի: Ուսուցչուհին աննկատ մոտեցավ ինձ, ու նստարանին Իսահակյանի գիրքը տեսնելով, ընդամենը մտերմիկ հորդորեց. «Չանրահաշվի դասին այդ ինչն՞ էր քեզ հարկավոր, իբր տանը չէ՞ս հասցնում ընթերցել: Իսահակյանի գիրքը չլինե՞ր՝ քեզ դասարանից դուրս կհանե՞ի...»: Այդ պահից նրա նկատմամբ հարգանքս ավելի խորացավ:

Տարիներ անցան: Ավարտեցինք միջնակարգն ու հրաժեշտ տվինք դպրոցին, սիրելի ուսուցիչներին: Կյանքն ամենատարբեր ուղիներով ու հասցեներով տարավ շրջանավարտներիս, սակայն երբեք չանջրպետվեցին մեր փոխհարաբերությունները:

Ընդհակառակը, Արկադի Գրիգորյանի՝ դպրոցի տնօրեն նշանակվելու հանգամանքը մեզ ավելի կապեց միմյանց: Այցելելով գյուղ՝ դժվար չէր նկատել նրա այն ձեռնարկումները, որոնք նպատակաուղղված էին դպրոցի բարգավաճմանն ու հեղինակության բարձրացմանը: Նրա մանկավարժական հարուստ փորձն ու գիտելիքները, ղեկավարին հատուկ պահանջկոտությունն ու որոնումները ցանկալի արդյունք էին տալիս: Դպրոցն ապահովվել էր նյութատեխնիկական հարուստ բազայով, մասնաշենքը, մարզադահլիճի հետ մեկ-

տեղ՝ հիմնամորոգվել: Իսկ մանկավարժական և աշակերտական կուլտիվներին համախմբելու, նրանց պատասխանատվությունը բարձրացնելու, մանկավարժության, գիտության ու արակտիկայի նորագույն նվաճումները դպրոցում տարածելու հանգամանքը վճռորոշ քիչ նշանակություն չունի տնօրենի դիմանկարն ամբողջացնելու առումով:

Թեկուզև այն փաստը, որ Արկադի Գրիգորյանը 12 տարի գլխավորել է Այգեստանի միջնակարգը, 15 տարի անընդմեջ կատարել Ասկերանի շրջաօկոթաբաժնի դպրոցական տեսչի, այնուհետև՝ մեթոդկարիների վարիչի, լուսավորության աշխատողների արհմիության շրջանային խորհրդի նախագահի պարտականությունները, նրա մանկավարժական երկարամյա գործունեությունը (իսկ այդ ոլորտին Ա. Գրիգորյանն իր կյանքի ավելի քան 40 տարիներն է նվիրել), անշուշտ, ընթերցողին շատ բան կհուշի: 1993-1994 ուսումնական տարում էր, երբ ԼՂՀ ուսուցիչների վերապատրաստման ու ասեստավորման հանրապետական ինստիտուտի գիտխորհրդի որոշմամբ ուսումնասիրվեց Ա. Գրիգորյանի առաջավոր փորձը և առանձին գրքույկով տարածվեց հանրապետության դպրոցներում՝ պրպտող, վաստակաշատ ուսուցչի հեղինակությունն ու համբավ բերելով նրան: Նա Արցախում առաջիններից մեկն է արժանացել նաև «Ժողովրդական լուսավորության գերազանցիկ» բարձր կոչմանը: Փորձառու տնօրենի ու մանկավարժի համոզմամբ՝ միասնական պահանջներ ներկայացնելը, սկսնակներին օգնություն ցույց տալը դեռևս քիչ է սովորողների շրջանում բարձր առաջադիմության հասնելու համար: Ըստ նրա՝ մանկավարժական այն կուլտիվներն են հասնում լուրջ հաջողությունների, որտեղ խաղաղ, առողջ ու գործարար մթնոլորտ է տիրում:

- Ուսուցիչը, հատկապես դասուղեկը, երեխայի երկրորդ ծնողն է,- ասում էր Ա. Գրիգորյանը: Դասուղեկի պարտքն է ստեղծել դասարանական միասնական համերաշխ կուլտիվ: Նա պարտավոր է ուսումնասիրել դպրոցականի հոգեկան աշխարհը,

տղիալական վիճակը և մարդկայնորեն գորակցել, լույս սփռել նրա ճանապարհին... Իսկ թեք աշակերտը հավատաց ու վստահեց իր ուսուցչին, սիրեց նրան, կարծում է, մտերմությունը երկար կշարունակվի: Միմյանց չեն մոռանա, և հպարտանալու առիթներ շատ կլինեն...

Ճշմարիտ խոսքին ինչպե՞ս կարող ես չհավատալ: Մանավանդ որ, արված խոստովանությունը լիովին վերաբերում է Արկադի Գրիգորյան-ուսուցչին ու նրա սաներին, ովքեր այնքան պայծառ ու մնայուն հուշեր ունեն դպրոցի հետ կապված: Վերջերս մի առիթով ծանոթացա նրա տնօրենության տարիներին դպրոցում աշխատած մանկավարժների գրավոր կարծիքներին, որոնցից շատերը նրա երբեմնի սաներն են ու վաստակաշատ ուսուցչի և ղեկավարի աջակցությամբ են իրենց ճանապարհը հարթել, և ինձ համար ավելի պարզորոշ ուրվագծվեց Ա. Գրիգորյանի կերպարը: Բոլորը միանշանակ բարձր են գնահատում նրա վաստակը, մարդկային արժանիքները և համարում, որ Արկադի Գրիգորյանի անունը ևս պիտի տեղ գտնե՞ր «20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժների» ցուցակում: Բայց մի՞թե սաների գնահատականը, հանրապետության վաստակավոր ուսուցչի բարձր կոչումն ամենաազնիվ ու անկեղծ բնորոշումը չեն սիրելի մանկավարժի անցած ճանապարհի... Երբ իմացա ծանր վիրահատություն է տարել, ու տեսողությունը վերականգնելու ակնաբույժների փորձերն արդյունք չեն տվել, շատ տխրեցի: Մինչդեռ հավատում էի հրաշքի գործյանը՝ համոզված, որ ավելի քան 15 տարի առաջ առևանգված նրա աչքերի լույսը մի օր պիտի վերադարձվի իր օրինավոր տիրոջը: Մանավանդ որ, նրա խամրած աչքերին շատ էին պետք լույսն ու ջերմությունը... Ավա՛ղ, առևանգվածն այդպես էլ չվերադարձվեց:

Թող լույսն այդ հավերժանա գոնե նրա պայծառ շիրմին...

Դավիթ ՄԻՔԱՏԵԼՅԱՆ

ՆԱ ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ ԷՐ ԳԻՇՏ ԱՊՐԵԼ



Յունվարի 29-ին ծանր ու անդառնալի կորուստ կրեց Ասկերանի շրջանի Բերքածորի հիմնական դպրոցի մանկավարժական կուլտիվը: Կյանքի 53-ր տարում կյանքից հեռացավ բոլորիս կողմից

հարգված ու սիրված, մեր ազնիվ ու բարի ավագ գործընկերը՝ Շուշանիկ Ասրյանը՝ խորը կսկիծ ու վիշտ պատճառելով հարազատներին, բարեկամներին ու բոլոր նրանց, ովքեր ճանաչում էին իրեն:

Շուշանիկ Բալաբեկի Ասրյանը ծնվել է Շահումյանի շրջանի Ղարաչինար գյուղում, 1959թ. հուլիսի 18-ին: 1966թ. ընդունվել է Ղարաչինարի միջնակարգ դպրոց, որն ավարտել է 1977թ.: Նույն թվականին ընդունվել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի պատմության բաժինը, որն ավարտել է 1981-ին: Ինստիտուտն ավարտելուց հետո աշխատանքի է անցել Մարտակերտի շրջանի Գասանդաջ գյուղի միջնակարգ դպրոցում՝ որպես պատմության ուսուցչուհի: Կյանքն ընթանում էր իր բնականոն հունով. ամուսնություն, ընտանիք, երեխաներ: Սակայն ճակատագիրը

դաժան փորձություն էր նախատեսել Շուշանիկի համար: 1992թ. պատերազմական գործողությունների հետևանքով հազարավոր շահումյանցիների մահն նրա ընտանիքն էլ տեղահանվեց՝ թշնամու վայրագ ճիւղաններում թողնելով սիրասուն ծնողներին: Անձնական խոր ու անդառնալի վիշտը պահելով հոգում՝ նա կարողացավ իր փխրուն ուսերին տանել անգութ պատերազմի թողած վշտի ծանրությունը և ամուսնու հետ դաստիարակել իր երեք զավակներին: Մինչև 2003 թվականն ապրել է Գայաստանի Գանրապետությունում, 2003թ. տեղափոխվել է Արցախ և աշխատանքի անցել Բերքածորի դպրոցում՝ որպես պատմության ուսուցչուհի:

Շուշանիկ Ասրյանը համեստ, առաքինի, անարատ հոգու տեր մի անձնավորություն էր, որն ուներ ջերմության և մարդասիրության անս-

պառ պաշար: Շուրջ 21 տարվա աշխատանքի փորձ ունեցող ուսուցչուհին ամեն անգամ դասարան էր մտնում պարտքի ու պատասխանատվության մեծ զգացումով, անմնացորդ նվիրումով, և քաջ գիտակցում էր, որ աշակերտին պետք է տալ ոչ միայն խոր և կայուն գիտելիք, այլև դաստիարակել լավագույն հատկանիշներով օժտված, կիրթ ու խելացի, աշխատասեր, հայրենասեր, վարվա անձնվեր քաղաքացուն: Նա կարողանում էր թափանցել իր սաների ներաշխարհը՝ նրանց առջև բացելով մեր անցյալի հերոսական էջերը և սովորեցնելով ճիշտ ապրել ու գործել, լինել ազնիվ ու ընկերասեր: Ընկեր Ասրյանն աշխատեց մինչև կյանքի վերջին օրը և չէր պատկերացնում իր առօրյան առանց դպրոցի, աշակերտների: Ու երբեք չէր կորցնում լավատեսությունը կյանքի, աշխարհի հանդեպ:

Սակայն անգութ հիվանդությունը կարողացավ հաղթել և ժամանակից շուտ կտրել նրա կյանքի թելը:

Մանկավարժական ու մարդկային լավագույն հատկանիշների շնորհիվ Շուշանիկ Ասրյանը վայելում էր դպրոցի աշակերտական ու ուսուցչական կուլտիվների, ծնողների սերն ու հարգանքը: Օրինակելի մանկավարժ լինելուց բացի նա նաև հոգատար ու նվիրված մայր էր, անշահախնդիր ընկեր ու բարի խորհրդատու: Նրա պայծառ հիշատակը միշտ վառ կմնա մեր բոլորիս սրտերում:

Ասկերանի կրթության շրջանային բաժին Բերքածորի հիմնական դպրոցի մանկավարժական կուլտիվ



ՈՒՍՈՒՑՈՒՄ

ԸՆԴՕՐԻՆԱԿՄԱՆ ԱՐԺԱՆԻ ԴԱՍ

Այն, որ Բերդաշենի դպրոցը հարուստ ավանդույթներ ունեցող կրթօջախ է (տնօրեն՝ Արտակ Ջարգարյան), հայտնի է ողջ հանրապետությունում: Իսկ «Աշխարհագրություն» առարկայի դասապրոցեսի հետաքրքիր և բովանդակային առումով պատշաճ կազմակերպումը նույնպես իր արմատներն ունի:

Ավագ սերնդի ուսուցիչները, ինչու չէ, նաև տարեց համագյուղացիները լավ են հիշում 20-րդ դարի լավագույն մանկավարժ, վաստակաշատ ուսուցչուհի Հայկուշ Ազարյանի ներդրումն այդ ասպարեզում: Վկան պատմաբերականության թանգարանն է, որ մի ժամանակ ոչ միայն դպրոցի, այլև գյուղի հպարտությունն է եղել: Թանգարանի մասին շատ է խոսվել ու գրվել տարբեր պարբերականներում:

Վերը նշածներից լավագույն ասպացույցը վերջերս այդ կրթօջախում կազմակերպված աշխարհագրության ընդօրինակման բաց դասն էր 8-րդ դասարանում (ուսուցչուհի՝ Ջաիրա Ավետիսյան):

Ներկա էին ԼԴՀ կրթության և գիտության նախարարության, շրջվարչակազմի կրթության բաժնի, դպրոցի տնօրենության ներկայացուցիչներ, մասնագետներ Աշանի և Եմիշճանի դպրոցներից:

Բազմամյա աշխատանքային փորձը, կրթական համակարգի բարեփոխումներին ու գնահատման չափորոշիչներին քաջատեղյակ լինելը, աշխարհագրության կարիքներին հարիր կահավորվածությունը հնարավորություն են ընձեռել Ջ. Ավետիսյանին՝ հետաքրքիր, բարձր մակարդակով ու սովորողների ներկայացվող պահանջներին ներդաշնակ կազմակերպել դասապրոցեսը:

Դասի թեման բավականին ընդգրկում էր՝ «Եվրոպա» թեմայի ամփոփիչ կրկնություն: Նպատակին հաս-

նելու համար ուսուցչուհին նախընտրել էր դասարանը բաժանել չորս խմբի, յուրաքանչյուրում՝ 4-ական աշակերտ (դասարանում սովորում է 17 աշակերտ):

Խմբերից «դուրս մնացած» աշակերտին կանչել էր գրատախտակի մոտ, որը գրում էր հարցերի պատասխանները: Ուսուցչուհին դասը վարում էր համագործակցային մեթոդով: Այն հնարավորություն է տալիս աշակերտներին դրսևորել առավելագույն ինքնուրույնություն՝ զգալով անձնական պատասխանատվության դերը, ինչպես նաև գործուն մասնակցության անհրաժեշտությունը միասնական հաջողության հասնելու համար: Աշակերտների պատրաստվածության մակարդակն այնքան բարձր էր, որ անհրաժեշտություն չէր լինում խմբերում խորհել միմյանց հետ, եզրահանգումներ անել: Ինքը՝ ուսուցչուհին, հանդես էր գալիս կազմակերպչի, հարցադրողի, ուղղորդողի դերում, իսկ աշակերտներն անկաշկանդ պատասխանում էին բոլոր հարցերին: Ընդամենը 20-22 րոպեի ընթացքում նրանք հիմնովին վերլուծեցին հին աշխարհամասն ամբողջությամբ՝ թե՛ ֆիզիկական, թե՛ տնտեսական առումով:

Մենք համոզվեցինք, որ աշակերտները հավասարապես տեղեկացված են ինչպես Եվրոպայի հզոր պետությունների ֆիզիկաաշխարհագրական, տնտեսությունների զարգացման, այնպես էլ թույլ ու գաճաճ պետությունների զարգացման առանձնահատկություններին: Նույնպիսի ակտիվությամբ էլ նրանք ֆիզիկական, քաղաքական և այլ բարտեզներից էին օգտվում: Քարտեզից օգտվելը շատ ավելի մատչելի է: Դրանք ամրացված են պարաններին, և անհրաժեշտության դեպքում ձգելով դրանց ծայրից՝ քարտեզը հայտնվում է աշակերտների դիմաց:

Նույն եռանդով ու աշակերտների ակտիվ մասնակցությամբ ուսուցչուհին անցավ նոր դասի բացատրությանը, որն, ի դեպ, նույնպես ծավալում էր՝ «Ասիա. ընդհանուր աշխարհագրական ակնարկ»: Ուսուցչուհին հակիրճ ու դյուրըմբռնելի ներկայացրեց Ասիան՝ որպես բնական պայմանների բացառիկ բազմազանությամբ տարածաշրջան, Ասիայում բնակվող ժողովուրդների մարդաբանական և էթնոշակութային տարբերությունները: Ասիան ներկայացվեց որպես մարդկության ծագման հավանական օջախ, քաղաքակրթության զարգացման ակունքներ, արվեստի անկրկնելի կոթողների աշխարհամաս: Առանձին շեշտադրությամբ ներկայացվեցին աշխարհամասի քաղաքական քարտեզի փոփոխություններն անցած դարի կեսերին և վերջին՝ կապված գաղութատիրության, ինչպես նաև ԽՍՀՄ փլուզման հետ: Առավել հետաքրքիր էր տեղեկություններ լսել հայկական գաղթօջախների մասին և մտովի զուգահեռներ անցկացնել Եվրոպական և ասիական գաղթօջախների արդի վիճակի շուրջ:

Դասը քննարկելիս դրվատանքի խոսք հնչեց ուսուցչուհու վարպետության, մանկավարժական տակտի, դասապրոցեսի ճիշտ կազմակերպման և այն հետաքրքիր ու արդյունավետ անցկացնելու մասին: Շեշտվեց նաև աշակերտների ակտիվության ու պատրաստվածության բարձր մակարդակը:

Ինձ համար՝ որպես մասնագետի, դասը տպավորիչ էր, հետաքրքիր ու ընդօրինակման արժանի:

**Գրիշա ԱՌԱՔԵԼՅԱՆ**  
**Եմիշճանի հիմն. դպրոցի**  
**աշխարհագրության**  
**ուսուցիչ**

Շնորհավորանք

ԿՅԱՆՔԻ ԳԵՂԵՑԻԿ ՈՒՂԻ



Ամենակարևոր երևույթները դպրոցում. ամենաուսուցանվող աշակերտ, ամենալավ կենդանի օրինակը. այս ամենն ամբողջաբանում է ուսուցիչների մեջ:  
՝ՁԵՅ՝, ՇԾԻ՝ՈՒՂ՝

Լրացավ մեր հարգարժան ուսուցչուհի, իր մասնագիտությանն անմնացորդ նվիրված Կարինե Սարգսյանի ծննդյան 60-ամյակը: Գեղեցիկ է նրա անցած ուղին և մեծ՝ վաստակը մատաղ սերնդի

դաստիարակության գործում:  
1970թ. Կարինե Սարգսյանը փայլուն գնահատականներով ավարտել է Մարտունու միջնակարգ դպրոցը և նույն թվականին ընդունվել Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը: 1975թ. ավարտել է համալսարանը՝ իր մեջ ամբարելով հայտնի գրականագետներ և լեզվաբաններ Էդ. Ջրբաշյանի, Հովհ. Բարսեղյանի, Գ. Ջահուկյանի, Հ. Թամրազյանի, Մ. Մկրյանի, Էդ. Աղայանի մատուցած գիտելիքները և մեր մայրենիի գերազանց իմացությունը: Աշխատանքային գործունեությունը սկսել է Քերթի միջնակարգ դպրոցից (1975թ.), այնուհետև աշխատել Մարտունու շրջժողկրթաժամում՝ որպես մեթոդիստ, իսկ 1983թ. իր անձն ամբողջովին նվիրել է Խնուշի-ճանի ութամյա, ապա՝ միջնակարգ դպրոցի սաների ուսուցման և դաստիարակության վեհ գործին:

Կարինե Սարգսյանն ունի աշակերտների հետ աշխատելու յուրօրինակ հմտություն, ապրում է նրանց երջանկությամբ, կիսում նրանց տխրությունը: Նրա անվերապահ նվիրումի արդյունքն այն իրողությունն է, որ այսօր նրա գործընկերներն իր նախնին սաներն են: Կ. Սարգսյանը կարողանում է իր առարկայի նկատմամբ հետաքրքրություն և սեր սերմանել աշակերտների մեջ՝ նրանց տանելով բազում դժվար բացող պոեզիայի աշխարհը:

Դպրոցում Կարինե Սարգսյանին անվանում են «քայլող հանրագիտարան»՝ պատմության (հատկապես՝ հայոց), արվեստի, ռուսաց լեզվի և անգլերենի լավ իմացության համար: Եթե որևէ մեկը (ուսուցիչ թե՛ աշակերտ) ուզում է իմանալ այս կամ այն բառի բացատրությունը, մինչև բառարանին դիմելը ուսուցչուհին տալիս է դրա ճիշտ և հստակ պատասխանը:

Խնուշիճանի միջնակարգ դպրոցի ուսուցչական կոլեկտիվը սրտանց շնորհավորում է վաստակաշատ ուսուցչուհուն՝ 60-ամյա տարեդարձի առթիվ, ցանկանում առողջություն արցախյան երկարակեցություն, անձնական մեծ երջանկություն:

Խնուշիճանի միջնակարգ դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

ՀԵՏԱՔՐՔԻՐ ԵՆ ԱՆՑՆՈՒՄ

Հետաքրքիր է անցնում իմ ու հասակակիցներին ուսանողական առօրյան: Սովորում ենք Շուշիի Ա. Խաչատրյանի անվան պետական հումանիտար քոլեջի «Ջրոսաշրջություն» բաժնի 2-րդ կուրսում:

դասերին: Յուրաքանչյուր դաս մեզ մոտ մի հայրենյաց դաս է: Դասախոսները գոհ են մեզմից: Հպարտանում են մեզանով՝ որպես քոլեջի լավ սովորող կուրս:

Հերթական բաց դասն էր մեզ

տակն էր քրեական իրավունք հասկացության, խնդիրների և համակարգի, կառուցվածքի և հանցագործության ու արդարության և հասարակության մեջ այս բարոյական հասկացության պաշտպանության իրավական միջոցի՝ արդարության մասին պատկերացում կազմելը: Չէ՞ որ ինչպես Ցիցերոնն է ասում, «Արդարադատությունը բոլոր հասարակական առաքինություններից բարձրագույնն է»:

Ուսանողները պատմում էին, հարցնում, պատասխանում: Ինձ թվում է, սա պարտադիր է մեր նորաստեղծ պետության յուրաքանչյուր քաղաքացու համար: Նյութի լավ ուսումնասիրումը կնպաստի, որ զերծ մնանք հանցագործություններից, հանրության համար վտանգավոր արարքներից:

Հետաքրքիր են անցնում մեր բոլոր դասերը: Բայց այս դասը մեր դասերի դասն էր, որից շատ բան սովորեցինք:

**Արիսա ՄԻՆԱՍՅԱՆ**  
**Շուշիի Ա.Խաչատրյանի անվան**  
**պետական հումանիտար**  
**քոլեջի «Ջրոսաշրջություն»,**  
**2-րդ կուրս**



Ակտիվ մասնակցություն ենք ունենում քոլեջում կազմակերպվող բոլոր միջոցառումներին, բայց առանձին սիրով ենք պատրաստվում օրվա

մոտ: Անուշ Ավետիսյանը մեր կուրսում «Իրավունքի հիմունքներ» առարկայից կազմակերպեց բաց դաս, թեման՝ «Քրեական իրավունք»: Դասի նպա-

ԹՈՂ ԵՐԿԱՐ ՀՆՉԻ ԿՅԱՆՔԻԴ ԴՈՂԱՆՋԸ



Ուսուցչությունը ազգանվեր ու սուրբ առաքելություն է, որ տրվում է մարդուն՝ այդ մասնագիտությունն ընտրելու պահից: Առանց այդ առաքյալների հնարավոր չէ տոնել մատաղ սերնդի համակողմանի դաստիարակության ազգապահպան գործի հաղթանակը:

Լրացավ վաստակաշատ մանկավարժ Սիլվա Շամիրյանի ծննդյան 60 տարին:

Փորձառու մանկավարժն այդ տարիներից 40-ը նվիրել է մատաղ հոգիների կրթության ու դաստիարակության վեհ գործին: 1972-ից մինչ այսօր նա իր աշխատանքային գործունեությունն է ծավալում Մարտունու շրջանի Սպիտակաշենի միջնակարգ դպրոցում:

Շնորհավոր հրեյլանդ, հարգարժան գործընկեր: Մաղթում ենք երջանկություն, առողջություն, անսպառ եռանդ: Թող կյանքը ձեզ միայն ու միայն ուրախ անակնկալներ բերի, թող միշտ օրդ բացվի լույսի ու բարու շաղախով, դեմքիդ միշտ շողա գոհունակության ժպիտը:

Սպիտակաշենի միջնակարգ դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

ԴԻՄԱՆԿԱՐ

ՀՊԱՐՏ Ե ԻՐ ԱՃԽԱՏԱՆՔՈՎ ՈՒ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄ



Լրագրողի աշխատանքի առավելությունը, ըստ իս, նոր անակնկալ ծանոթությունների հնարավորությունն է: Երբ եմ նստում նստածս են՝ ինչքան միապաղաղ կլինեք կյանքը, եթե աշխատանքի բերումով չհանդիպեի ու չճանաչեի նրանց, թող թույլ տրվի այսպես ասել, իմ հերոսներին: Երանցից յուրաքանչյուրը մի ուրույն աշխարհ է իր երկրամբ ու կենսափոխակալությամբ, նախասիրություններով ու ճակատագրով: Դու քեզ համար նորովի ես հայտնագործում այդ աշխարհը, պեղումներ անում այնտեղ և հաճախ ոչ միայն ճանաչողական, այլև ուսանելի շատ բան ես վերհանում քեզ համար: Վերջերս առիթ ունեցա ծանոթանալու մի մանկավարժի հետ, ում հոգվածները «Լուսարարուն» վարուց էին գրավել ուշադրությունս: Մարտակերտի Վ. Բալայանի անվան միջնակարգ դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Նատաշա Պողոսյանի հետ հանդիպումը գերազանցեց բոլոր սպասելիքներս: Զճանաչելով նրան՝ արտաքին տեսքից անզան կարելի է գուշակել, որ դիմացու մանկավարժ է՝ կոկիկ արտաքին, գեղեցիկ խոսք, խորաթափանց հայացք ու առիքնող ժպիտ: Իր գործի նվիրյալ, ստեղծագործ, պրպտուն միտք ունեցող ուսուցչուհի, ով հիրավի կարող է հպարտանալ իր սաներով: Գաղտնիք չէ, որ մանկավարժի հայելին իր սաներն են, և նրանց հաջողությունները մեծապես պայմանավորված են ուսուցչի ձեռքբերումներով: Նրա աշակերտները տարբեր տարիների առարկայական օլիմպիադաներում բարձր ցուցանիշներ են արձանագրել, ինչն ամենօրյա ջանադիր ու հետևողական աշխատանքի արդյունք է:

Շուրջ 34 տարվա աշխատանքային կենսագրությունը տարբեր հասցեներ է ներառում՝ Մարտակերտի շրջանային պիտերական տուն, շրջկենտրոնի գիշերօթիկ միջնակարգ դպրոց, Լուսաշխատողների տուն, հեռակա գիշերային միջնակարգ դպրոց, բայց դրանց մեջ առանցքային է համարում վերջին 17 տարիները, երբ վերջապես հնարավորություն ունեցավ աշխատելու սիրած մասնագիտությամբ: 92-ին բռնազաղթի ալիքը նրան նետել է Ռուսաստան, ինչի մասին հիշելիս կորցրած լավագույն տարիների համար ավստանքի զգացումը մի պահ սովորում է դեմքը և աչքերը ծրարում թախիծով: 1996-ից առայսօր նա արժանապատվությամբ է կրում հայոց լեզվի և գրականության ուսուցչուհու կոչումը, որի մասին մանկուց է երազել, այն օրը, երբ առաջին անգամ լսեց Գիբորի պատմությունը և լաց եղավ: Փոքրիկ Գիբորի պատմությունն իր հետ տարավ տուն, իրենց այգու մենավորիկ լռությունը ճաք տվեց նրա հեծեծանքից. «Ախր ինչո՞ւ Համբուն Գիբորին տարավ քաղաք»... Եվ հենց այդ օրն էլ վճռեց, որ անպայման ինքն էլ ուսուցչուհի կդառնա՝ սրտակեղեք այդ պատմությամբ մանուկ սրտերը հուզելու, կարեկցանքի, ուրիշի ցավը կիսելու, բարության հուճեղերը մատաղ սրտերին պահ տալու փափագով: «Մանկուց սիրել էմ, որ ուսուցչուհին մատյանը ձեռքին մտնում էր դասարան: Մի պահ ինձ էի պատկերացնում՝ մատյանը ձեռքիս դաս են պատմում Գիբորի և ուրիշ շատ-շատերի մասին»,- մեզ հետ զրույ-

ցում անկեղծանում է ուսուցչուհին: Հպարտ է իր աշխատանքով ու մասնագիտությամբ, որը, մեծ առումով, մարդաբանություն է, քանի որ միտված է մարդու ձևավորմանը: Այդ բարդ ու պատասխանատու աշխատանքի պարզաստորությունը աշակերտների հետ ամենօրյա հոգևոր շփման բերկրանքն է, ստեղծարար աշխատանքի բերկրանքը: Մեր դժվարին ժամանակներում նա չի փորձում կյանքը ներկայացնել միայն գեղեցիկ կողմերով կամ ինչպես ասում են՝ վարդագույն ակնոցներով: Շրջապատի խտուղի երևույթների հանդեպ ոչ թե ջայլամի միամիտ կեցվածքն է նախընտրում, այլ աշակերտների հետ բաց քննարկումների, բանավեճերի միջոցով փորձում թափանցել իրերի ու երևույթների խորքը: Իր տեսակը մարտնչող, չնահանջող տեսակն է, և գոհ է, որ արդարության, ազնվության ու բարության համար հանապազ պայքարի դիրքերում ինքը մեծակ չէ, այլ սաների հետ. «Արդարության ջատագով եմ, փորձում եմ աշակերտներին ևս սովորեցնել, որ ազնիվ ապրեն, մարդասեր լինեն և կյանքի դառնություններին կարողանան դիմակայել»:

Մանկավարժի աշխատանքի բարդությունները, նրա խոստովանությամբ, հատուցվում են այն հարգանքով ու հեղինակությամբ, որ վայելում է կոլեկտիվում, սաների ու նրանց ծնողների կողմից: Նրա կարծիքով՝ մանկավարժի կատարելատիպը ենթադրում է ոչ միայն առարկայական և մեթոդական խոր ու կայուն գիտելիքներ, այլև դասապրոցեղ ճիշտ և նպատակային կազմակերպելու ունակություններ: Դպրոցն ու դպրոցականն անընդհատ պետք է չեն հասարակական կյանքից, որտեղ կատարվող ամեն ինչ իր արժանաքն է գտնում երեխաների ներաշխարհում: Հաճախ է պատահում, որ մանկավարժի քարոզած արժեքներն արդեն ի չիք է դառնում մեր կյանքում տեղ գտած ինչ-ինչ երևույթների կողքին, և ուսուցիչը կարկանդակ է աշակերտի «ինչու»-ներից: Բայց նա «երիցս վայ այն ուսուցչին, ով մասնագիտական հարցերից է խեղճանում, մանկներն ուղղակի կուլ են գնում աշակերտների հարցերին»:

Երկարամյա մանկավարժին մտահոգում է նաև ծրագրերի ու դասագրքերի բեռնաթափման հարցը, ինչի մասին տարիներ շարունակ խոսվում, բայց էական քայլեր չեն արվում. «Օրինակ՝ ԲաՖՖու «Խեմքը» ընդգրկված է և՛ 8-րդի, և՛ 9-րդի գրականության դասագրքերում: Հայոց լեզվից «Ածական անուն» թեման անցնելիս հարաբերական ածականին երեխաները թուղթիկ են առնչվում: Բեռնաթափելի նշանակում թեմաները կրճատել, հատկապես որ թեստային առաջադրանքներում դրանք ընդգրկված են: Նույնը կարելի է ասել նաև գոյականի հոլովումների մասին»: Տարիների փորձով ուսուցչուհին համոզվել է, որ գիտելիքների ստուգման թեստային ձևն արդյունավետ չէ, քանի որ պատահական նշումներ անող, գիտելիքների սակավ պաշար ունեցող երեքն ավելի բարձր միավորներ է հավաքում, քան լավ սովորող, մտածող ու տրամաբանող աշակերտը: Օրինակներ՝ որքան ուզեք: Պատահել է, որ հազիվ «4» գնահատված աշակերտը քննության ժամանակ 15 միավոր է հավաքել, այսինքն՝ դասարանի ամենալավ սովորողն ու մի կերպ հասցնող թույլը հայտնվել են նույն հարթության վրա: Վաղը նույն կերպ նա կհայտնվի ուսանողական մատարանին՝ դուրս մղելով արժանավորին»:

Ն. Պողոսյանն այն երջանիկ մանկավարժներից է, ով բազմիցս առիթներ է ունեցել վայելելու իր համառ ու հետևողական աշխատանքի պտուղները: Վերջին տասը տարում

նրա աշակերտներից յոթը հաջողությամբ մասնակցել են ՀՀ առարկայական օլիմպիադաներին: Բայց դափնիների վրա ննջելը նրա համար չէ, երբեք չի գոհանում ձեռքբերածով, միշտ ձգտում է ավելի, ինչը ներարկում է նաև սաներին. «Անցած տարի 10-րդ դասարանի իմ երեք աշակերտները գրականության օլիպիադայի շրջանային փուլը հաջողությամբ անցան և մասնակցեցին նաև հանրապետական փուլին (ի դեպ, շրջանից ուրիշ աշակերտ չկար): Իհարկե, ուրախացա, միաժամանակ ցավով ու ավստանքով նրանց ասացի. «Եթե շրջանի լավագույնները դուք եք, որ պիտի մասնակցեք հանրապետական օլիմպիադային, ողբերգություն է»: Մենք հետաքրքրվեցինք, թե ինչպես է նրան հաջողվում զարգացնել աշակերտների ստեղծագործական ունակությունները: Փորձառու մանկավարժը կարողանում է ի հայտ բերել ստեղծագործական հակումներ ունեցող աշակերտին և, ինչպես ինքն է ասում, մի փոքր ավելի աշխատել նրանց հետ. «Գրական երկերի ուսուցման ընթացքում ես անպայման աշակերտների ուշադրությունը սևեռում եմ գեղարվեստական խոսքի պատկերավորման միջոցների վրա: Հավատացեք, նրանք փորձում են գրավոր խոսքում ստեղծել գեղեցիկ պատկերներ: Ստեղծագործական երևակայության զարգացման համար դիմում եմ զանազան մեթոդների ու հնարների. օրինակ՝ Դուրյան անցնելիս աղջիկներին ասում եմ՝ պատկերացրեք՝ դուք եք Դուրյանի երևակայական գեղեցկուհին, և ձեր սրտառու խոսքը կյանքի կկոչի մահամերձ բանաստեղծին: Սկզբում դժվարությամբ, բայց հետզհետե բացվեցին, անկեղծազան, և ծնվեցին մտքեր, ուշագրավ պատկերներ, նուրբ ու հուզիչ խոստովանություններ: Եթե քսան աշակերտից 3-4-ի մեջ կարողանում ես զարգացնել ստեղծագործական երևակայությունը, արդեն հաջողություն է»:

Իր հաջողության գրավականը Ն. Պողոսյանը համարում է ուսուցման ավանդական ու նոր մեթոդների զուգորդումը: Դրանց հմուտ օգտագործումը խթանում է աշակերտների հետաքրքրությունը, ոգևորում նրանց: Գովելի է, որ ուսուցչուհին չի զլանում և աշակերտակենտրոն ուսուցման իր փորձն ու մեթոդական հնարները «Լուսարարի» էջերում կիսում է գործընկերների հետ, թեպետ համոզված է, որ յուրաքանչյուր ուսուցիչ ինքն է գտնում իր ձևն ու մեթոդը: Նրա համոզմամբ՝ ինքնակատարելագործման ձգտումը պիտի ուսուցչի մշտական ուղեկիցը լինի: Իր բազմազաղությամբ հանդերձ, հասցնում է կազմակերպել գրական-գեղարվեստական ցերեկայիններ, գրական-երաժշտական երեկոներ, գրողների հոբելյաններին նվիրված զանազան միջոցառումներ:

Այսպիսին ճանաչեցի նրան՝ նախանձելի եռանդով ու լավատեսությամբ զինված Նատաշա Պողոսյանին և հասկացա, որ մասնագիտական հաջողությունների հիմքը բարոյականային այն որակներն են, որոնք գալիս են լրացնելու մանկավարժի դիմանկարը՝ լիարյուն դարձնելով այն: Շիտակ, ուղղամիտ, ըմբոստ, ճշմարտախոս, կեղծիք և բարոյական այլևայլ խաթարումներ չհանդուրժող, արդարության համարձակ մարտիկ, ում համար վաղուց կենսակերպ է դարձել վաղամեռիկ Մուշեղ Գալշոյանի հավատամքը՝ «Մի օրվա կյանք էլ ունենաս, այդ մեկ օրն էլ հարկ է, որ կռվես արդարության համար, ճշմարտության և գեղեցիկի համար»:

Շնորհավորանք ԻՐ ԳՈՐԾԻ



Հանրապետությունում շատերն են ճանաչում նրան որպես հայոց լեզվի և գրականության գերազանց մասնագետի և երկարամյա դպրոցի տնօրենի, Արցախյան

շարժման ակտիվ գործչի, շրջանային ու հանրապետական մամուլի ակտիվ թղթակցի: Փետրվարի 8-ին լրացավ Վերին Հոռաթաղի Բ. Քոքսի անվան միջնակարգ դպրոցի տնօրեն, հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Նատաշա Առատյանի ծննդյան 60-ամյակը: Ծնվել է 1953թ., Մարտակերտի շրջանի Առաջաձոր գյուղում: 1970 թվականին ավարտել է Առաջաձորի դպրոցը ոսկե մեդալով, 1974-ին՝ Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի լեզվագրական ֆակուլտետը՝ գերազանց գնահատականներով: 1979 թվականից առայսօր Վերին Հոռաթաղի դպրոցի տնօրենն է: Իր գործունեության 39 տարիների ընթացքում սերունդներին է փոխանցել հայոց լեզվի գանձերը, իր բարությունը, ընկերներին հարգելու և օգտակար խորհուրդներով նեցուկ կանգնելու մեծ կարողությունը: Այդ են վկայում նրա մասնագիտությունը ընտրած տասնյակներից ավելի աշակերտները, որոնց մի մասն աշխատում է մեր շարքերում, իսկ մի մասը՝ տարբեր դպրոցներում, կամ սովորում են բուհերում: Նա իր հարուստ փորձը սիրով փոխանցում է ոչ միայն իր, այլև հարևան դպրոցների երիտասարդ ուսուցիչներին ու տնօրեններին: 2000 թվականին ճանաչվել է շրջանում տարվա լավագույն ուսուցիչը հայոց լեզվից, 20-րդ դարի շրջանի լավագույն մանկավարժներից մեկը: 2009 թվականին իր ներդրած ավանդի համար արժանացել է «ԼՂՀ վաստակավոր ուսուցիչ» պատվավոր կոչմանը, որի համար մեծ ուրախություն և հպարտություն ապրեց դպրոցի ողջ կոլեկտիվը: Վերին Հոռաթաղի Բ. Քոքսի անվան միջնակարգ դպրոցի մանկավարժական, աշակերտական կոլեկտիվներն ու ծնողական կոմիտեն բարձր են գնահատում նրա արժանիքները և շնորհավորում 60-ամյա հոբելյանը, ցանկանում առողջություն, նորանոր հաջողություններ հետագա գործունեության մեջ: Շնորհավորելով 60-ամյակը՝ մաղթում ենք էլի շատ գարուններ: Թող գարնան թարմությամբ լցվի Ձեր ամեն մի օրը, և եթե կյանքն անակնկալներ ունի Ձեզ համար՝ թող լինեն միայն հաճելի անակնկալներ, երջանիկ պահեր:

**Վ. Հոռաթաղի Բ. Քոքսի անվան միջնակարգ դպրոցի մանկավարժական կոլեկտիվ**

**Մելանյա ՄԻՆՈՅԱՆ**

ՀՈՐԵԼՅԱՆ

# ԼԵՈՆԻԴ ՀՈՒՐՈՒՆՑ. ԳՐՈՂ-ՄԱՐՏԻԿԸ (Ծննդյան 100-ամյակի առթիվ)



1978թ. աշնանավերջին Ասկերանի քաղաքում ծնված Լեոնիդ Հուրոունցը՝ Բորիս Կևորկովի «Յո՞ւրուրուցի բարեկամը չես»,- փաստաթղթերս նայելով՝ հարցրեց նա: «Ոչ,- ասացի,- ուղղակի ծնունդով նույն գյուղից եմք»: Արտաքուստ անմեղ թվացող այս հարցն այնքան թունոտ, այնպես գարշաճեց, որ քանից անտեսյակ մարդն անգամ, որպիսին ես էի այդ պահին, հստակորեն կզգար նրա անսքող, օրգանական ատելությունը անվանի գրողի ու Արցախի արժանավոր որդիներից մեկի հանդեպ: Հետո իմացա, թե որտեղ էր- թողված շան գլուխը: Լեոնիդ Հուրուրուցը բաբվաբնակ իր գրչակից ընկերոջը՝ Սուրեն Կասպարովին գրած մամուլում համարձակվել էր մի երկու ցուրտ խոսք ասել «նորին մեծության» հասցեին՝ առնչված Ստեփանակերտի մուտքը գարդարող՝ Սարգիս Բաղդասարյանի «Մենք ենք, մեր սարերը» հուշարձանին, որի վրա Կևորկովը խաչ էր քաշել՝ իբրև նացիոնալիստական ստեղծագործություն (շնորհակալ լինեմք, որ չքանդեց): Եվ ահա, մեր աչքաբաց պոետ տղաներից մեկը հաջողեցնում է անկողնում զամված մարդուց (Ս. Կասպարովն անդամալույծ էր) գողանալ այս նամակն ու բերել-հանձնել առաջին քարտուղարին: Ու երբ Հուրուրուցը հերթական անգամ գալիս է Ստեփանակերտ, Կևորկովը կեղծ քաղաքավարությամբ հրավիրում է իր մոտ և մարդի մյուս ղեկավարների ներկայությամբ վկայակոչելով հիշյալ նամակը, «մերկացնում» խորհրդային ճանաչված գրողի դիրքին անհարկ նրա ազգայնական դեմքը» և այլն, միաժամանակ պահանջում այլևս ուղե չդնել Ղարաբաղ: Կարծես այն իր հոր կալվածքն էր:

Կևորկովն, ինչ խոսք, Բաբվի կամքն էր կատարում, որի աչքում Հուրուրուցը փուշ էր դարձել դեռ 1947-ից, երբ Մոսկվայում լույս տեսավ նրա առաջին նշանակալից երկը՝ «Ղարաբաղյան պոեմը»: Հայաստանի ասեն, որ այս վեպը բովանդակում է ժամանակին օրախնդիր համարվող հեղափոխական անցուղարձեր՝ համեմատելով դրկից ժողովուրդների բարեկամությամբ, ինչը գլխավոր, եթե չասենք պարտադիր թեմա էր խորհրդային գրողների համար: Հուրուրուցի երկը շատ շատերից էր- առանձնանում, ամենից առաջ, արցախյան ինքնատիպ իրականության արտացոլմամբ, որը նորություն էր խորհրդային բազմազգ ընթերցողների ու գրականության համար և, անշուշտ, իր քննարանում, ինչու չէ՞ պոեմանման ոճով, որը նրա արձակի ամենաբերրոջ հատկանիշն է, և որի համար Հուրուրուցին «արձակի բանաստեղծ» էին անվանում: Պատահական չէ, որ «Ղարաբաղյան պոեմը» հետագայում ունեցավ հինգ իրատարակություն (1954, 1955, 1959, 1962, 1970), ընդ որում, երեքը՝ Մոսկվայում, արցախյան գրողի (նաև Արցախի) անունը հռչակելով Սիոնյունով մեկ: Բացառությունը սոսկ «եղբայրական» Արթուրյանն էր, ուր սրբով ընդունվեց Հուրուրուցի գիրքը: Պատճառը վերնագիրն էր. չէ՞ որ Ղարաբաղն արգելված գոտի էր հայ հեղինակների համար... «Դու ինչո՞ւ հատկապես Ղարաբաղն ես վեպի նյութ դարձրել:

Դու էդ խելառ պառավի՝ Սարիետա Շահինյանի հետքերով ես, հա՞, գնում, որ «Օգոստոս»-ում գրել է, թե, իբր, Ղարաբաղը պատմական Հայաստանի 10-րդ նահանգն է... Թե Բաբվում վատ ես ապրում, կարող եմ քեզ համար լավ տեղ գտնել...»,- Հուրուրուցին սպառնացել է Արթուրյանի գրողների միության նախագահ Սամեղ Վուրդունը: Իսկ վարչության քարտուղար Սեթի Հուսեյնյանը ասել է. «Դու ծառի ճյուղին նստած՝ ճյուղը կտրող դաշնակ ես»: Այդպես և՛ Սիրգա Իբրահիմովը, Հուրուրուցի մյուս «գրչեղբայրները»:

Լ. Հուրուրուցին այլ բան չէր մնում, քան նամակով դիմել Միրջաֆար Բաղիրովին՝ այն հավատով, որ ամեն մեղադրանքներից պաշտպանություն կգտնի հանրապետության կոմունիստների առաջնորդի աջակցությամբ: Մի քանի օր անց, ի զարմանս շատերի, Բաղիրովի հանձնարարությամբ դրվատական հոդված է տպագրվում «Բակինսկի րաբոչի» թերթում, ապա և «Ղարաբաղյան պոեմը» առանձին գրքով թարգմանվում է արթուրյաներեն, բայց նոր, «Ռսկե առավոտ» վերնագրով: «Տեսնե՞ք, թե ո՞նց էին քծնում, շողորթաբար ներողություն խնդրում իմ երեկվա հակառակորդները»,- տարիներ անց Հուրուրուցը պատմել է Լևոն Ադյանին, որն էլ այս ամենի մասին շարադրել է վերջերս Ստեփանակերտում լույս ընծայված իր «Հեռացող եզերք» վեպում: Պարզվեց, սակայն, որ «այդ լավությունը» հեռահար նպատակ էր հետապնդում: Շուտով մի կեղտոտ արչակազմը սանձազերծվեց Սարիետա Շահինյանի դեմ (ի դեպ, Հուրուրուցի գրական ծիրի մասին նա է առաջին խոսքն ասել համամիութենական մամուլում), և Հուրուրուցին էլ առաջարկեցին ստորագրել պատրաստի խմբակային գրպարտագրի տակ, ինչն, իհարկե, մերժվեց: (Փակագծերում հիշեցնեն, որ Բաբվից հնչած ոռնոցը մագաչափի իսկ չստվերեց մեծահամբավ Մ. Շահինյանի հեղինակությունը. մի առժամանակ անց նրան շնորհվեց ԽՍՀՄ բարձրագույն՝ Լենինյան մրցանակ): Հետագա հավաճանքներից խուսափելու համար գրողը ստիպված էր 1949-ին տեղափոխվել Երևան, ինչպես Գարեգին Սևունցը, Սուրեն Այվազյանը, Համո Սահյանը, Համո Ամիրխանյանը, Արշավիր Դարբինի, Աշոտ Գրաչին, Վարսենիկ Աղասյանը... «Ղարաբաղյան պոեմը» տաղանդավոր արձակագրի՝ հայրենի լեռնաշխարհին ծոցած առաջին, բայց ոչ վերջին գործն է: Մոսկվայում ու Երևանում միմյանց հետևից կյանքի ուղեգիր ստացան «Փշատենի» (1956), «Բարձր լեռներ» (1957), «Իմ օջախի քարերը» (1959), «Կարապետ» (1962), «Հայրեր» (1970), «Մանկության սարերում» (1972), «Իմ գյուղի տանիքից» (1976), «Ղարաբաղյան խաչմերուկներ» (1981) և մյուս ժողովածուները՝ ամեն անգամ տեմպահար անելով ապշերոյան «զգոն ընդդիմախոսներից», ինչը, բարեբախտաբար, քամահրանքի էր արժանանում մոսկովյան իրատարակիչների կողմից, որոնք, իհարկե, ճշմարիտ արվեստը, գրական արժեքները, վերջապես հայ հեղինակի նկատմամբ միլիոնավոր ընթերցողների հարածուն հետաքրքրությունը գերադասում էին մի բուռ խրտնած աղմկարարների հավակնոտ կարծիքից: 21-՞ որ, ինչպես Հուրուրուցն է ասում, ճշմարտությունից վախենում են թույլ մարդիկ: Իսկապես, ի՞նչն էր խրտնեցրել մեր «դարավոր» դրկիցներին: Պարզ չէ՞: Նրանց «ակադեմիկոսները», բան ու գործ թողած, կաշվից դուրս էին գալիս աշխարհին մեկ համոզելու, թե Ղարաբաղի հայերը եկվորներ են, մեկ թե՛ նրանք հայեր չեն, այլ (ինչպես իրենք) նախկին աղվաններ և այլն, և այլն, իսկ ահա մի ոմն Հուրուրուց իր գրքերով հակառակն է մերկայացնում, հօրս ցնդեցնելով իրենց մանրակրկիտ մշակված պե-

տական քաղաքականությունը...

«Յուրաքանչյուր գրող ունի իր աշխարհը, որից Անթեյի նման ուժ է առնում: Ինձ համար Ղարաբաղն է այդ աշխարհը, նրա պատմությունը, նրա ճակատագիրը, նրա ցավը, ուրախությունը, հույսերը,- խոստովանել է Հուրուրուցը: Ղարաբաղը իմ տունն է, իմ ապավենը, իմ տիեզերքը: Եվ ոչ մի ուժ չի՛ կարող ինձ պոկել նրանից»:

Հիրավի, Արցախ-Ղարաբաղը ներշնչանքի անսպառ աղբյուր էր գրողի համար, որի հետ կապված էր բուռն, որդիական անեղծ սիրով, ամենացորդ նվիրումով, ինչը երբեք, մինչև կյանքի վերջը (1982) չլքեց նրան, քանզի այն, ի տարբերություն իր երդվյալ հակառակորդների, ոչ թե տարածք է, այլ հայրենիք, իր պապերի, իր նախնիների թանկ ու անմոռաց հիշատակներով սրբազորված ծննդավայր: Այդ սիրուց են ծնվել, այդ սիրուց են հյուսվել գրողի երկու տասնյակից անցնող գրքերը, որոնք մեկ-տեղ կարելի է համարել ոչ այլ ինչ, եթե ոչ հայրենի եզերքի, հարագատ բնաշխարհի մարդու փառաբանություն: Լրագրային իմ այս խոսքում են նպատակ չեն ունեցել մեկ առ մեկ անդրադառնալու դրանց, ընդհանրացական իմաստով նշեն, որ բոլորի միջով, լինի ծավալուն վեպ, թե փոքր նովել ու մանրապատում, անկախ արժարժած թեմատիկայից, կարմիր թելի պես անցնում է մարդու քաղաքացիական ակտիվության խնդիրը: Արձակագիրը մարդկային կյանքի իմաստը փնտրում է ազնիվ մղումների ու նպատակների մեջ: «Անցորդ, անցիր, միայն ետ նայիր մի պահ՝ երկրի վրա թողե՛լ ես գոնե մի ցողուն»: Այդ ոգով է գրողն օժտել իր դրական հերոսներին, կերտելով արցախցու, որ նույնն է՝ իր հողին ամուր կանգնած, իր արմատներին պինդ կառչած հայ մարդու յուրատիպ, լիարյուն կերպարների մի ամբողջ պատկերասրահ, որոնք բարու, գեղեցիկի, վեպի աներեր նվիրյալներ են ու չարի, կեղծի անգիջում հակառակորդներ: Հենց այդպես է ապրել ու ստեղծագործել ինքը հեղինակը՝ գտնելով, որ գրողն այլ անելիք չունի, քան ժողովրդին մտահոգող խնդիրներին հետամուտ լինելը, նրա հոգսերն ու ցավերը կիսելը:

Հուրուրուցի ստեղծագործության մեջ ղարաբաղյան ուրիշ սիմվոլների հետ մեկտեղ առանձնահատուկ տեղ է զբաղեցնում Արցախն ու արցախցուն խորհրդանշող «կենաց ծառը»՝ արքայաթեյնին, որին տասնամյակներ առաջ՝ շնորհիվ «եղբայրական» հանրապետության «հայրական հոգատարության», սպառնում էր իսպառ բնաջնջվելու իրական վտանգը: Գրողը ստիպված էր մի իսկական մարտ մղել այդ հերթական չարիքի դեմ: Եվ այսօր, երբ շարունակում է գոյատևել մեր ավանդական հրաշք ծառը, մենք պարտական ենք Հուրուրուցի խիզախ գրչին: Իսկ նման քանի-քանի հողված ու նամակ է գրող-մարտիկը, իրեն վտանգի տակ դնելով, հղել մոսկվաներին՝ աղերսված Արցախյան հիմնախնդրին, որի լուծմանը, ասել է թե՛ արդարության, ճշմարտության հաղթանակին հավատում էր անվերապահորեն: Քանի որ հավատում էր իր ժողովրդի աստվածընծա հզոր, առասպելական ուժին ու ազատասենյ ռոն: Ցավոք, նա չտեսավ հարագատ երկրամասի անկախությունը, որն իր կյանքի գերագույն նպատակն էր համարում: Մխիթարական է մի բան. Հուրուրուցի աճյունը, կտակի համաձայն, Երևանից տեղափոխվելով, այժմ հանգչում է իր սիրելի ծննդավայրում՝ Նորշեն գյուղում, որի դպրոցը, ինչպես նաև Ստեփանակերտի փողոցներից մեկը կրում են նրա պայծառ անունը:

Կոմիտաս ԴԱՆԻԵԼՅԱՆ

## Լ. ՀՈՒՐՈՒՆՑ. «ԱՆՄՈՌՈՒԿՆԵՐ»

- Ներս մտար՝ շուրջդ մի նայիր, մի փնտրիր ուրիշի հետքեր: Ավելի լավ է մտահոգվես, թե դու ինչ հետք ես թողնելու:
- Աղբատն ուզեց խեղդվել: Բայց տեսավ, որ հարուստն արդեն խեղդվում է, և ինքը վերադարձավ տուն: Նա չկանցեցավ, որ հարուստն այն աշխարհում ևս տիրություն անի իր գլխին:
- Ով շատ է մտածում բարության մասին, նա բարի լինելու ժամանակ չի ունենում:
- Եթե երանի առաջնորդն արծիվն է, ապա երանը բարձրություն է վերցնում, իսկ եթե ագռավն է, ապա նստում է լեշի վրա:
- Բարձրությունը չափվում է հողից, հողից է այն սկիզբ առնում... Այդ մասին հաճախ են մոռանում: Եվ իզուր էլ մոռանում են:
- Աստղերը վախենալու պետք չունեն, թե իրենց կարող են լուսատիկների հետ շփոթել:
- Օրը մոտենում է մայրամուտին, իսկ երկրի վրա թողած հետքս հազիվ է նշմարվում: Բայց մի մխիթարություն ունեն՝ միշտ հաշտ եմ ապրում ճշմարտության հետ:
- Ոտքդ կախ մի գցիր, անցորդ: Պահելու համար ծաղիկներ մի պոկիր: Գնա քո ճամփան, ծաղիկները կաճեն քո ճանապարհին:
- Խոտի ցողունիկն էլ արժանի է այն մեծ աշխարհին, որի մեջ ապրում է:
- Իմ չարականներ, պարսավում եք ինձ, թե չեք պարսավում, միևնույն է, ստվերս ճամփին չի ընկնի, որովհետև միշտ վառ է իմ երազը:
- Երբ խոսում են արժանիքների մասին, ուրեմն քեզ թալանում են: Իսկ երբ թերությունները են վարկում, հարստացնում են քեզ: Այսպես է ասում հին իմաստությունը:
- Ես շնորհակալ եմ իմ չարականներին. նրանք անընդհատ հոգ են տանում ինձ հարստացնելու մասին:
- Վախկոտ շունը ամենքի ձեռքը լիզում է և հետն էլ մի աքացի ուտում:
- Ողջ կյանքում ես միշտ ինչ-որ բան հաղթահարել եմ: Եվ մեռնելուց հետո էլ, երևի, իմ դեմքին սառած կմնա հաղթահարելու ճիգը:
- Այն հարցին, թե մարդու համար ինչն է ամենակարևորը, Ավետիք Իսահակյանը պատասխանել է. «Արդարության տենչը»:
- Արդարության տենչն է եղել իմ ողջ կյանքի ուղեցույց աստղը:
- Այս անծայրածիր երկնքի տակ մեզնից ամեն մեկն ունի իր անկյունը, իր մի կտոր հողը, ուր նա ծնվել է:
- Հարագատ իմ լեռնաշխարհ, իմ Ղարաբաղ: Իմ մանկության բարձր ու մաքուր երկինք: Ինչ էլ որ պատահի ինձ հետ, ինչ էլ որ ինձ հետ անի խաբուսիկ բախտը, երբեք չեմ մոռանա դեպի քեզ բերող ճանապարհը: («Չեմ մոռանա դեպի քեզ բերող ճամփան»)

ՎԵՐՋԻՆ ԷՋ

ՇՈՒՇԻԻ ԹԱՏՐՈՆԸ ՀԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ԻՐ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԸ



Մեր թատրոնի պատմության մեջ Լեոնիդ Յարոսլավցյանը գրել է ուշադրավ ել:

...Ճնշվել է 1948-ին, Շիրակի մարզի Կառնուտ գյուղում: Ավարտել է Լեոնի-նականի և 28 դպրոցը: Ինչու ռուսումը շարունակել է Երևանի գեղարվեստա-թատերական ինստիտուտի ռեժիսու-րական բաժնում (1968-1974թթ.): Այն ավարտել է աշխատանքի է անցել քա-ղաքի Ա. Մռավյանի անվան պետա-կան թատրոնում՝ որպես դերասան-ռեժիսոր: Ինչու գորակույզվել է Երևան տարի ծառայել է Խորհրդային Միության բանակում:

Այնուհետև աշխատանքի է հրա-վիրվել Ստեփանակերտի դրամատի-կական թատրոն (այն ժամանակ կրում էր Մաքսիմ Գորկու անունը): Այստեղ է, որ 76-ին բեմադրել է Վիկտոր Ռոզովի «Երջանկության որոնումները»: Սրան հաջորդել են 2. Դիկենսի «Դավիթ Կո-պերֆիլդ» (1977), Մ. Գորկու «Քաղթե-նիներ» (1978), Ա. Պասկալյանի «Գնա մեռել, արի սիրեն», Ա. Օստրովսկու «Անմեղ մեղավորներ», Ալ. Շիրվան-զադեի «Զար ոգին» ներկայացումնե-րը:

Այս թվարկումը երկար կարելի է շարունակել, բանզի բեմ հանած գոր-ծերի թիվը հասնում է մի քանի տաս-նյակի: Այս ամենը, բնական է, անուն ու ծանաչում է բերել նրան, հարգանք ու պատիվ: Ու ամենևին էլ զարմանալի չէ, որ նրան գիտեն ոչ միայն Արցա-խում, այլև մայր Հայաստանում ու Սփյուռքում:

Եթե սրան հավելենք, որ արվեստի վաստակավոր գործիչ է (1982թ.), ԼՂԳ կառավարության Եղիշի անվան մր-ցանակի կրկնակի դափնեկիր (1977, 2001), հանրապետության ժողովրդա-կան արտիստ, «Վաչագան Բարե-պաշտ» մեդալ ունի, տարբեր փառա-տոներում շահած դիպլոմներ, մրցա-նակներ, բազում պատվոգրեր, պատ-կերը, կարծում են, պարզ ու ամբողջա-կան կլինի:

Թատրոնից դուրս նրա համար հե-տաքրքիր ու հրապուրիչ ոչինչ չկա: Մեծ աշխարհը նա մեծ ու փոքր բեմե-րի վրա է տեսնում, կյանքի իմաստը, գեղեցկությունը՝ համդիսատեսին հուզումը պատճառող ներկայացման մեջ: Ու կարելի է ասել, որ հոգեպես հանգիստ է առնում, ոգևորվում ազգա-յին մշակույթին կարելիվայն չափ օգտակար լինելու զգացումով: Իր ներկայությամբ միշտ էլ օգտակար է եղել մեր մշակույթին՝ ընդհանրապես և Շուշիի թատրոնին՝ մասնավորա-պես: Եթե կուզեք ճիշտն իմանալ՝ հի-մնալուրջ քաղաքի այսօրվա թատրոնի ձեռքբերումները հիմնականում կապ-ված են նրա անվան, դժվարություննե-րով, ուրախության պահերով ու հու-սահատական ապրումներով լի գոր-

ծուներության հետ, որը նա այստեղ սկսվեց 2007-ից, երբ քաղաքի Խ. Աբո-վյանի անվան դպրոցի անշուք շեն-քում բեմ հանվեց «Գարուն» գրական-գեղարվեստական ներկայացումը: Հուզումները հազիվ զսպելով՝ ներկայացրեց նորից ու նորից իհարձում ու մտերմիկ գրույցի էին բռնվել մեր պոեզիայի մեծերի՝ Ավ. Իսահակյանի, Հովհ. Թումանյանի, Հովհ. Շիրազի, Ա. Կապուտիկյանի, Յ. Սահյանի և մյուս-ների հետ: Անցել են ամիսներ, ու բեմ է բարձրացել «Շուշուն ու կատուն» (ըստ Ազատ Շահինյանի), որին հաջորդել են Վ. Սարգսյանի «Դեռ», ո՞վ կա այդ-տեղ» դրաման, Գևորգ Սարգսյանի «Կաս կանանց» կոմեդիան ու հետո՝ այլ գործեր:

Թատերախումբը հյուրախաղերով բազմիցս հանդես է եկել Շուշիի շրջա-նում, հանրապետության քաղաքնե-րում ու գյուղերում, Ստեփանակեր-տում, ինչպես նաև Երևանում, Էջ-միածնում, Բերձորում, Գորիսում, Կա-պանում, Արմավիրում: Խմբի անդամ-ներին մի առանձին սիրով ու ջերմու-թյամբ են ընդունել Գյումրիում՝ անվա-նի ռեժիսորի սրտին այնքան մտա ու հարազատ քաղաքում, որտեղ խաղա-ցել են «Շուշուն ու կատուն» (տիկնիկա-յին թատրոն) և Պ. Սևակի «Եռագույն պատարագը» (Վ. Աճեմյանի անվան դրամատիկական թատրոն):

Ի դեպ՝ բեմադրության պարագա-յում Լ. Յարոսլավցյանը ժամային տարբերություններ չի ճանաչում: Հա-մաձայնե՞ք՝ բոլորին չէ տրված այս շնորհը: Մի բան էլ, թատրոնը նրա աչ-քում մեծ կամ փոքր շենք չէ ու ոչ էլ՝ սովորական տարածք:

– Թատրոնի ասելով,- անկեղծանում է նա,- ես հասկանում եմ կենդանի օրգանիզմ, որը խնամքի ու հոգատա-րության կարիք է զգում: Ասել է թե՛ ուշադրությունը մշակույթի այդ մեծ օ-ջակի նկատմամբ անպակաս պիտի լինի: Եվ հողմիկ, և՛ իշխանավորի կողմից: Ընդհանուր առմամբ, ես գոհ եմ մեր պետական այրերի, մշակույթի ոլորտի պատասխանատուների (ա-ռանձնապես՝ նախարար Նարինե Աղաբալայանի) մտեցումից ու վերա-բերմունքից, բայց ցավով պիտի նշեմ, որ հիմա չկա զգացվում այն կարող, որ առաջներում ինքնից հեռու երևում էր մեր քաղաքներում ու գյուղերում: Մարդիկ մի տեսակ սառել, անտարբեր են դարձել ու հոգևոր այդ տաճարի մո-տով անցնելիս կանգ չեն առնում, քայլվածքը չեն փոխում: Եկեք թաքց-նենք, հիմա շատ-շատերը (այդ թվում՝ իրենց մտավորական համարող որոշ մարդիկ) չեն ստանում, քան մի լավ ներկայացումից, մի հիմնալի գրքից, ազգային երգ ու պարից: Սա է, որ լրջորեն պիտի մտախոհի մեր մե-ծավորներին ու դերասաններին, բոլոր-ին:

Ահա ինչ է գրել լուսահոգի Մ. Խանդամիրյանի թոռնուհին 2010-ի հունիսի 27-ին իր բացիկ-նամակում. «Լեոնիդ ջան, ես գլուխ եմ խոնար-հում Ձեր տաղանդի առաջ: Չնայած բազում դժվարություններին, Դուք միշտ բարձունքի վրա եք պահել մեր արվեստը, հատկապես իմ պապի՝ Մկրտիչ հանդամիրյանի անունը կրող թատրոնը:

Միտի՞ Նիմել: Այս տողերի հեղինակը Հայաստա-

նի Հանրապետության գիտություննե-րի ազգային ակադեմիայի աշխատա-կից է, հայրենասեր մի հայուհի, որի համար ազգային ամեն ինչ է՝ ուրա-խություն, հարստություն, սրբություն: Ու հենց այս սրբությանն է ծառայում Լեոնիդը: 1976-ից: Շուրջ 40 տարի: Ա-սել կուզի՞ թատերական աշխարհում իր դերն ունի, իր ուրույն տեղը, տեսա-նելի, ուսանելի իր ձեռագիրը, նաև՝ իր ամելիքը:

– Օրեր առաջ,- անթաքույց հպար-տությամբ պատմում է նա,- Ստեփա-նակերտում մենք ներկայացրինք մշա-նավոր մանկագիր Սուրեն Մուրադյա-նի «Ծպտված Ձմեռ պապն ու Ձյունա-նուշը»: Մենք վերստին ականատես եղանք մեր մանուկների, պատանի հանդիսատեսի հրձվանքին ու անափ ուրախությանը:

Ինչու սրան եմք ձգտում, հենց սա է մեր նպատակը: Ձեռք բերածին, ունե-ցածին նոր տարում մի բան ավելաց-նել՝ սա է մեր երազանքը,- ավարտում է նա իր խոսքը:

Կհաջողվի՞, կկարողանա՞ն՝ հարց-նում են ինքս ինձ և անվերապահորեն ու համարձակ այդ,՝ ասում՝ նկատի ունենալով թատրոնի ներուժը, կոլեկ-տիվի հույս ներշնչող խաղն ու ակն-հայտ ձիրքը, այրող կիրքը մեծ արվես-տի հանդեպ: Նաև՝ Շուշիի շրջվարչա-կազմի ղեկավար Վլադիմիր Կասյանի սքանչլությունն ու հոգածությունը: Միս փայլուն ապացույցը Ռոբերտ Եսայանի «Հարության ժամանակը» բանաստեղծությունների հիման վրա վերջերս կատարված բեմականա-ցումն է:

Դա, իրոք, ներկայացում չէր, այլ ի վերուստ արված շնորհքով օժտված երիտասարդ ուժերի՝ Աշխեն Հարու-թյունյանի, Սվետա Առտաճյանի, Անի Կասյանյանի, Նվեր Դարբեկյանի, Արմեն Հայրապետյանի, Գայանե Առու-շանյանի դերասանական վարպետու-թյան անօրինակ շողարձակում, աս-մունքելու, պարելու, նկարելու մեծ ու-նակության յուրահատուկ ցուցադրում ու բացահայտում: Ի դեպ՝ այս շնորհա-լիներից շատերն ուսանում են Երևանի կինոյի ու թատրոնի պետական ինս-տիտուտի Շուշիի դերասանական կուրսում: Ուրախալի է, որ հարյուրա-վոր ուսանողների, ուսուցիչների, գրի ու գրչի մշակների, գրողների, լրագրողների հետ ներկայացումը դի-տելու էին եկել նաև ԼՂԳ կրթության և գիտության ու մշակույթի և երիտա-սարության հարցերի նախարարներ Ս. Ասրյանը, Ն. Աղաբալայանը, բանաս-տեղծներ Վ. Հակոբյանը, Մ. Խանդամիր և ուրիշներ: Ժպիտ և բավարարվածու-թյուն կար օրվա հերոսների, դասիլ-ժում մատածների դեմքերին: Գոհ էին բոլորը, ևս առավել՝ թատրոնի ռեժի-սոր Լ. Յարոսլավցյանը, որը, լինելով մեր բեմարվեստի մեծերի՝ Կարո Ալ-վարյանի, Մարգո Բալասանյանի, Ժամնա Գալստյանի և մյուսների ար-ժանի հետնորդը, այսօր էլ սիրով ու նվիրումով ծառայում է հիմնավորց Շուշիի Մ. Խանդամիրյանի անվան թատրոնին, որն օր օրի տարածում է իր փառքն ու համբավը, որում, ան-շուշտ, անգնահատելի է նրա ավանդը:

Միջայլ ԲԱՆԱՆ Թոշակառու ուսուցիչ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԿՍՎԱԾ Է ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾՆԵԹԱՑԸ

ԼՂԳ գնահատման և թեստավորման կենտրոնի կողմից սույն թվականի փետրվարի 1-ից սկսված է միջնակարգ հանրակրթական օրագիր իրակա-նացնող հաստատությունների (անկախ կազմակերպարական ձևից) շրջանավարտների «Հայոց լեզու և հայ գրականություն», «Մաթեմատիկա», «Հայոց պատմություն», «Ընդհանուր պատմություն», «Քիմիա», «Ֆիզիկա», «Աշխարհագրություն», «Կենսաբանություն», «Օտար լեզու» (ռուսաց լեզու, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն), «Ստեղծագործական աշխատանք», «Նախնական զինվորական պատրաստություն» առարկաներից միասնա-կան և կենտրոնացված (2013թ. բուհերի ընդունելության), պետական ավար-տական քննությունների կազմակերպման գործընթացը:

Միասնական և կենտրոնացված քննություններին մասնակցելու համար շրջանավարտը (դիմորդը) պետք է լրացնի դիմում-հայտ:

2012-2013 ուստարվա շրջանավարտները դիմում-հայտը լրացնում են իրենց ուսումնական հաստատություններում, նախորդ տարիների շրջանա-վարտները, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների շրջանավարտները՝ ԼՂԳ գնահատման և թեստավորման կենտրոնում (հասցեն՝ ք. Ստեփանա-կերտ, Մարտունի 97):

Միասնական և կենտրոնացված քննություններին մասնակցելու համար անհրաժեշտ է՝

- 3x4 չափի լուսանկար,
  - անծը հաստատող փաստաթղթի պատճենը,
  - «Արցախբանկ» ՓԲԸ «Վերածնունդ» մասնաճյուղում Գնահատման և թեստավորման կենտրոնի 22311 008416500 հաշվի համարին յուրաքանչ-յուր քննությանը մասնակցելու համար փոխանցել 1500 (հազար հինգ հար-յուր) դրամ և վճարի անդորրագիր կցել դիմում-հայտին:
- Միասնական և կենտրոնացված քննությունների վճարից ազատվում են հետևյալ դիմորդները՝
- 1-ին և 2-րդ խմբերի, ինչպես նաև հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող անձինք,
  - ՀՀ և ԼՂԳ պաշտպանության ժամանակ զոհված զինծառայողների երե-խաները,
  - առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող մինչև 23 տարեկան անձինք:

Վերոգրյալ խմբերին պատկանող անձինք դիմում-հայտին կցում են համապատասխան փաստաթղթերի պատճենները: 12-րդ դասարանների աշակերտները պետական ավարտական քննու-թյուններին հայտագրվում են իրենց ուսումնական հաստատություններում:

Դիմում-հայտերի ընդունման և պետական ավարտական քննություննե-րի հայտագրման վերջին ժամկետը ս. թ. մարտի 1-6 է: Լրացուցիչ տեղեկությունների համար գանգել 97- 40 -51 հեռախոսա-համարով:

«Գնահատման և թեստավորման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն

ՎԵՆՈՎՈՒ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Ստեփանակերտի արհեստագործական ուսումնարանը հայտարարում է կարճաժամկետ տնտեսավարկային վճարովի դասընթացների կազմակերպում հետևյալ մասնագիտություններով:

№	Ծածկագիր	Մասնագիտության անվանումը	Ուսման ժամկետը	Ուսման վճարը (դրամ)
1.	2901	Վերամշակման տրանսպորտային միջոցների տեխնիկական շահագործում (կրթական)	2 ամիս	63 հազ.
2.	1207	Եռալուսնի աշխատանքների տեխնոլոգիա (զագառակարգ, էլեկտրառազմակարգ)	2 ամիս	40 հազ.
3.	1008	Ջերմաէներգետիկ սարքավորումների և ջերմային ցանցերի տեխնիկական շահագործում (կաբալաստան օպերատոր)	1,5 ամիս	13 հազ.
4.	2905	Ճանապարհաշինարարական և բարելավման աշխատանքների տեխնիկական ապահովում (բուրգողերակար, էքսպլատատորակար, տրավերողակար)	2 ամիս	56 հազ.
5.	1002	Էլեկտրասարքավորումների տեխնիկական շահագործում	2 ամիս	40 հազ.

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել ք. Ստեփանակերտ, Բաղ-րամյան 27 հասցեով կամ գանգահարել հետևյալ հեռախոսահամարներով՝ աշխ. 94-61-18 բջջ. (097) 250-400:

ԼՈՒՍԱՐԱՐ հանրագիր՝ ՍԿԵՏԱՆԱ ԽԱՉՈՍՏՅԱՆ

Հիմնադիր՝ «Լուսարար» ՓԲԸ

Ստեփանակերտ, Հ. Թումանյան փ. 111, 94-38-99, E-mail: gorctert@mail.ru

«Հ» ԿՊՄՊԻ ՌԷՍՍԻՍՏԻՆԻՆԻ ՍԿԵՏԱՆԱ ԽԱՉՈՍՏՅԱՆ

Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՍՊԸ-ում: Տպագրական՝ 3171: Ծավալը՝ տպագրական 4 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 09.02.2013թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: